Էջմիածին

ՌՆԷ
ԺԵ ՏԱՐԻ
Յունուար

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ա

1958

ՊԱ-1918
159

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Կոստանդնուպոլսի Սուրբ Խաչ դպրեվանքում ուսանողության 3

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— «Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» . . . 6

Ամանորի առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի և պետական տեղական հավատությունների միջև փոխանակված ողջույնի հեռագրերը . 9

Ամանորի և Սուրբ Մեսրոպյան տոների առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի և Ֆրանսիայի եկեղեցիների պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերը ու գրությունները 12

Ամանորի և Սուրբ Մեսրոպյան տոների առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի և Եվրոպական Աթոռների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերը ու գրությունները 17

Սան-Ֆրանցիսկոյի Հայոց Ս. Հովհաննես եկեղեցու օծման և Վիեննայի հայկական մատուռի հիմնարկության 45-ամյակի կապակցությամբ փոխանակված հեռագրերը 19

Մեկ է Հայաստանյայց Եկեղեցին թե՛ դավանաբանով, թե՛ Եվրոպական 21

«Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս» 23

Հայրապետական հանդիսավոր պատարագ և քարոզ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում Քրիստոսի հրաշափառ և Սուրբ Մեսրոպյան տոնի առթիվ 25

Պաշտոնական ընդունելություն նոր տարվա առթիվ ի պատիվ Վեհափառ Հայրապետի 30

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 31

Նոր տարին Հոգևոր Ճեմարանում 33

ԱՍԱՏՈՒՐ ԳՅՈՒՋԵԼՅԱՆ— Կալկաթայի հայոց Սուրբ Նազարեթ եկեղեցու 250-ամյակի տոնակատարությունը 36

Եթովպական գաղութը 39

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ե. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ— Հռոմի վանքի արձանագրությունների առթիվ 41

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. Դ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ— Հերմեսի փիլիսոփայական աշխատության ճիշտ հայերեն թարգմանությունը 46

ԹԱԳԵՈՍ ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ— Զվարթնոցի շուրջը 54

Դ. ՀԱԿՈԲՅԱՆ— Ներսես Շնորհալին և իր ժամանակաշրջանը . . 59

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ. ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1968 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՉԳԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԴՊՐԵՎԱՆՈՒՑ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ

ՎԱՂԳԷՆ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՂԱՂԱՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՆԱՄՏԻՆՆ ԱՔԳԻՍ ԾՊԻՆՈՎՈՒԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆՈՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՌՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՉԳԱՅՆԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱՔՈՒԻՆՅՈՑ ԱՑՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՑՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՊՐԻՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՏԵՆՉ ՍԱՆՈՒՑ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԴՊՐԵՎԱՆՈՒՑ ՈՐ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՀԱՐԱՉԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԲՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Հայրական սիրո հույզերով լեցուն, գրի առիք սույն օրհնության բառերը, որ Ձեզի կհասնի ամենայն հայոց լույս հավատքի աղբյուր, Սրբություն Սրբոց էջմիածնեն:

Լուսո խորան էջմիածինը ասավածակառույց մեր Մայր Տաճարն է և լուսավորչահիմն մեր Մայր Աթոռը, որ հոգևոր լույս է կյանք կբաշխե Հայ Ազգի բոլոր զավակներուն, ուր որ ալ գտնվին անոնք աշխարհի ճամբաներուն վրա:

Հեռու է Ս. էջմիածինը Ձեզմե, սակայն Մենք վստահ ենք, թե Դուք զայն կտեսնեք ոչ միայն նկարներուն վրա իբրև նյութեղեն կառուցված, այլ մանավանդ կտեսնեք զայն Ձեր հավատավոր հոգիներուն մեջ, իբրև անեղծական, նյութեն առաջ և նյութեն վեր՝ ոգեղեն կառույց մը սմանչելի և անեղծելի:

Փրկչի Իշման Ս. Տաճարին կրնամ մերձենալ աղոթքի երկնաձեմ արահետներով, ու հոգիով միայն կրնամ զգալ անոր ճշմարտությունը, անոր հավիտենականությունը և անոր քաղցր զորությունը, կի նա է «ԱԹՈՌ ԱՍՏՈՒԱԾԱԿԵՐՏ, ՍՔԱՆՉԵԼԻ, ՀՐԵՂԷՆ», և «ՄԵՐՈՅ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԼՈՒՍԱՒՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ» (Մ. Խորենացի):

Մենք ճույժ ուրախ ենք, որ Ձեր Պարեվանքին մեջ Դուք կդաստիարակվիք հոգևոր ճշմարտություններու լույսին տակ, մեր Տիրոջ Հիսուսի Քրիստոսի Ս. Ավետարանի շուքով, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցիի հովանիին ներքև, և Ձեր ու համայն Թուրքիոյ հայոց Հովվապետ՝ Ամենապատիվ Տ. Դարեգին Սրբազան Պատրիարքի իմաստուն, գորովալի ու ոգեշունչ առաջնորդությամբ:

Սիրելի՛ զավակներ Մեր, մի՛ մոռնաք, որ Ինքը Քրիստոս է Ձեր իրավ «ՃԱՆԱՊԱՐՀը, ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆը ԵՎ ԿՅԱՆՔը», և Քրիստոսով է, որ պիտի կարողանաք դառնալ Աստուծո որդիներ, այսինքն կատարյալ մարդիկ՝ բարի, առաքինի, շինարար ու մարդասեր, և Քրիստոսով է, որ պիտի գտնեք Ձեր կյանքին իմաստը, Ձեր աշխատանքին նպատակը և Ձեր հոգիին խաղաղություն ու փրկությունը:

Երկյուղածությամբ սիրեցեք զԱստված, որպեսզի սիրեք կյանքը և Ձեր նմանները, բոլորը անխտիր, զի մի է Աստված և եղբայրներ են Աստուծո բոլոր զավակները:

ԶԱստված սիրելով՝ մարդիկ կսորվին զիրար սիրել: Սերը առ Աստված աղբյուրն է մարդասիրության: «ՍԿԻԶԲՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ՝ ԵՐԿԻՐՂ ՏԵԱՌՆ, ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՐԲՈՑ՝ ՀԱՆՃԱՐ» (Առակք Թ 10):

Ուրեմն, հարազատնե՛ր Մեր, մարմնով աճեցե՛ք, հոգիով զորացե՛ք և անձանձրույթ աշխատեցե՛ք: Գիտությամբ լուսավորեցե՛ք Ձեր միտքը, և սիրեցե՛ք ճշմարտությունը, գրականությամբ և արվեստներով մշակեցե՛ք Ձեր հոգին և սիրեցե՛ք գեղեցիկը, սուրբգրական ընթերցումով, մաքուր իղձերով և առաքինի գործերով շերմացուցե՛ք, ազնվացուցե՛ք Ձեր սիրտն ու Ձեր կամքը, և սիրեցե՛ք Բարին: Ու այս բոլորին վեր, ու այս բոլոր առաքինությունները մթացնող, զանազան ոգեշնչող և անոնց կյանք տվող՝ ներքին սուրբ հավատքին կրակը վա՛ռ պահեցեք միշտ Ձեր հոգիներուն մեջ, զի հավատքին լույսն է, որ Ձեզ պիտի տանի դեպի ճանաչումը և պաշտամունքը ճշմարիտին, Գեղեցիկին ու Բարիին:

Արդ, «ՃՇՄԱՐՏԵԱԼՔ ՍԻՐՈՎ», «ՆՈՐՈԳԵՑԱՐՈՒՔ Ի ՆՈՐՈԳՈՒԹԻՆ ՄՏԱՑ ՁԵՐՈՑ, ԱՌ Ի ՔՆՆԵԼ ՁԵՐ ԶԼԱԻՆ, ԵՒ ԵԹԷ ԶԻՆՁ ԵՆ ԿԱՄՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ՝ ԲԱՐԻՆ ԵՒ ՀԱՃՈՅՆ ԵՒ ԿԱՏԱՐԵԱԼՆ» (Հռոմ. ԺԲ 2), «ՄԻՆՉԵՒ ՀԱՍՑՈՒՔ ԱՄԵՆԵՔԵԱՆ Ի ՄԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՆ ՀԱՒԱՏՈՑ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՈՐԴԻՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ, ՅԱՅՐ ԿԱՏԱՐԵԱԼ Ի ՁԱՓ ՀԱՍԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ» (Եփես. Դ 13):

Իսկ տարիներ հետո, երբ Ձեզմե ոմանք, հետևելով հոգևոր կոչումի մը, եվրիվին մեր Ս. Եկեղեցիի ծառայության, այդ շատ պիտի ուրախացնե Մեզ, և սիրով գեղուն պիտի ողջունենք ու պիտի օրհնենք զՁեզ՝ իբրև հոգևոր մշակներ Տիրոջ այգիին մեջ, և իբրև բարի հովիվներ հայ հավատացյալ ժողովուրդի:

Մենք կմաղթենք, որ այն բարի սերմերը, որ Ձեր ալեզարդ Պատրիարք Հայրիկը, Ձեր հոգեշնորհ տեսուչը և Ձեր հարգարժան ուսուցիչները կսերմանեն Ձեր հոգիներուն մեջ, խոր արմատներ արձակեն, աճին ու ծաղկին և բաղցր պտուղներ տան՝ մեկի տեղ երեսուն, մեկի տեղ վաթսուն, մեկի տեղ հարյուր: Եվ Դուք դառնաք հավատավոր ու լուսամիտ ժիր երիտասարդներ, բարի զավակները Ձեր պատվական ծնողաց, միշտ պատրաստ՝ օգտակար ըլլալու Ձեր շրջապատին, Ձեր Ս. Եկեղեցիին ու Ազգին, և օրինապահ ու շինարար քաղաքացիները Ձեր երկրին:

Փրկչի Իշման Ս. Սեղանի առաջ Մենք բազկատարած կաղոթենք Ձեզ համար, Ձեր կյանքին համար, Ձեր արևոտ ապագային և Ձեր երջանկության

համար: Մեր Ս. եկեղեցին և Ազգը՝ Ձեզմով կուրախանան, Ձեզմով կհուսան և Ձեզմով տեսիլներ կտեսնեն՝ գալիք օրերու պայծառ հորիզոնին վրա խաղաղ:

Ս. Լուսավորչի հավատքի ամրոց Սրբազնասուրբ Էջմիածնեն ողջո՞ւյն և օրհնությո՞ւն՝ Կոստանդնուպոլսո Հայոց Պատրիարքության Ս. Խաչ Դպրեվանքին, պաշտոնեության և ուսանողության:

Պանպանիչը և Հույսը հավատացելոց՝ Տերը և Փրկիչը Հիսուս Քրիստոս բոլոր Ձեզ բոլորդ պահն պահպանե անփոռձ ու անվտանգ, առողջ ու անսասան, սիրով միաբան, բարի և արևոտ օրերով անհատնում, Ձեր սուրբ գործոց անքառամ պսակով զարդարուն:

Երկնային շնորհք և խաղաղություն ընդ Ձեզ, ամեն:

ԳԱԲՐԱԳՈՒԵՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿՍՊՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 18-ն դեկտեմբերի
1957 Փրկչական ամի,
և ի տուամարիս Հայոց ՌՆԷ,
ի վանս Սրբոյ Էջմիածնի:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«ՅԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՃՈՒԹԻՒՆ»

Նշանաւոր սփոփարար ու ցնծագին ճնշում են նորից Ս. Ծննդյան գիշերվա ավետավոր զանգերը, և բարի կամքի տեր միլիոնավոր հավատացյալներ, երկյուղածորեն, իրենց հայվածքը սևեռում են Բեթղեհեմի անջուրմ մսուրին, Ս. Ծննդյան հոգեպարար երգը իրենց շրթների վրա.

«ՀՈՐՀՈՐԴ ՄԵԾ ԵՒ ՍՔԱՆՉԵԼԻ
ՈՐ ՅԱՅՍՄ ԱՒՈՒՐ ՅԱՅՏՆԵՑԱՒ...
ՈՐԴԻՔ ՄԱՐԴԿԱՆ ՕՐՀՆԵՑԷՔ,
ՁԻ ՎԱՍՆ ՄԵՐ ՄԱՐՄՆԱՑԱՒ...»:

Քսան ձիգ դարեր են անցել Քրիստոսի ծննդյան պատմական այն գիշերվանից, երբ հրեշտակները, բեթղեհեմցի հավատավոր և բարի հովիվների միջոցով, մեղքի, խավարի, տգիտության և հուսահատության մեջ տվայտող մարդկությանը ավետեցին Ս. Ծննդյան պատգամը՝ «ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ ԱՍՏՈՒԾՈՅ, ԵՒ ՅԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՃՈՒԹԻՒՆ» (Ղուկ. Բ 14—15):

Քրիստոսի ծննդից քսան դարեր հետո էլ, այսօր մարդկությունը, ճիշ Աբելիի իմաստունների նման, Բեթղեհեմի խորհրդավոր աստվածային աստղին է հետևում՝ գտնելու համար իր հոգու խաղաղությունը:

Ս. Ծննդյան պատգամները այսօր էլ չեն կորցրել իրենց նշանակությունը, հոգեկան, բարոյական արժեքը՝ աշխարհի և մարդկության համար: «ԱՒԵՏԱՐԱՆԵՄ ՁԵԶ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ՄԵԾ, ՈՐ ԵՂԻՑԻ ԱՄԵՆԱՅՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՆ, ՁԻ ՈՆԱՒ ՁԵԶ ԱՅՍՕՐ ՓՐԿԻՑ» (Ղուկ. Բ 10—11):

Ահա թե ինչու երկրագնդի բոլոր ժողովուրդների համար, ինքնիր մեջ անհամերաշխ և անխաղաղ աշխարհում, սրտագին հնչում է Բեթղեհեմի սուրբ Այրից՝ երկրի վրա խաղաղության և ժողովուրդների միջև համերաշխության սրբազան պատգամը:

Այսօր մանավանդ, երբ երկրի խաղաղության և ազգերի համերաշխության վրա նորից իր մռայլ և արյունոտ ձեռքն է ուզում երկարել պատերազմների նոր սարսափը, Ս. Ծննդյան գիշերվա նվիրական պատգամները ավելի ուժգին, ավելի այժմեական են հնչում երկրագնդի քրիստոնյա և ոչ քրիստոնյա ժողովուրդների համար:

Խաղաղության գործը, ազգերի և ժողովուրդների համագործակցության սուրբ գաղափարը՝ արդար և նվիրական գործ է, որովհետև այն աստվածային գործ է: Պատերազմը ոճիր է Աստուծո դեմ, երկնքի դեմ: Ահա թե ինչու, այսօր մանավանդ, մարդկությունը կարքն ունի քրիստոնեական խաղաղության փրկարար լույսին, փարատելու համար իր մտքից ու հոգուց՝ տագնապն ու վախը, նոր պատերազմի արհավիրքն ու մահվան սպառնալիքը: Եվ ուրախությամբ պետք է արձանագրել այստեղ, որ այսօր, աշխարհի բոլոր խաղաղասեր ժողովուրդները, հարավի ջերմ արևի տակ թե հյուսիսի ցրտաշունչ բևեռում, արևելքում թե արևմուտքում, և նրանց հետ բարի կամքի տեր միլիոնավոր մարդիկ, կրոնական տարբեր համոզմունքների տեր ազնիվ և բարի հոգևորականներ, ընտանիքի հայրեր և մայրեր, մշակույթի, գիտության և արվեստի մշակներ, միավորել են իրենց ձանքերը՝ կյանքում իրագործելու համար քրիստոնեական խաղաղությունը:

Հերիք չէ միայն աղոթել խաղաղության համար: Քիչ է խաղաղություն ցանկանալը: Խաղաղությունը պետք է նվաճել քրիստոնեական արիությամբ, միաձայնությամբ, աշխատանքով և պայքարով:

Առաջավոր մարդկությունը, մի անգամ ևս, ստակար խանդաղատանքով տոնում է ցնծությամբ նիշատակը Քրիստոսի Ս. Ծննդյան մեծ տոնին, և երախտագիտությամբ խոնարհվում է ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆԻ համբարելի խանձարուրի առաջ, որովհետև մարդացյալ Աստվածը, «որ վասն մեր մարմնացաւ», մարդկության ծոցում նայտնվեց նաև որպես խաղաղության Աստված:

Քրիստոսի ծննդյան կամ աստվածապաշտության խորհրդի խտացումն է Պողոս առաքյալի հետևյալ խոսքը. «ՆԱ ՈՐ ԵՐԵՎԱՑ ՄԱՐՄՆՈՎ, ԱՐԴԱՐԱՑԱՎ ՀՈԳՈՎ, ՆՐԱՆ, ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ ՏԵՍԱՆ, ԱՋԳԵՐԻՆ ՔԱՐՈԶՎԵՑ, ԱՇԽԱՐՀԸ ՆՐԱՆ ՀԱՎԱՏԱՑ, ԵՎ ՓԱՌՔՈՎ ՎԵՐԱՑԱՎ» (Ա Տիմ. Ա. 6):

Աստվածպաշտության այդ խորհուրդը և նրանից բխող մնայուն խաղաղությունը հույսն է մարդկության: Այսօր քրիստոնյա և ոչ քրիստոնյա աշխարհը կարիքն ունի այդ մնայուն խաղաղության: Խաղաղությունը հանապազօրյա հացի և ջրի չափ անհրաժեշտ է աշխարհին, որովհետև «ՊՏՈՒՂ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ ՍԵՐՄԱՆԻ ՍՊՆՈՑԻԿ ՈՐ ԱՌՆԵՆ ՁԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ» (Յակ. Գ 18): Հավատավոր և աշխատավոր մարդկությունը, Քրիստոսի Ծննդյան այս պայծառ օրվա մեջ, նոր ամեն ինչ շնչում է, ապրում նոր և խաղաղարար կյանքով, չի ցանկանում Աստուծո անհատնում բարիքներով լիքը այս գեղեցիկ աշխարհը տեսնել վիրավոր սրտի, վշտի և արցունքի հովտի, և աստվածատուր խաղաղությունը խեղդված՝ նոր պատերազմների կրակի և թոհուբոհի մեջ:

Ահա այսպիսի արտագին զգացմունքներով և քրիստոնեական հավատով է դիմավորում նաև հայ ժողովուրդը իր սիրելի Փրկչի Ս. Ծննդյան տոնը, թե՛ Մայր Հայրենիքում և թե՛ Սփյուռքում:

Ամբողջ տասնվեց դար. ո՛չ սուրը, ո՛չ նուրը և ո՛չ էլ ժամանակը չեն կարողացել մարել մեր ժողովրդի սրտում քրիստոնեության ոգին և խաղաղության այդ կրակը:

Աշխարհում որպես ամենահին մշակույթ ունեցող ժողովուրդներից մեկը և որպես առաջին քրիստոնյա ժողովուրդը՝ հայ ժողովուրդը շատ բանկ է վճարել այդ խաղաղության համար: Մեր ժողովուրդը շատ վաղ հավատաց քրիստոնեության պատգամին: Մեր ժողովուրդը ծնունդն է Ավետարանի:

Քրիստոսի հավիտենական ծննդի մեջ հայ ժողովուրդը միշտ տեսել է իր հոգևոր և բարոյական ծնունդը: Հայ ժողովրդի ծնունդը աստվածային կամքի մեկ արտահայտությունն է: Ահա թե ինչու նա իր հոգու բովանդակ ջերմությամբ կապվել է Ավետարանի խաղաղության պատգամին և պայքարել է հանուն այդ խաղաղության իրացման: Նա՝ մեր ժողովուրդը անցյալում մի քիչ հող անգամ չի ունեցել իր վիրավոր գլուխը հանգչեցնելու համար: Մեր աշխատասեր և շինարար ժողովուրդը ցանել է արյուն-քրտինքով, և միշտ հնձել է արտասվելով: Խաղաղություն չի ունեցել, բայց նրա հոգում միշտ վառ է եղել խաղաղության երազը:

Մեր ժողովուրդը իր պատմության վերջին հարյուամյակին միայն կարողացավ ձեռք բերել իրական և մնայուն խաղաղություն: Նա իր կյանքի փորձով հասկացել է ուրեմն խաղաղության արժեքը, ուստի՝ կանգնել է խաղաղասեր ժողովուրդների մեջ:

«Մեր Ս. եկեղեցին և աբրոջ հայ ժողովուրդը,— պատգամում է Վենետիկ Հայրապետը Ս. Ծննդյան Իր բովանդակալից քարոզի մեջ,— կուզեն խաղաղ ապրել, որպեսզի շինեն ու ստեղծագործեն մեր մեծ Հայրենիքի և ամբողջ աշխարհի խաղաղասեր ու մարդասեր ազգերու կողքին»:

«Երանի՜ խաղաղարարաց. զի նոքա որդիք Աստուծո կոչեսցին»:

Նոր տարվա և Ս. Ծննդյան տոնի երջանիկ առիթով, «էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն Վենետիկ Հայրապետի, սրտագին շնորհավորում է բովանդակ հայության ամանորը և Ս. Ծնունդը, ՄԱՂԹԵՆՈՎ, որ նոր տարին իր խսնեով և Ս. Ծնունդը իր խորհրդով ողողեն և գոտեպնդեն հայ ժողովուրդը, մանավանդ Սփյուռքում ապրող մեր հարազատներին, որպեսզի նրանք կարողանան հաղթահարել Սփյուռքի հայ կյանքի հատուկ դժվարությունները, տագնապները, արիանան և գոտեպնդվեն Ավետարանի ոգով, քրիստոնեական կրոնի երջանկություններով և հոգեպես կազդուրված, շրջապատեն Հայ եկեղեցին, մեկտեղվեն նրա սուրբ կամարների տակ, որպեսզի «ապրին խաղաղ, սիրով միասին, մեր Ս. Եկեղեցվո օրենության ներքև, ապրին բարի. առատինի և ազգաշեն գործերով»:

ԵՐԱՆԻ՜ թե 1958 թվականը լիներ հայ ժողովրդի համար նշմարիտ խաղաղության. ազգային-եկեղեցական միասնականության և հոգևոր վերազարթոնքի մի բեղմնավոր և խոստումնալից տարի:

ԵՐԱՆԻ՜ թե 1958 թվականին, Քրիստոսի ծննդյան հոգեհարուց երջանիկ տոնի և աստվածահայտնության լույսի առաջ, հայվին ամենասկզբության բոլոր սառույցները և վերջ գտնեին Հայ եկեղեցու ծոցում, հայ ժո-

ղովրդի կյանքում, մեր կյանքը բունավորող. նդրայրն իր եղբոր դեմ լարող տխուր և խորը հեռանքները:

ԵՐԱՆԻ՝ թե 1958 թվականը լիներ բովանդակ հայության համար քրիստոնեական սկզբունքների և խաղաղության հաղթանակի տարի, ստեղծագործ և շինարար աշխատանքի տարի. համախմբված Մայր Աթոռ Ս. Էջմիածնի շուրջ, գոտեպնդված մեր Հայրենիքի պայծառ իրականությամբ և վառ ապագայով:

ԵՐԱՆԻ՝ թե 1958 թվականին բոլորի մեջ զարթներ ազգային ավելի վառ գիտակցություն՝ Հայ եկեղեցուն և հայ ժողովրդին ծառայելու անշահախնդիր ոգով, որպեսզի կարելի լիներ ստեղծագործել անձնական նեղ և հատվածական շահերը՝ հայ ժողովրդի և եկեղեցու հավաքական գերագույն շահերին:

«Գոնե եկեղեցվո կամարներուն տակ,— պատգամում է Վեհափառ Հայրապետը,—հոգևոր կյանքի շինության համբուն, մեկ կողմ դրեք ամեն կողմնակի նկատում կամ խմբակցական շահ: Սիրով ճմլեցե՛ք հայու սիրտը ձեր և հաղթահարեցե՛ք քենի ու ատելության դավաղիր ոգին: Սուրբ էջմիածնի լույս աթոռը ձեր սրտին մեջ առած, ի մի հավաքվեցե՛ք մեր Ս. եկեղեցվո հովանիին ներքև ու արդիլեցե՛ք ամեն պառակտում, ամեն բաժանում, ամեն ցրվում: Հավատքի սիրո կրակով վառված, ձեր քաղցր խոսքով պարտադրեցե՛ք բոլորին խաղաղության և սիրո ոգին միասնության և անբաժանելիության կանոնը ազգաշեն, եկեղեցվո սահմաններեն ներս. ի սեր Աստուծո և ի սեր Ազգի. և ի սեր ձեր բոլորիդ հարազատ Մայր Ս. Էջմիածնի: Ս. Էջմիածի՜ն, Ս. Էջմիածի՜ն, «Աթոռ աստուածանկերտ, սքանչելի, հրեղէն»:

Մեր Ազգին ու եկեղեցիին ուժը, Մեր Ազգին ու եկեղեցիին շանը, մեր Ազգին ու եկեղեցիին ապագան՝ մեր միությունն է, մեր ներքին սերը, մեր խաղաղությունը, մեր գործակցությունը Տիրոջ այգիին մեջ, Ս. Լուսավորչի Մայր Աթոռի փառքով լուսաշող»:

Այս նվիրական իղձով, այս սուրբ մաղթանքներով և Ս. Ծննդյան շնորհներով զեղուն, բանա՛նք դռները նոր ժամանակներու. շինե՛նք, ծաղկեցնե՛նք մեր Ս. եկեղեցին, շինե՛նք, ծաղկեցնե՛նք ու միջա պանծացնենք քրիստոնեության սյուն Ս. Էջմիածինը մեր»:

ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՎ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԾՈՒՐԲ ՕԾՈՒՐՅՈՒՆ Տ. Տ. Վ. ԱԶԳԵՆ Ա-Ի ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՆՈՐԻՆ ԳԵՐԱՋԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՊՐ. ԲՈՒԼԳԱՆԻՆԻՆ

ՄՈՍԿՎԱ

Հայաստանյայց Առաքելական եկեղեցու և անձամբ Մեր անունից ջերմորեն ողջունում ենք Ձեզ 1958 թվականի նոր տարվա առթիվ: Ցանկանում ենք Ձեզ Գերազանցության հաջողություն և երկար տարիների բեղմնավոր գործունեություն՝ ի բարօրություն մեր երկրի և ի խաղաղություն ամբողջ աշխարհի: Թող է՛լ ավելի ծաղկի և հզորանա մեր մեծ, ազնվատենչ Հայրենիքը՝ նորանոր հաջողություններով: Ամենակարող Աստված բոլոր օրհնի և պահպանի խաղաղության ու բարեկեցության մեջ՝ սովետական ժողովուրդների եղբայրական մեծ ընտանիքը:

Վ. ԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊՐ. ՔՈՋԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հանեցեք ընդունել մեր ջերմագին շնորհավորանքները նոր տարվա առթիվ: Ի սրտե մաղթում ենք Ձեզ և մեր Կառավարության բոլոր անդամներին հաջողություն և բեղմնավոր գործունեություն: Հանապազ աղոթող ենք առ Աստված՝ Մայր Հայրենիքի ու մեր հարազատ ժողովրդի բարօրության և նորանոր հաջողությունների համար ընդհանուր խաղաղության պայմաններում:

Ողջունիվ և օրհնությամբ՝
Վ. ԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՎՐԱՑԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՊՐ. ԶՈՒԲԻՆԻՋԵԻՆ (ԹԲԻԼԻՍԻ), ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՊՐ. ԻԲՐԱՀԻՄՈՎԻՆ (ԲԱՔՈՒ):

Շնորհավորում ենք Ձեր նոր տարին: Ցանկանում ենք Ձեզ հաջողություն և բեղմնավոր գործունեություն բոլոր ասպարեզներում, իսկ եղբայրական Ձեր ժողովրդին՝ բարօրություն ու նոր հաջողություններ գալիք նոր տարում, ընդհանուր խաղաղության պայմաններում:

Վ. ԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐ. ՊՈՒՋԻՆԻՆ

ՄՈՍԿՎԱ

Նոր տարվա առթիվ ընդունեցեք Մեր անկեղծ շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները՝ Ձեր հաջողության և գործոց հաջողության համար:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐ. ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Ի սրտե շնորհավորում ենք Ձեր և ղեկավարության բոլոր անդամների նոր տարին ջերմագին բարեմաղթություններով: Թող նոր տարին բերի մեր երկրին տևական խաղաղություն ու նոր հաջողություններ՝ ի բարօրություն հայ ժողովրդի և սովետական բոլոր ժողովուրդների:

Ողջունիվ և օրհնությամբ՝
ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՎՐԱՑԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐ ՊՐ. ՇԱԼՈՒՏԱՇՎԻԼՈՒՆ (*ԹԲԻԼԻՍԻ*),
ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐ ՊՐ. ՄԱՄԵԴՈՎԻՆ (*ԲԱՔՈՒ*),
ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԾԿՈՄԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐ ՊՐ. ԲԱՅԿՈՎԻՆ (*ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ*):

Նոր տարվա առթիվ ընդունեցեք Մեր անկեղծ շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները՝ Ձեր հաջողության և գործոց հաջողության համար:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Նոր տարվա առթիվ շնորհավորանքների, մեր Հայրենիքի հետագա բարգավաճման, ժողովրդի բարեկեցության և խաղաղության Ձեր ջերմ բարեմաղթությունների առթիվ հայտնում ենք մեր շնորհակալությունը:

Հանձնեք ընդունել մեր ջերմ շնորհավորությունները և Ձեր քաջառողջության ու հայրենասիրական գործունեության համար մեր լավագույն ցանկությունները:

ՔՈՉԻՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

Շնորհակալություն Ձեր նոր տարվա շնորհավորական հեռագրի համար: Իմ կողմից շնորհավորում եմ Ձեր նոր տարին և ցանկանում առողջություն և բարեկեցություն:

ՊՈՒԴԻՆ
ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ, ԱՌԸՆԹԵՐ
ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՄՈՍԿՎԱ

Հայ Եկեղեցու գործերի խորհրդի անդամները և անձամբ ես մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում նոր տարվա առթիվ Ձեր շնորհավորանքի և բարեմաղթությունների համար: Հանձնեք խնդրում ընդունել նաև մեր փոխադարձ ջերմ շնորհավորանքները:

Ի սրտե ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն և երկար կյանք: Թող նոր տարին լինի խաղաղության և ժողովուրդների բարեկամության ամրապնդման տարի:

Ձեր հայրենասիրական գործունեության մեջ նորանոր հաջողությունների լավագույն ցանկություններով,

Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

Հանձնեք ընդունել իմ անկեղծ շնորհավորանքը նոր՝ 1958 տարվա առթիվ: Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն: Շնորհակալ եմ Ձեր շնորհավորանքի համար:

Գ. ՇԱԼՈՒՏԱՇՎԻԼԻ
ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐ

ԹԲԻԼԻՍԻ

Շնորհակալություն Ձեր շնորհավորական հեռագրի համար: Շնորհավոր և Ձեր նոր տարին: Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և հաջողություն ժողովուրդների միջև բարեկամության և խաղաղության ամրապնդման գործում:

ՄԱՄԵԴՈՎ,
ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐ

ԲԱՔՈՒ

ԱՄԵՆԵՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԵՆՆԴԵՑԱՆ ՅՈՆԵՐԻ ԱՅԻՐԵՎ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ԵՎ ԴՈՒՍՏ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՑԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻԻՆ (*ՄՈՍԿՎԱ*),

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Գ-ԻՆ (*ԹԲԻԼԻՍԻ*),

ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՋԵՈՖՖՐԻԻՆ (*ԼՈՆԴՈՆ*)

ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (*ԲՈՒԽԱՐԵՍՏ*),

ԲՈՒԼԳԱՐԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԻԼԻՆ (*ՍՈՖԻԱ*),

ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱՆ ԿԻՅՎԻՏԻՆ (*ՏԱԼԼԻՆ*),

ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻՆ (*ՌԻԳԱ*):

Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին, քրիստոնեական բոլոր եկեղեցիների հետ միասիրտ, այսօր Աստուծո փառքը կերգէ Քրիստի Ս. Ծննդյան ավետիսով ոգեշնչված: Հավատքի սյուն Ս. Էջմիածնի Սեղանեն Մենք ջերմապես կաղոթենք, որ «խաղաղության և ի մարդիկ հաճության» երկնառաք շնորհքները իջնեն երկրի վրա և առաջնորդ ու զորավիգ դառնան մեր օրերու մարդերուն և ժողովուրդներուն՝ ի փառս Աստուծո և հերջանկություն ազգի մարդկան:

Շնորհավորելով Ձեզ Քրիստի Ս. Ծննդյան և Աստվածահայտնության սուրբ տոներու առթիվ, ի սրտե կբարեմաղթենք, որ Պարգևատուն ամենայն բարյաց հաղկեցնե Ձեր հովվապետական գավազանը և պտղառատ դարձնե Ձեր կյանքը՝ հաջառոյջ երկար ու խաղաղ տարիներով, ի մխիթարություն Ձեր ժողովրդյան և հուրախություն Մեզ:

Եղբայրական շատ անկեղծ սիրով ի Քրիստոս,

Ձեզ աղոթակից՝

Վ. ԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Զերդ Վեհափառություն, սիրելյալ ի Տեր սրբասնյալ Հայրապետ.

Մեր Աստուծո և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի ծննդյան օրը հրեշտակներ ավետեցին խաղաղություն— «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն»: Խաղաղությունը կհաղթի խռովության:

Խաղաղության այս հոգով ձեռք եմ մեկնում Զերդ սիրելյալ Սրբության՝ հրճվանքի անկեղծ խոսքով մեր Տիրոջ՝ Քրիստոսի ծննդյան առթիվ:

Թո՛ղ Տերը լիացնի Ձեր հոգին Իր խաղաղությամբ և խնդությամբ, կյանքի աղբյուր Իր հայտնությամբ:

Թո՛ղ Տերը վերանորոգի Ձեր կյանքը և ավելացնի Ձեր կյանքի տարիները աստվածահաճո բեղմնավոր գործունեությամբ, ի փառս Ս. Եկեղեցու:

Զերդ Սրբության անձնվեր եղբայր ի Տեր՝

ԱԼԵՔՍԻ

ՊԱՏՐԻԱՐՔ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ

ՄՈՍԿՎԱ

«Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղուկ. Բ 14):

Այսպես ավետեցին հրեշտակները Բեթղեհեմի հովիվներին՝ Քրիստոսի ծննդյան մեծ ուրախությունը:

Ամեն տարի ավետվում է այդ ուրախությունը Քրիստոսի Եկեղեցու միջոցով և մեզ:

«Եւ եղև իբրև վերացան ի նոցանէ հրեշտակքն յերկինս, ասեն ցմիմեանս հովիւքն. եկայք երիցուք մինչև ցԲեթղեհեմ» (Ղուկ. Բ 15), «և եկին փութանակի» (Բ 16)):

Շտապենք նաև մենք մտքով՝ դեպի մտավոր Բեթղեհեմը, դեպի հրաշալի մսուրը, որը լուսավորված է աստվածային լույսով, հրճվենք և ուրախությամբ միմյանց գրկենք բարի ցանկություններով: Բեթղեհեմի հովիվների նման վերադառնանք մեր հոտի մոտ՝ ավետելու մի անգամ ևս մեծ ուրախությունը. «Եւ դարձան հովիւքն, փառաւոր առնէին և օրհնէին զԱստուած վասն ամենայնի զոր լուան» (Ղուկ. Բ 20):

Շնորհավորում եմ Զերդ Սրբության, Զեր հոգևորականության բարձրաստիճան հովիվներին, Մայր Աթոռի միաբանության և Զեր աստվածասեր ժողովրդի Քրիստոսի Ծննդյան մեծ տոնը և նոր տարին:

Հաստատ համոզված եմ, որ Բեթղեհեմի մսուրում պառկած Աստված Մանուկը կօգնի խաղաղության պաշտպաններին՝ հաստատելու և ամրապնդելու «Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Այս ուրախությամբ և եղբայրական սիրով ի Քրիստոս, ողջագուրում եմ Զերդ Սրբության և մնում Զերդ Սրբության բարյացակամ՝

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Գ

ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ

ԹԲԻԼԻՍԻ

Զերդ Սրբություն, սիրելյալ եղբայր ի Քրիստոս.

Ու բանն մարմին եղև և բնակեցաւ ի մեզ. և տեսաք զփառս նորա» (Յովհ. Ա 14):

Քրիստոնյաները ի վիճակի են եղել նայել մարմնի հոգի միջից այն կողմ և տեսնել աստվածային ճշմարտությունը: Քրիստոսի մեջ մենք տեսնում ենք Աստուծո փառքը: Աստուծո շնորհությամբ մեզ շնորհված այս տիպիկն է, որ մեզ բոլորիս միացնում է. երբ մենք ակնկալույց նայում ենք Իր Ս. Մոր բազուկների վրա հանգչող մարդացյալ Աստուծո՝ մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի Մենդյան այս փառավոր տոնի ժամանակ: Մինչ մենք միանում ենք Ձեզ հետ՝ երկրպագելու մեր փրկության հեղինակին, ես ուղարկում եմ Ձեզ, սիրելի Եղբայր, ջերմ եղբայրական ողջույններ և հույս ունեմ, որ Մենդյան տոնի առիթով Ձեզ պիտի շնորհվի Աստուծուց ամեն օրհնություն:

Ամեն տարի ավելի հստակ է դառնում աշխարհի համար սիրո և աստվածային խաղաղության քրիստոնեական պատգամը: Մութ ուժերը կարող են իրենց հզորության մեջ անդիմադրելի թվալ. բայց մենք գիտենք, որ «Զի՛մարս աշխարհիս ընտրեաց Աստուած, զի յամօթ արասցէ զիմաստունս. և զանկարս աշխարհիս ընտրեաց Աստուած, զի յամօթ արասցէ զհզօրս» (Ա. Կորնթ. Ա 27): Ինչպես Իր՝ Աստուծո սերը ստույգ է, այնպես էլ նրա հաղթանակը ստույգ է. չարի և մեղքի ուժերի վրա: Հավատարիմ մեր հասարակաց Տիրոջ և նվիրված նրան մեր գործով և քրիստոնեական սիրով միացած միմյանց՝ Աստուծո բազավորության և մեր Փրկչի վկայությանը համար, մենք միանում ենք հրեշտակներին երգելով. «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղուկ. Բ 14):

Խնդրում եմ, սիրելի եղբայր, ընդունել իմ ողջույնները Ձեզ, Ձեր նոգևորականության և հավատացյալ ժողովրդի համար, որպեսզի Աստված առատապես օրհնի Ձեր նկեղեցին՝ Իր ծառայության մեջ:

Մնամ Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս:

ՉԵՌՖԹԻ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՆՏԲԵՐԻ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ
ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ

ԼՈՆԴՈՆ

Ի սրտե շնորհակալություն ենք հայտնում Ձեր եղբայրական շնորհավորությունների համար, որն այնքան սիրով հղել էիք Մեզ և մեր հավատացյալներին՝ մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Մենդյան և Մկրտության լուսավոր տոնի առթիվ:

Այս սուրբ օրերին ուրախությամբ Մեր էլ մտածումը ուղղվում է դեպի Ձեզ, մտաբերելով այն սիրելի օրերը, երբ Ձեզ Սրբությունը Մեզ հետ գործակցում էր իրագործմանը համար հրեշտակների պատգամին, որը բերվեց աշխարհ Փրկչի ծննդյան պահին՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Վստահ ենք, որ Ձեր Արոռից, ուր կոչվեցիք Ամենակալի ողորմությամբ, կծավալեք Ձեր առաքելական գործը հոգուտ և ի փրկություն հայ հավատացյալ ժողովրդի, և թե մշտապես կսիրեք պահպանել եղբայրական կապեր Քրիստոսի բոլոր նկեղեցիների հետ:

Մենք մի անգամ ևս սիրով արտահայտում ենք Մեր գնահատանքի և ջերմ համակրանքի զգացումները, մաղթելով Ձեզ լիակատար առողջություն, ուժ և կարողություն և բազում տարիներ, որպեսզի երջանիկ արդյունքներով բարի վախճանի կարենաք հասցնել Հայ Առաքելական նկեղեցու Հովվապետի Ձեր առաքելությունը:

Եղբայրական սիրո համբուրիվ ի Քրիստոս՝

ՀՌԻՍՏԻՆԻԱՆ

ՌՈՒՄԽԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ

ԲՈՒԽԱՐԵՍՏ

Ձերդ Սրբություն.

Թող օրհնյալ լինի Աստուծո անսահման ողորմությունը և խնամքը համայն մարդկային ազգի վրա:

Այս հրաշափառ մեծ խորհրդի սուրբ օրերին՝ Աստուծո Որդու մարմնակման ծնունդի տոնի առիթով, իմաստությամբ համակված, «Աստուծուծ փառքով» լցված և Բեթլեհեմի հովիվների նման հիացած, մեր հայացքները սևեռում ենք դեպի սուրբ այրը, որտեղ կյանքը ծնվեց մեզ համար և անսահմանն ուրախությամբ լցրեց Աստուծո փրկության սպասող մարդկանց սրտերը: Եվ այժմ, ամբողջ մարդկության վերև ճնշում է նորից հրեշտակների ձայնը. «... Աստուածին մեզ ուրախություն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն: Զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է օծեալ Տէր (Ղուկ. Բ 10—11):

Աստված ուղարկեց մեզ Փրկչին, որը մեզ այցի եկավ գթությամբ և սիրով, որովհետև Աստարիչը տեսավ մարդկանց անկումը, ինչպես ասում է ծննդյան երգը: Աշխարհի վրա փայլեց «Աստվածության արեգակը» (Մաղ. Դ 2), լուսավորելով մարդկային միտքը ճշմարտության լույսով, և առաջնորդելով մարդկային ազգը սիրո կրակով, որպես ամենաբարձր պատգամ: Քրիստոսի ծնունդը բերեց աշխարհին այնքան բարիքներ և բարեհաճություն՝ ժողովուրդների մեջ:

Բոլորս միասին խոնարհությամբ աղերսենք աշխարհի Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին՝ Բեթղեհեմի ծննդյան աստղի լույսով, որ Ինքը փայլեցնի մարդկային հոգիները հավատով և Իր փրկարար ուժով, որպեսզի Բեթղեհեմի օրհնությունը իջնի և աշխարհի վրա բազավորի խաղաղությունը և մարդկանց մեջ հաճությունը:

Շնորհավորում եմ Ձերդ Սրբության և Ձեր եկեղեցու մեծ տոնը՝ Քրիստոսի ծննդյան մեծ ուրախությամբ:

Շնորհավորում եմ Ձեզ նաև նոր տարվա առիթով և ջերմեռանդությամբ աղերսում Կուսից ծնված Փրկչին, որ պարգևի Ձեզ առողջություն, հոգու ուրախություն, Ձեր բարեպաշտ հոտին՝ ամեն տեսակ հոգևոր և մարմնավոր աճում և հաջողություն և ամբողջ մարդկության՝ խաղաղություն:

Ինձ և մեր Ս. Եկեղեցին հանձնում եմ Ձեր սուրբ հովվապետական աղոթքներին և սիրով առ Մանուկ Աստվածը.

որով մնամ Ձերդ Սրբության խոնարհ եղբայր՝

ԿԻՐԻԼ
ՊԱՏՐԻԱՐՔ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ

ՍՈՖԻԱ

Ձերդ Սրբություն.

Ընդունեցեք իմ սրտագին շնորհավորանքները Քրիստոսի ծննդյան մեծ տոնի և նոր տարվա առիթով:

Ջերմորեն ցանկանում եմ հաջողություն և բարեկեցություն անձամբ Ձեզ և Ձեր եկեղեցու հավատացյալներին:

ՅՈՎՀԱՆ ԿԻՑՎԻՆ
ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՏԱԼԼԻՆ

Ուրախությամբ և սրտագին ողջունում եմ Ձեզ Սրբություններ՝ Քրիստոնեական ընդհանուր և մեծ տոնի՝ Աստուծո Որդու, Խաղաղության Իշխանի և մեր Փրկչի՝ ծննդյան առթիվ:

Նոր տարվա առթիվ ընդունեցեք նաև իմ լավագույն բարեմաղթությունները՝ Ձեզ Սրբության քաջառողջության և Ձեր գործակից հոգևոր հովիվների արդյունավետ գործունեության և հնադարյան Հայ եկեղեցու պայծառության համար:

ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐԻ

ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՌԻԳԱ

Ձեզ Վեհափառություն.

Այս տոնական սրբազան օրերին, երբ Աստուծո Բանը մարմնանում է, երբ հրճվում են երկինքն ու երկիրը և Քրիստոսի բերած խաղաղությունը լցնում է երկիրը, խնդությամբ խոնարհվում եմ երկնքից իջած մեր Աստուծո առաջ և լիառատ սրտով ողջունում եմ Ձեզ Սրբությանը քրիստոնեական մեծ տոնի առթիվ, որը տալիս է ուրախություն բոլորին:

Ցանկանում եմ Տիրոջ ամեն տեսակ օգնությունը Ձեզ, ուժերի լարում և առաջադիմություն Ձեր բոլոր աշխատանքներում, ի փառս Ձեր հոտի և Ազգի:

Թող ամենակալ Քրիստոս մեր ուժերը Իր ծնունդով մեր փրկության համար, որպեսզի ծառայենք Նրան հավատով և սիրով, ի փառս ամբողջ մարդկության:

Թող տիրապետի մեր սրտերում Նրա խաղաղությունը, որը կյանքի հիմքն է և մարդկության բարօրության աղբյուրը:

Սիրով ի Քրիստոս՝

ՆԻԿՈԼԱՅ

ԱՆԴԱՄ Ս. ՍԻՆՈԴԻ, ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈԼՈՄԵՆԱՅԻ

ՄՈՍԿՎԱ

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏԻՐՈՋ ԱՆԹԱԿՎԱ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅԱՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ԵՎ ՆՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱԲՈՌՆԵՐԻ ՕՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐԻՆ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

Փրկչի Իշման Ս. Սեղանի առաջ աղօթք կկարդամ ան Աստված, որ «խաղաղության և ի մարդիկ հաճութիւն» Ս. Ծննդյան երկնառաք օրհներգը իմն, առատապես երկրի վրա և առաջնորդ ու զորավիգ դառնա մեր օրերու մարդերուն և ժողովուրդներուն՝ ի փառս Աստուծո և ի փրկություն ազգի մարդկան:

Մեր Տիրոջ Ծննդյան և Աստվածահայտնության մեծ և սքանչելի ավետիսով թող բացվին դռներ նոր տարի մը, որ հետը բերե բարի օրեր և խաղաղություն նաև հայ ժողովուրդին և Հայաստանյայց եկեղեցիին, մեր հեռավոր և մերձավոր բոլոր հարազատ զավակներուն, պահելով պահպանելով զանոնք ամբողջ և անխոտով և սիրով միաբան, մեր սուրբ հավատքի վեմին վրա անշարժ, առաքինի ու եկեղեցանվեր ու ազգաշեն գործոց փառավոր հաջողությամբ:

Ձեզ, ազգային-եկեղեցական վարչություններուն, հոգևոր դասուն, կրթական, մշակութային, երիտասարդական, հայրենակցական, բարեսիրական կազմակերպություններու ղեկավարներուն և համայն մեր սիրելյալ հավատացյալ ժողովուրդին՝ ողջույն և օրհնություն հայրապետական և սրտաբուխ մաղթանք վասն Ձեր բոլորի քաջառողջության, արեշատության և բարեբերության:

Ողջ մնացեք, անսասան մնացեք և քաջալերվեցեք Ս. Ծննդյան շնորհներով զորացած, և գործեցեք սուրբ եռանդով զոտեպինդ, խաղաղ ու լավատես, Ձեր հայացքը սևեռած դեպի Ս. էջմիածին՝ աստվածակառույց հավատքի սյուներ ամենայն հայոց:

Շնորհավոր նոր տարի և Ս. Ծնունդ, և սեր ու խաղաղություն Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ. ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ստացվեցին նաև բեմական և կրոնական խորհուրդներին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության կենտրոնական վարչության (Նյու-Յորք). Գայուստ Կյուլպենկյան հիմնարկության կենտրոնական խնամակալության մեծահարգ նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերդիգոյին (Լիսաբոն), Մայր Աթոռ Ս. էջմիածնի տպարանի հանձնախմբին (Նյու-Յորք), Արգարյան ավանդի և Ս. էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), Մայր Աթոռ Ս. էջմիածնի օժանդակ հանձնախմբին (Թեյրութ). հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին. Մայր Աթոռի բարեբարերին և ազգային ծանոթ դեմքերին:

ՊԱ-1018

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ամանորի և Ս. Ծննդյան առիթով ընդունեցեք բոլորիս շնորհավորանքն ու ստացիք մաղթանքները Վեհիդ կենաց հաջառողջության, արեշառության, Մայր Աթոռս պայծառության, ժողովրդոց համերաշխության և աշխարհի խաղաղության համար:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈ

ՍՏԱՄԲՈՒԼ

Հանեցեք ընդունիլ իմ և մեր միաբանության խոնարհ շնորհավորությունները՝ նոր տարվան և Աստվածահայտնության առթիվ:

Թող մեր Տերը և Աստվածը՝ Հիսուս Քրիստոս զորացնե Ձեզ Սրբությունը իր սուրբ գործին մեջ:

Խոնարհ հարգանքներով և սիրով՝
ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Նոր տարվա և Ս. Ծննդյան առթիվ անկեղծ շնորհավորություններ:

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆ,
ԿԻԼԻԿՅԱՆ ԱԹՈՌԻ ՏԵՂԱԿԱԼ

ԴԱՄԱՍԿՈՍ

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ, ամենաջերմ և հարգալիր զգացմունքներով գրված, արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերից, թեմական առաջնորդներից, թեմական և եկեղեցական խորհուրդներից, հոգևոր հովիվներից, ազգային-եկեղեցական և մշակութային կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:



ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿՈՅԻ ՀԻՍՈՅՆՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԵՎ ՎԻԵՆՆԱՅԻ ՀԻՍԿԱԿԱՆ ՄԱՏՈՒՌԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ 45-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ուրախությամբ կնաղորդենք Ձեզդ Վեհափառության, որ Սան-Ֆրանցիսկոյի մեր Ս. Հովհաննեսի անվան հայկական նոր եկեղեցի օծումը տեղի պիտի ունենա 1958 թվականի հունվար 19-ին, որոմ համար կխնդրենք Ձեր օրհնությունները: Կաղոթենք Ձեզդ Վեհափառության հաջողության և երկար կյանքի համար:

ԱՐԹՈՒՆ ՔԱՀԱՆԱ
և ՀԱԿՈԲ ՇԱԲԱՍ (խորհրդի նախագահ)

10 հունվար 1958
Սան-Ֆրանցիսկո

ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿՈՅԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՎՈ ԽՈՐՀՐԴԻՆ

Մեծ Լուսավորչի Աբոռ էջմիածնեն ողջույն և օրհնություն և լույս Ս. Հովհաննես Ձեր նոր եկեղեցիին. Ձեր նորապսակ առաջնորդին, Ձեր հոգևոր հովվին, եկեղեցական խորհուրդին, տիկնանց, երիտասարդաց միությանց և համայն հավատացյալ սիրեցյալ Մեր ժողովուրդին:

Ձեր նորօծ Ս. Հովհաննես եկեղեցին ըող մնա անսասան, շեն և պայծառ՝ իբրև տուն աղոթքի և ուխտի, իբրև աստվածային հովանի և լույսի ջահեմարան՝ իբրև հայ հոգիի սիրո և միասնության վեմ՝ ի փառս Ազգիս և Ն. եկեղեցվույս, ի պարծանս Մայր Աբոռիս:

«Ողջ լեռում, զօրացեալ ի Հոգին Սուրբ և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ»:

Վ. ԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

14 հունվար 1958
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԵՂԻՇԵ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՈՒԹՈՒՃՅԱՆԻՆ

ՎԻԵՆՆԱ

Սրբազնասուրբ և հավիտենական էջմիածնեն սիրո ողջույն և օրհնություն Ձեզ և մեր սիրեցյալ ժողովուրդին՝ Ձեր Ս. եկեղեցվո հիմնարկության հառասունհինգամյա տարեդարձի առթիվ: Ձեր աղոթքի տուն թող մնա անշարժ, շեն և պայծառ, իբրև ասավածային ճոխանի և լուսո շտեմարան, իբրև հայ հոգիի սիրո և միասնության վեմ, ի փառս Ազգիս և եկեղեցվո և ի պարծանս Մայր Աթոռիս:

«Ողջ լեռուք և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ»:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

14 հունվար 1958
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հունվարի 19-ին, կիրակի օր, Վիեննայի հայ գաղութը մեծ խանդավառությամբ կատարեց հայկական մատուռին հիմնարկության 45-ամյակը: Հանդիսությանց նախագահեց և պատարագեց Կաթողիկոսական պատվիրակ Սերովբե եպիսկոպոս: Կարդացվեցավ Ձերդ Վեհափառության օրհնության գիրը: Գաղութս այս առթիվ կնայտնե իր ուրդիական սերը Ձերդ Վեհափառության և իր հավատարմությունը հանդեպ Մայր Աթոռ Ս. էջմիածնի:

ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ և ԱՐՄԵՆԱԿ ՎԱՐԴՅԱՆ

20 հունվար 1958
ՎԻԵՆՆԱ



ԿՐՈՆԱԿԱՆ

ՄԵԿ Է ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԹԵ՛ ԴԱՎԱՆԱՆՔՈՎ, ԹԵ՛ ՆՎԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՄԲ*

Եկեղեցին մյուս կարևոր հատկանիշն է Միությունը: Հայաստանյայց Եկեղեցին մեկ է ոչ միայն հավատքով, ծեսով, Ս. Խորհուրդներով, այլ նաև մեկ է իր կանոնական օրենքներով և իր նվիրապետական դրությամբ: Իր կանոնական օրենքները դրված են Հայաստանյայց Եկեղեցիի բարձրագույն հեղինակությունը ներկայացնող եկեղեցական ժողովներու կողմե: Եթե պետք ըլլա անոնց մեջ փոփոխություններ մտցնել կամ նոր կանոններ սահմանել, այդ պետք է ըլլա Եկեղեցիի միևնույն բարձրագույն օրգաններով: Եկեղեցիի լրութենեն ընդունված և դարերու գործածությամբ նվիրագործված հիմնական կանոններու հակառակ մասնակի օրենքներ սահմանել, կնշանակե խախտել Եկեղեցիի միությունը:

Հայաստանյայց Եկեղեցին մեկ է նաև իր վարչական և նվիրապետական դրությամբ: Իր ընդունած վարչաձևին համաձայն, Հայաստանյայց Եկեղեցին մեջ գոյություն ունեն ինքնավար քանի մը շրջանակներ: Այս ինքնավար Աթոռներու գոյությունը երբեք չեղծեր Հայաստանյայց Եկեղեցիի միությունը, որովհետև նախ անոնք իրարմե բոլորովին անջատ միավորներ չեն, այլ մեծ ամբողջի մը անրաժանելի մասերն են: Երկրորդ՝ կանոնական որոշ օրենքներով կապված են անոնք Հայաստանյայց Եկեղեցիի կենտրոնական Աթոռին: Յուրաքանչյուր ինքնավար Աթոռին հեղինակությունը կտարածվի իրեն համար սահմանված շրջանակին վրա միայն: Իր շրջանակեն դուրս գալ և իր հեղինակությունը տարածել ուրիշ Աթոռներու իրավասության ենթակա շրջաններուն վրա՝ նախ բացահայտ հակա-կանոնական արարք մըն է. երկրորդ՝ հիմքեն կխախտի Հայաստանյայց Եկեղեցիի Միությունը: «Ինչ որ չեք ուզեր, որ ուրիշներ ձեզի ընեն, դուք ալ անոնց այնպես մի՛ ընեք»: Ավետարանական ծանոթ ոսկեղեն խոսքին այս ժխտական ձևին նկատմամբ գեր՛ կապավեր անոնցմե, որոնց մեջ տակավին չէ մեռած մարդկային ամենեն տարրական ողջմտության դիտակցությունը, եթե մեռած է մինչև իսկ քրիստոնեական ոգին ու կրոնական և կարգապահական գիտակցությունը: Ինքնավար Աթոռներեն ոչ մեկը պիտի ուզեր, որ քույր նվիրապետական Աթոռներեն մին կամ մյուսը ոտնձգություններ ըներ իր իրավասության ներքև դրված շրջանին մեջ: Նման փոփոխություններ, եթե հարկ է

* Ուրախությամբ ենք հրատարակում Երուսաղեմի Հայոց Պատրիարքության պաշտոնական «Մեհեն» ամսագրի 1957 թվականի Հոկտեմբեր—Նոյեմբեր միացյալ համարի «Հաստատամբ և ի մի միայն... Մայր Եկեղեցի» խմբագրականից քաղվածաբար «Մեկ է Հայաստանյայց Եկեղեցին թե՛ դավանանքով. թե՛ նվիրապետությամբ» անթախորագրով հատվածը—ԽՄԲ. «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ.

ընել, պետք է կատարվին փոխադարձ հաւ-
կացողությամբ, և եկեղեցիի Գերագույն Իշ-
խանությունը ներկայացնող ժողովական
մարմիններուն կողմե, և ոչ թե ինքնագլուխ։

Տրված ըլլալով հանդերձ շրջանային ինք-
նավարությեան այս սկզբունքը, և ընդունելով
ինքնավար Աթոռներու կանոնական դիրքը
Հայաստանյայց եկեղեցիի նվիրապետության
մեջ, դեռ անխախտ կմնա այն մյուս սկզբ-
ունքը, որ պայման է եկեղեցիի մը Մեկու-
թյան. այն է՝ Մեկ եկեղեցին մեկ գլուխ
միայն կունենա։

Երկգլխանի գործարանավոր միություն մը
անծանոթ է որքան իրաց բնական մարդին
մեջ, նույնքան և ավելի Մի եկեղեցիին մեջ։
Եթե այսօր քրիստոնեական աշխարհի մեջ
«բազում եկեղեցիներ» կան, պատճառն այն
է, որ «բազում գլուխներ» կան։ Գլուխին մեջ
կամ բազում ըլլալն է, որ կճշտե մարմին-
ներուն և կազմակերպությանց մեկ կամ
բազում ըլլալը։ Հայաստանյայց եկեղեցին
եթե կընդունի որ Մեկ է, պետք է ունենա Մեկ
և ընդհանրական գլուխ մը, այլապես՝
կխախտի Հայաստանյայց եկեղեցիի Մի-ու-
թյունը։

Եկեղեցիի վարդապետական կամ դավա-
նաբանական Միության դեմ գործելը կկո-
չենք հերետիկոսություն։ Իսկ եկեղեցիի վար-
չական միության դեմ գործելը, այսինքն
եկեղեցիին մեջ երկուություն հառաջացնելը,
կկոչենք հերձված։ Եկեղեցիին համար եր-
կուքն ալ հավասարապես վտանգավոր են և
հետևարար՝ դատապարտելի։ Վասնզի եր-
կուքն ալ կխախտեն եկեղեցիի Միության
հատկանիշը և կկոչնչեն անոր դիմագիծը։

Հայաստանյայց եկեղեցին մեկ է և մեկ
միայն կրնա ըլլալ։ Այս միության մեջ մնա-
լու համար անհրաժեշտ է ոչ միայն նույն
հավատքն ու պաշտամունքն ունենալ, այլ
նաև անհրաժեշտ է ընդունել մեկ և նույն
կանոնական օրենքներով։ Անհրաժեշտ է մեջ
ըլլալ միևնույն նվիրապետական և միևնույն
եկեղեցական-վարչական դասության, զոր ու-
նի Հայաստանյայց եկեղեցին։ Հայաստան-
յայց եկեղեցիի նվիրապետության, հոգևոր
իշխանության բարձրագույն գլուխը Ամենայն
Հայոց Կաթողիկոսն է։

«Ամենայն Հայոց Կաթողիկոս» տիտղոսը
կարևոր և հիմնական սկզբունքի մը արտա-
հայտությունն է։ Եկեղեցիի Միության հատ-
կանիշն կբխի այդ տիտղոսը։ Հայաստան-
յայց եկեղեցիի Միությունը «Ամենայն Հա-
յոց Կաթողիկոս»-ի անձին մեջ կմարմնանա։
Զայն նշկահելը կնշանակի խղվիլ, դուրս գալ
Հայաստանյանց եկեղեցիի Միության սահ-
մանեն։ Երթունքի սպասարկություն միայն
կրլլա «ճանչնալ Ս. Էջմիածնի հոգևոր հեղի-
նակությունը», առանց ճանչնալու անոր
հաստատյալ իրավասության բովանդակու-
թյունը և սահմանը։

«Ամենայն թագաւորութիւն բաժանեալ
յանձն իւր աւերի, և ամենայն քաղաք կամ
տուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ կացցէ»։ Ա-
վետարանական և պատմական այս ճշմար-
տության տխուր վկան մեր ազգային-քաղա-
քական պատմությունն է։ Հայաստանյայց
եկեղեցիի բարձրագույն իշխանությունը և
Հայ եկեղեցիի հարազատ զավակները, աբ-
թընելով ահավորությենն վտանգին, որ
կրացվի Մայրենի եկեղեցիի ոտքերուն ներ-
քև, թույլ պետք չէ տան, որ վերոհիշյալ
վճիռը իրականանա նաև մեր եկեղեցական
պատմության մեջ։



«ԿԱՆԳՆԻ Ի ՍՄԱ ԾԱԴԵԱՑ ՄԵՋ ԼՈՒՍ»*

Այսօր գահակալության տարեդարձի տոնն է Ամենայն Հայոց Վեհափառ Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսին։ Մեզի համար, բոլոր հայոց համար, որոնք իրենց սրտին մեջ Ս. Լուսավորչի տեսած լույսեն շող մը ունին, բոլոր անոնց համար, որոնց մտքին մեջ Ս. Լուսավորչի բերած լույսը կճառագայթե, անոնց համար տոն է այսօր։

Աշխարհիկ իշխանություններ հանդիսավորապես կտոնեն իրենց թագավորին գահակալության տարեդարձը, ինչպես մենք Հորդանանի մեջ կտոնենք մեր Վեհապետի՝ Հյուսեյն թագավորի գահակալության տարեդարձը։ Այսօր գահակալության տարեդարձն է մեր Հոգևոր Իշխանին, որ մեր Վեհափառն է։ Եվ «Հոգի առաւել է քան զմարմին»։ Հոգևորը՝ ան մեր բուն, ազնվական էությունը կկազմե։ Այս պատճառով կարևոր է մեր եկեղեցիին համար այսօրվան տոնախմբությունը։

Ասկե 1 600 տարի առաջ հաստատված Ս. Լուսավորչի Գահը դեռ կմնա կանգուն և իր Գահակալն ունի։ Ս. Լուսավորչի և անկե առաջ Ս. Թադեոսի և Բարթողիմեոսի հաստատած էջմիածնի այս Աթոռը երկար դարերու ընթացքին ինչքա՞ն հարվածներ ընդունեց, և ի՞նչ մրրիկներու և փոթորիկներու խաղալիք դարձավ, ի՞նչ վիշտեր անոր սիրտը խոցեցին՝ ի տես հայ ժողովուրդի կոտորածին, ջարդին և աշխարհի չորս կողմերը ցրվումին։ Քանի՞-բանի անգամներ սարսեցավ, բայց այսուհանդերձ տակաց «սալվու չինար էջմիածին»-ը, և կանգուն մնաց և տակավին կանգուն կմնա Մայր Հոգի վրա։ 1 600 տարիների ի վեր կանգուն կմնա ոչ թե միայն շենքը և Աթոռը, այլ այդ Գահին վրա կնստի այսօր պատվական Կաթողիկոս մը, որ կշարունակե այն գործը, զոր Լուսավորիչ սկսավ։ Եվ վեր կբռնե այն ջահը, զոր իր տեսած լույսեն վառեց մեր երկրորդ Լուսավորիչը։ Եվ հին-հին դարերեն արձագանգող Ս. Էջմիածնի հոգետավիղ քնարը կնվագե ի լուր աշխարհի չորս կողմը ցրված և Մայր Հայրենիքին մեջ բնակող հավատացյալներու ականջին։

Այս մտածումը առաջին պատճառն է, որուն համար ուրախ ենք այսօրվան տոնախմբությամբ։

Երկրորդ պատճառը մեր ուրախության այն է, որ մեր Հայրապետը շինարար Կաթողիկոս մը կհանդիսանա։ Ան լծված է տենդագին աշխատանքի՝ Ս. Էջմիածինը և Հայաստանի մեջ մեր եկեղեցին վերականգնելու և պայծառացնելու։ Չգոհացավ միայն Աթոռին վրա բազմելով և Իր շուրջ դիտելով։ Այլ լծված է գերազանցապես կենսական Իր հոգևոր գործին, եկեղեցվո զորացման և պայծառացման համար։ Կճգնի Ան Մայր Հայրենիքին մեջ նկեղեցվո կյանքը վերստին արծարծելու, այն կյանքը, զոր ան ուներ անցյալին։ Իրրև վերին Հոգևոր Հայր՝ Իր նայվածքը կերկարե նաև արտասահմանի հայերուն վրա, որպեսզի Աստուծո հանդեպ մեր հավատքը զորավոր և ուղիղ մնա։

* Նրուսալեմի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը, 1957 թվականի հոկտեմբերի 6-ին, Սրբոց Հակոբյանց Մայր Տաճարում, Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարեդարձի առթիվ խոսել է բովանդակալից քարոզ, որը տպվել է «Մեսրոպ» ամսագրի Հոկտեմբեր—Նոյեմբեր համարում։ «Էջմիածին» ամսագրի ընթերցողներին ներկայացնում ենք այդ գեղեցիկ քարոզից հատվածներ։—ԽՄԲ.։

Վեհափառ Հայրապետը սկսած է արդեն ներ և երիտասարդ ուժեր ղրկել թեմերը, մխիթարելու համար ժողովուրդը, անոնց հոգին թարելու համար ժողովուրդը, անոնց հոգին և սրտին մեջ պայծառ պահելու համար այն մեծ հույսը, զոր մեր հավատքի Հայրը Ս. Գրիգոր Լուսավորիչ տեսավ բաղում դարեր առաջ։ Հետևաբար ուրախ ենք, որ մեր Հայրապետը հոգևոր այս մեծ գործին լծված է, օգտագործելով առիթը և գործածելով ամեն կարելիություն Հայաստանյայց եկեղեցին պայծառացնելու, լծված է աշխատանքի, որպեսզի հավատքի լույսը մեր Հայրենիքին մեջ և արտասահմանի մեջ պայծառ մնա։

Մեր ուրախության պատճառներեն մեկն ալ այն է, որ մեր Հայրապետը իմաստուն և խոր հավատքով և սուրբ նախանձախնդրությամբ մի քրիստոնյա Հովվապետ մըն է, զարգացած, խանդավառ, Ազգին և եկեղեցիին հոգևոր վերելքին նկատմամբ լավատես։ Մեր Ազգը շատ բախտավոր պետք է զգա ինքզինքը, որ Աստված հարույց այս ճգնաժամային օրերուն Վազգեն Կաթողիկոսի պես անձ մը Ս. Լուսավորչի Աթոռին համար։ Շատ երջանիկ պետք է զգանք մենք զմեզ, որ փոխանակ ուրիշի մը՝ զինք հարույց, որպեսզի ուղիղ վարդապետությամբ հովվե Իր ժողովուրդը։

Այս պատճառներով այսօրվան մեր տոնախմբությունը իմաստալից կդառնա։ Եվ գահակալության այս տարեդարձը առիթ մըն է մեզ համար, որ անդրադառնանք այն պարտականության, զոր արտասահմանը ունի հանդեպ Տ. Տ. Վազգեն Կաթողիկոսին, մեր Ընդհանրական Հայրապետին։ Պետք է գիտենանք, որ 1 600 տարիներու ընթացքին, երբ հովիվ ու փոթորիկներ Ս. Աթոռը տեղ տեղ նետեցին, Դվինեն մինչև Հռոմկլա, մեր ժողովուրդը չդադրեցավ երբեք իր աչքը հառելե այն լույսին, զոր Ս. Լուսավորիչ տեսավ, երբ այդ լույսը ճառագայթեց Ս. Գերեզմանեն մինչև Վաղարշապատ։ Այդ լույսը միշտ վառ պահեցին մեր հայրապետները, հակառակ այն իրողության, որ ժամանակներ եղան, երբ Մայր Աթոռը իսպառ կորստյան վիհին եզերքը հասավ։ Եղան ժամանակներ, երբ անարժան մարդիկ, նստած այնտեղ, նսեմացուցին անոր անունը։ Բայց որովհետև գերազանցապես սուրբ և թանկագին էր անոր անունը հայ ժողովուրդին համար, ժամանակավոր դեպքեր և դժբախտություններ չկրցան բնականաբար հինավուրց այդ հաստատության հիմերը քայքայել։ Եվ էջմիածինը կմնա հավիտենական և անխախտ։ Հայ ժողովուրդի հարազատ զավակները իրենց հոգին այքերը պետք չէ երբեք շեղեցնեն ուրիշ կողմ։ «Քանի՞ ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»,—ինչպես կրսե շարականը։

Էջմիածնի Կաթողիկոսը, հին օրենքներուն համաձայն, իր հոգի իրավունքները ունի համայն Հայաստանյայց եկեղեցվո վրա։ Այս իրավունքները կհարգենք և պետք է հարգենք ամենքս։ Մեր եկեղեցին ալ, աշխարհագրական բաժանման հիման վրա, ունի չորս պատմական Աթոռներ՝ Ս. Էջմիածնի Մայր Աթոռը, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո Պատրիարքությունները և «Կիլիկյան» Կաթողիկոսությունը։ Այս Աթոռները իրենց ինքնավարությունը կպահեն Ս. Էջմիածնի գերագահության ներքև։ Այս դրությունը շատ դարերով օգտակար եղած է Հայ եկեղեցիին, որ մեր ներկա իրադրության մեջ աշխարհի չորս կողմերը ցրված է։ Մեր եկեղեցին, ավելի քան երբեք որևէ ատեն մեր պատմության մեջ, պետք ունի հոգևոր միության, որ Ս. Էջմիածնով իրական կդառնա։

Զմոռնանք այն լույսը, զոր Ս. Լուսավորիչ վառեց Հայաստանի մեջ ի Ս. Էջմիածին, և որմե վառեցան մեր այն բաղում կանթեղները, որոնք կպլպլան հայ եկեղեցիներու մեջ ի սփյուռս աշխարհի։ Պետք է հաստատ գիտենանք, թե հոգևոր միությունը վերացական բան մը չէ և պետք չէ ըլլա մեզի, հայերուս համար։ Պետք է, որ այդ միությունը ըլլա տեսանելի, շոշափելի, իրական։ Եվ Մայր Աթոռի պատվական և Սրբազնագույն Գահակալը, ցուցիչը, ներկայացուցիչը, խորհրդանիշը և իրականացնողն է մեր հոգևոր միության։ Ան մեր զորավարն է, որ մեր հոգևոր Զորագլուխին՝ Հիսուս Քրիստոսի ներքև կկռվի մեր հավատքին համար, Մայր երկրեն ներս և անկե դուրս, և մենք ամենքս Անոր գնդապետները և զինվորներն ենք և մեր նպատակն է «բարվոք պատերազմը պատերազմիլ», ըստ առաքյալին, անհավատության, սուտի, բարոյական մանկության, հուսահատության և բաժանարարության դեմ։ Պիտի կռվինք՝ ի՛նչ ալ որ բերեն տարիները, որպեսզի հաստատուն ըլլա մեր հույսը և տոգոչ ծառի մը նման կուրծք կարենանք տալ մեր վրա թափող փոթորիկներուն։

Այս է իմաստն ու նշանակությունը այսօրվան հանդեսին։

Մաղթենք, որ Տեր Աստված երկար կյանք տա մեր Սրբազնագույն Հայրապետին՝ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ին, արդյունավորե Իր ջանքերը՝ ի պայծառություն Մայր Աթոռին և Հայաստանյայց Ս. Եկեղեցվո և պայծառ և խաղաղ և բարդաված պահե մեր Ս. Եկեղեցին և Աստուծո շնորհը անպակաս ըլլա մեր պատվական ժողովուրդին և մեր ամենուս վրայեն։ Ամե՛ն։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Հունվարի 6-ին, երկուշաբթի օրը, «Տօն Մանդեան և Միքայելեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Վաղ առավոտյան Մայր Տաճարում պաշտվում է առավոտյան հանդիսավոր ժամերգություն։ Տաճարում հնչում են «Խորհուրդ մեծ և սքանչելի»-ն և Մանդյան տոնին նվիրված հոգեկրթիչ շարականներ։ Մայր Տաճարը ժպտում է պայծառ լույսերի անձրևի տակ։ Տաճարը զարդարվել է տոնական։ Օրվա մեծ տոնի առթիվ, վաղ առավոտվանից Մայր Աթոռ է ժամանել ուխտավորների մի մեծ բազմություն։ Դրսում կարծես գարնանային օր է, արև է և ջերմ։

Վեհափառ Հայրապետը, Վեհարանում զգեստավորված, ժամը 11-ին, խնկով ու աղոթքով, երգով ու շարականով, եկեղեցական թափորով և հայրապետական ամփոփանու տակ իջնում է Մայր Տաճար պատարագելու։ Տրդատյան գմբեթից դեպի Մայր Տաճար տանող ճանապարհի երկու կողմերի վրա հավաքվել է ուխտավորների արտակարգ բազմություն, որը ջերմորեն և երկյուղածությամբ է դիմավորում Վեհափառ Հայրապետին և ծնկի եկած հայցում է նրա սուրբ օրհնությունը։

Մայր Տաճարի կանդերը հնչում են զվարթորեն և տոնական։

Մայր Տաճարը լիքն է հավատավոր ուխտավորների բազմությամբ։

Ժամը 11.30-ին սկսվում է հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագը։ Պատարագին սպասարկում են գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Հայկազուն սրբազանները, հոգեշնորհ Տ. Սղիշե, Տ. Մուշեղ և Տ. Մեսրոպ վարդապետները, արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարությանը և սարկավագների ամբողջ խումբը։

Մայր Տաճարի երգչախումբը քառաձայն երգում է Եկմալյանի սուրբ պատարագը ի բաժիշտ պր. Հ. Գևորգյանի ղեկավարությամբ։

Մայր Տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ պրոֆեսոր. Ա. Ղարիբյանը, պրոֆ. Ա. Առաքելյանը, դոցենտ Ա. Տիրացյանը, դասախոս Ա. Ապաջանյանը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունը, «Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմինը, Մայր Աթոռի ճարտարապետները, հատուկ հյուրերը, ռադիոյի և մամուլի ներկայացուցիչներ։ Դասերում ներկա են նաև ուխտավորներ Կալիֆոռնիայից և Ռումինիայից։

Հանդիսավոր, վեհ ու ապավորիչ շարունակվում է սուրբ պատարագը։ «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը խոսում է Իր գեղեցիկ և բովանդակալից բարոյականիչ մեկը, որը լսվում է հոգեկան անսահման ուրախությամբ և ոգևորիչ խանդավառությամբ։

«Խորհուրդ մեծ և սքանչելի.
Որ յայտնի աւուր յայտնեցար»:
ՇՈՒՐԱԿԱՆ ԾՆՆԴԵԱՆ

«Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

Շատ դարեր առաջ, հույսի, հսկումի սրբազան ժամին, աշխարհի մը մեջ սուրբ տեսիլքներու, աստղ մը շողշողաց և լույսը երկնքի իջավ երկիր. և լույսին հետ հջավ երգ մը հրաշալի ու մեծախորհուրդ՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ, յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Ի՞նչ պայծառ լույս էր այդ և ի՞նչ դյուրիշ երգ՝ դարերու երագ, դարերու տենչանք:

Ահա կծներ Արեգակն արդարության՝ Հիսուս, իբրև Որդի Մարդո, որպեսզի մարդիկ վերստին ծնին իբրև որդիք Աստուծո, արդար ու խաղաղ աշխարհի մը մեջ նոր:

Եվ դարեր շարունակ մարդիկ, սերունդներ անթիվ, անհամար ու շարան-շարան, եկան ու անցան մեր կյանքի հովիտեն, երկրպագելով Մանուկ Հիսուսին, հրեշտակներու երգը իրենց շրթներուն, փնտռելով լույս աշխարհը նոր, խաղաղ ու արդար:

Ամեն օր, ամեն ժամ մարդիկ կծնին հուր տեսիլքներով ու կմեռնին, ավա՜ղ, մեղքերով թաղված, վերստին ծնելու անմար տենչանքով, հավիտյան ծարավի արդարության լույսին և սիրո երգին: Մարդիկ կքալեն, կքալեն համառ դեպի լուսաբացը խաղաղության ու բարի հաճության: Այս նվիրական սուրբ համբուն վրա շատերը կկորսվին անդարձ ու անհետ, ուրիշներ, արի և խիզախ, կմնան կանգուն. կբարձրանան Գողգոթաներն ի վեր, դեպի պատարագ, դեպի հարություն...

Ով արդար է և հավատքով լեցուն, և գիտե բանալ իր հոգին համբան, ան միշտ կտեսնե աստղը երկնքի, ան միշտ կլսե երգը հրեշտակին, ան միշտ կհավատա մեծ ավետիսին, զի ա՛յդ իսկ է փառքը ճշմարիտ մարդուն և վեհ իմաստը երկրային կյանքին: «Ճոնները պիտի կրնան շարժիլ, բլուրները պիտի կրնան խոնարհիլ, սակայն իմ ողորմությունը պիտի չնվազի և իմ խաղաղության ուխտը պիտի չսասանի երբեք»,— կրսե մարգարեն Աստված (Եսայի, ԾԴ 10):

Այս հավատքով և այս մեծ հույսով, ո՞վ ժողովուրդ հայոց, Փրկչի Իշման այս Ս. Տաճարեն ավելիս կուտանք քեզ՝ «Քրիստոս ծնա՛ւ և յայտնեցա՛ւ», «Փա՛ռք հրաշափառ աստուածայայտնութեան Քո, Տէր»: Փա՛ռք Արեգակին արդարության, փա՛ռք խաղաղության և սիրո Աստուծոյն:

Սիրելի՛ հուսացյալ զավակներ Հայաստանյայց Ս. Եկեղեցվո, քրդ ձեր հոգնած ու տկար հոգիները նոր ուժ և նոր լույս առնեն Ս. Ծննդյան անշեջ լույսի շողեն, քրդ ձեր սրտերը վերստին լեցվին սիրո և խաղաղության երգովը, քրդ վերստին նորոգվի ձեր հայ հավատացյալի ուխտը նվիրական. դեպի ելշմարիտ հավատքը մեր, դեպի հայոց սուրբ հավատքի հավիտենական Տաճար Ս. էջմիածինը մեր, զոր Ինքը Աստված պարգևեց Հայոց Աշխարհին՝ իբրև կյանքի և սիրո աղբյուր, իբրև միության և խաղաղության վեմ:

Աղոթքի այս քաղցր ու սրտառուչ պահուն հավատանք Աստուծո, հավատանք Անոր բարձունքներեն իջած «խաղաղության և ի մարդիկ հաճության» սրբազան պատգամին: Այս է իրոք հաճուր մարդկության երեկ և այսօր, այս է նաև իրոք Մեր տիտրիկ հոտին, հայ ժողովուրդին, Հայոց Եկեղեցիին:

Մեր Մայր Հայրենիքեն ներս թե ի Սփյուռս աշխարհի, սիրելի՛ զավակներ Մեր, ապրեցե՛ք խաղաղ, սիրով միաբան մեր Ս. Եկեղեցվո օրենության ներքև, ապրեցե՛ք ձեր բարի, առատիկ ու ազգաշեն գործերով:

Դոնե եկեղեցվո կամարներուն տակ, նոգևոր կյանքի շինության համբուն, մեկ կոզմ դրեք ամեն կողմնակի նկատում կամ խմբակցական շահ: Սիրով ճմլեցե՛ք հայու սիրտը ձեր և հաղթահարեցե՛ք քենի ու ատելության դավադիր ոգին: Սուրբ էջմիածնի լույս անունը ձեր սրտին մեջ առած, ի մի հավաքվեցե՛ք մեր Ս. եկեղեցվո հովանիին ներքև ու արգիլեցե՛ք ամեն պառակտում, ամեն բաժանում, ամեն ցրվում: Հավատքի սիրո կրակով վառված, ձեր քաղցր խոսքով պարտադրեցե՛ք բոլորին խաղաղության և սիրո ոգին, միասնության և անբաժանելիության կանոնը ազգաշեն, եկեղեցվո սահմաններեն ներս, ի սեր Աստուծո և ի սեր Ազգի, և ի սեր ձեր բոլորիդ հարազատ Մայր Ս. էջմիածնի: Ս. էջմիածի՜ն, Ս. էջմիածի՜ն, «Արքա աստուածակերտ, սքանչելի, հրեղէն»:

Մեր Ազգին ու եկեղեցիին ուժը, մեր Ազգին ու եկեղեցիին շահը, Մեր Ազգին ու եկեղեցիին ապագան՝ մեր միությունն է, մեր ներքին սերը, մեր խաղաղությունը, մեր գործակցությունը Տիրոջ այգիին մեջ, Ս. Լուսավորչի Մայր Աթոռի փառքով լուսաշող:

Այս նվիրական իղձով, այս սուրբ մաղթանքներով և Ս. Ծննդյան շնորհներով զեղուն, բանա՛ք դռները նոր ժամանակներու, շինե՛ք, ծաղկեցնե՛ք մեր Ս. եկեղեցին, շինե՛ք, ծաղկեցնե՛ք ու միշտ պանծացնե՛ք քրիստոնեության օջան Ս. էջմիածինը մեր:

Միրելի՛ հավատացյալներ, անցնող տարին Մայր Աթոռիս համար եղավ իրավ որ բարի և յիսնարար տարի մը, տարի մը խաղաղ և բեղմնավոր գործունեության:

Առավել կազմակերպվեցավ ու ամրացավ հոգևոր կյանքը այստեղ և մեր ներին թեմերուն մեջ, Մայր Աթոռիս Ներսեսյան Հոգևոր Խորհուրդի վերին հսկողության ներքև: Մեր միաբանությունը իր երիտասարդ յարմերով և հնագետ աթոռ նոր ուժերով՝ մեր սիրար կլեցնել անսահման ուրախությունով: Անոնք հավատավոր են, անոնք լուսամիտ են և նվիրված սպասավորները Ս. Եկեղեցվույս ու հայրենասեր ծառաները հայ ժողովուրդին: Մեր ուրախությունն է նաև Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանը, որ այժմ ունի 50 ուսանողներ 5 դասարաններու մեջ: Վերատեսուչն է բոլորեպ սիրված Հայկազուն սրբազան եղբայրը Մեր, իր շուրջ ունենալով պատվական պաշտոնակիցներ, հմուտ ու բարեխիղճ:

Մեծ գոհունակություն է Մեզ համար, որ այս տարի մեր Հոգևոր Ճեմարանը իր դասախոսական կազմին մեջ ընդունեց հայտնի գիտնական պրոֆ. Կարո Ղափադարյանը՝ իբրև դասախոս հայ մշակույթի պատմության, համալսարանի դասախոսներ Համո Հարությունյանը՝ պատմաբան, և Վարազ Առաքելյանը՝ գրաբարագետ:

Հոգևկան մեծ և անփոխարինելի մխիթարության աղբյուր հանդիսացավ, թե՛ Մայր Աթոռին և թե՛ հավատացյալ ժողովուրդին համար, 1957-ի ընթացքին կատարած Մեր հովվապետական այցելությունները մեր ներին թեմերուն՝ Շիրակի, Մոսկվա—Նոր-Նախիջևանի, Վրաստանի և Ադրբեջանի, ինչպես նաև վերջերս՝ Արարատյան թեմին: Դժվար է խոսքերով նկարագրել ու բացատրել այն սուրբ հրճվանքի ալիքը, որ ամեն տեղ փոթորկեց մեր ժողովուրդի հոգին: Հավատքի ծարավով այրած՝ հայոց սառերը լեցվեցան հանկարծ և հորդառատ հոսքի սկսան սրբազան հոլովներ ու արդար իղձեր: Եվ եղան հեղեղ, հեղեղ՝ հոգիներեն բխող անհատնում սիրո և պաշտամունքի, դեպի հայ հոգիի տաճար, Սրբություն Սրոց Էջմիածին: Ուրախությունեն խենթեցած ձեռքեր, հազար-հազարներ, երկիրը ցույց տալով, հայ հավատքին փառքը կերգեին. Ս. Էջմիածնի տեսիլքով կախարդված:

Հարգա՜նք և օրհնությո՜ւն այս ժողովուրդին, հարգա՜նք և օրհնությո՜ւն անոր հավատքին, անոր իղձերուն, անոր գալիքին:

Մեր հովվապետական այս այցելությունները եղան նաև բարեդեպ առիթներ, որպեսզի Մենք հանդիպումներ ունենանք դրացի եղբայրական ժողովուրդներու կրոնապետներուն, ինչպես և դրացի հանրապետությանց մեծարգո նախագահներուն հետ: Այս հանդիպումները և տեսակցությունները վերածվեցան մեր եկեղեցիներու և ժողովուրդներու միջև՝ անկեղծ բարեկամության և եղբայրական սիրո արտահայտություններու և հուսով ենք Մենք, որ մոտ ապագային մեջ, դրական կերպով պիտի լուծվին մեր եկեղեցական հարցերը, բարեացակամությամբ դրացի հանրապետությանց պետական իշխանությունների՝ ի մխիթարություն հայ հավատացյալներուն:

Մայր Աթոռիս հարաբերությունները մեր արտաքին թեմերու հետ եղան բնականոն և արդյունավոր՝ հոգևոր կյանքի կազմակերպման և հառաջդիմության տեսակետեն ևս: Մեր սնպուն և սրբազան պարտքը կնկատենք մեր հոգևոր կապերը պահպանել և ամրապնդել մեր հեռավոր Արտաքին թեմերուն և մեր առաջնորդական վիճակներուն հետ: Համայն հայ հավատացյալ ժողովուրդը, առանց խտրության, հարազատ ժողովուրդն է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, երեկ և այսօր, միշտ և հավիտյան, անկախ և վեր ամեն քաղաքական, ընկերային կամ այլ կարգի նկատումներեն:

Ս. Էջմիածինը է՛ և կմնա՛ զուտ հոգևոր կյանքի կենդրոն. ազատ ու անկաշկանդ իր սուրբ առաքելության ճանապարհին վրա: Հրավեր ու հորդոր կկարդանք բոլորին, որ հետու կենան Մայր Աթոռին և անոր սուրբ գործին քաղաքական բնույթ վերագրելե, փորձելով արդարացնել որոշ քաղաքական դիրքավորում Ս. Էջմիածնի հանդեպ: Մենք գործ չունինք և չենք ալ ուզեր ունենալ քաղաքական-ընկերային վարդապետությանց հակամարտության մեջ, և կկամենանք նաև, որ մեր հոգևորականները և արտասահմանի մեր ազգային-եկեղեցական իշխանությունները մազաչափ անգամ չենառնան իրենց զուտ հոգևոր կոչումենե և նպատակներեն: Հայը ամեն տեղ բոլոր մնա հավատարիմ իր սուրբ հավատքին և հավատքի վեմ Ս. Էջմիածնին, և ըլլա պարկեշտ ու շինարար և օրինասեր Հաղթացին իր բնակած երկրին: Հայ ժողովուրդը արտասահմանի մեջ է՛ և պետք է մնա եկեղեցի-ժողովուրդ, միայն ու միայն: Սփյուռքի մեջ, արտաքո Եկեղեցվո չիք հայ ազգություն:

Ցավ է Մեզ, որ անցնող տարվան ընթացքին լուծում մը չգտնվեցավ Կիլիկյան Աթոռի ներին տագնապին, հակառակ Մեր բազում ջանքերուն և շինարար առաջարկներուն: Ավելին, այս տագնապը իր հետևանքի պատճառ ոգին տարածեց նաև Միացյալ Նահանգաց Մեր թեմերեն ներս, առավել խորացնելով հին անջատումը որոշ եկեղեցական հայրենիներու:

Անթիլիասի այդ ոտնձգությունը Մեզ համար կենսական է, հայտնի է բոլորին, որ խոսքն Ճշմարիտ սրտերը հայոց և Մեր զավակները, ազատ արձակված խորհրդակցություններ կամ թյուր մտքեր, դառնաբերաբար դեպի իրենց հոգիներու խորանը Ս. Էջմիածինը, որ անհուն կարոտով և անխառն սիրով իր մայրական թևերը բացած՝ կսպասե արքուն:

1957 թվականը եղավ Մեզ համար շինարար տարի մը, նաև նյութական իմաստով: Շարունակվեցան ծրագրված շինարարական մեր աշխատանքները և կենսագործվեցան ավելի քան 70 տոկոսով: Արդեն լրիվ կերպով մարմարապատված են Մայր Տաճարի դասերը, ատյանը և երկու աբսիդները: Մասնակի վերանորոգումներ կատարված են Երեմիայի, Սինոդի և Հռիփսիմեի բնակելի շենքերու, ինչպես նաև Երևանի երեք եկեղեցիներու վրա: Ամբողջապես վերանորոգված է Թջնիի պատմական հուշարձան-եկեղեցին՝ Լոնդոնի բարեպաշտ հայ գաղութի նվերներով և գովելի աշխատանքով անտվածասեր տիկնանց հանձնախումբին:

Այս բոլորի համար ծախսված է ընդամենը 1 400 000 ռուբլի, ընթացիկ բյուջեն դուրս անշուշտ:

1958-ի համար նախատեսված են հետևյալ աշխատանքները.

ա) Շարունակել և վերջացնել Ս. Էջմիածնի մեծ պարսպի կառուցումը, սրբատաշ տուֆ քարով, շուրջ 1 000 մետր երկարությամբ և 5 մետր բարձրությամբ:

բ) կառուցել Մայր Տաճարի նոր Ավագ Սեղանը իտալական մարմարով, արվեստագետ-ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի նախագծերով:

գ) Մարմարապատել հայկական մարմարով Ս. Սեղանի բեմը, աստիճանները և Տաճարի երկու խորանները:

դ) Վերակառուցել Մայր Տաճարի ճարավային փլած գմբեթը:

ե) Հիմնապես վերանորոգել տպարանի շենքը, նոր Վեհարանը և մեկ հարկով բարձրացնել Հոգևոր Ճեմարանի շենքը:

զ) Հյուսիսային մեծ մուտքին վրա կառուցել հատուկ աշտարակ մը, մոտ 20 մետր բարձրությամբ, որուն վրա պիտի գետեղվի երեքհարկանի աշտարակային մեծ ժամացույցը, զոր Մայր Արոռս Բ-ին ստացավ բոլոր հայերու բեմի կողմե:

Ծրագրած ենք նաև ամբողջապես վերանորոգել ու բարեգարդել է դարու ճարտարապետական գլուխ-գործոց Ս. Հռիփսիմեի տաճարը և Օշականի ու Ս. Շողակարի եկեղեցիները, առատաձեռն նվիրատվությամբը արտասահմանի եկեղեցասեր ազգայիններու, որոնց անունները սրբությամբ պիտի հիշվին միշտ մեր աղոթքներուն մեջ այստեղ: Իսկ երկրորդ Տերը կամենա, վերանորոգման աշխատանքներ կուգենք կատարել նաև Ս. Խոր Վիրապի, Ս. Գեղարդի և Գալարագյաղի Ս. Հաչ վանքերուն վրա:

1958-ի շինարարական մեր աշխատանքներու արժեքը կհասնի ավելի քան չորս միլիոն ռուբլիի: Ապահով ենք, թե Մեր այս ծրագրերը պիտի կենսագործվին Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությանն հատկացումներով, համաձայն մեծանուն ազգային բարերարի կտակի տրամադրությանց:

Մայր Արոռիս տարեկան ընթացիկ բյուջեն, որուն մեջ չեն մտներ շինարարական վերոհիշյալ ծախսերը, կհասնի մոտ երկու և կես միլիոն ռուբլի գումարի, որուն դեմ ունինք մոտ երկու միլիոն ռուբլի եկամուտ Մայր Տաճարեն և մեր ներքին ինգ բեմերեն: Մնացած գումարը, շուրջ 600 000 ռուբլի, Հոգևոր Ճեմարանի ծախսը, կսպասենք, որ հոգան մեր արտասահմանի բեմերը, բնական հատկացումներով կամ անհատական նվիրատվություններով:

Ուշացավ սրբազան նկարչության աշխատանքի բացումը: Կատարված են սակայն նախապատրաստություններ և մեր նկարիչներու շարքին վրա ավելանալով արտասահմանեն հայ նկարիչ մը, հուսով ենք, թե այս ամառն անոնք կսկսին առաջին փորձերը կատարել էջմիածին քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցիին վրա, և ապա կնկարազարդեն Օշականի սուրբ եկեղեցին: Մեր նկարիչներուն մեծապես օգտակար պիտի բլլան, Մեր կարծիքով, վերջերս հայտնաբերված որմանկարները Տաթևի և այլ վանքերու, որոնք հայկականության դրոշմը կկրեն, զանազանվելով թե՛ բյուզանդականեն, թե՛ պարսկականեն:

Սիրելի՛ ժողովուրդ, Մայր Արոռի փառավոր օրերեն մեկը պիտի բլլա այն օրը, երբ շարժիլ սկսին մեքենաները մեր նոր տպարանին, որուն պատվերը տրված է արդեն ամերիկահայ հավատացյալներու ստաբուխ նվիրատվություններով և զովելի նախաձեռնությամբը Ս. Էջմիածնի տպարանի հանձնաժողովին ու աշխատանքովը մանավանդ անոր հավատավոր ու խանդավառ նախագահին: Այս տպարանը նոր ուժ և նոր թափ պիտի տա մեր ժողովուրդի հոգևոր շինության գործին և նոր համբա պիտի բանա միշտ հաղթող Քրիստոսի Ս. Ավետարանին:

Այսպես անցավ, աշխատանքի տարի մը իր վախճանին հասավ, և աշխատանքի նոր տարի մը իր սկիզբը կառնե, Ս. Ծննդյան և Աստվածահայտնության շնորհներով զեղուն:

Ամեն աշխատաւոր բարի գործ մրն է, և հաճո Աստուծոյ: Ամեն կառուցում ու ստեղծագործություն ամրապնդում մրն է՝ «խաղաղության և ի մարդիկ հաճության» երկնային պատգամին:

Շինարար աշխատանքի մեջ է նշմարիտ ու մնայուն հաղթանակը մարդուն և ժողովուրդներուն:

Մեր Ս. եկեղեցին և ամբողջ հայ ժողովուրդը կուզեն խաղաղ ապրիլ, որպեսզի շինեն ու ստեղծագործեն մեր մեծ Հայրենիքի և ամբողջ աշխարհի խաղաղաւոր ու մարդասեր ազգերու կողքին:

«Երեւանի խաղաղաբարաց, դի նոմա որդիք Աստուծոյ կոչեսցին»:

Մեր Փրկչին Հիսուսի Քրիստոսի Մենդյան տոնին առիթով, կողջունենք զձեզ, սիրելյայ հավատացյալներ մեր, մաղթելով բոլորիդ նոր տարի մը բարի, խաղաղ օրերով ու ձեր սուրբ իղձերու լիակատար կենսագործումով:

Ս. Մենդյան շնորհները թող առատապես իջնեն ձեր վրա, լույս տան ձեր ճամբուն, միայն տան ձեր մտքին, և ձեր սրտերուն՝ սիրո ջերմություն և խաղաղության ոգի:

Միածնակիր այս Ս. Անդանենն, մեր հարազատ այս Մայր Աթոռն՝ սրտարուխ օրհնություն հայրապետական ձեզ բոլորիդ, սիրելի՝ զավակներ Մեր. խաղաղությամբ, խաղաղությամբ: Ամեն»:

Վեհափառ Հայրապետի Ս. Մենդյան տոնի առթիվ խոսած այս գեղեցիկ քարոզը նույն դիշեր հայորդվեց Երևանի ռադիոյից:

Հավարտ սուրբ պատարագի, մեծահանդես կատարվում է «Քրօրհնէքս»-ը, Վեհափառ Հայրապետի հանգիստարանությամբ: Հավատացյալները մեծ ուրախությամբ շրջերի մեջ տուն են տանում օրհնված ջուրը. «Առէք ջուր ուրախութեան յաղբերացն փրկութեան» (Եսայի ԺԲ 3):

Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարանի Մատենադարանը, ուր բեղունում է Ս. Մենդյան տոնի առթիվ տպագրված շնորհավորությունները Մայր Աթոռի միաբանության, Գերագույն Հոգևոր Խորհրդի և ժողովրդի: Վեհափառ Հայրապետը որդեում է բոլորին, շնորհավորում հայ ժողովրդի Ս. Մենդյան տոնը, բարեմաղթություններ անում Մայր Հայրենիքի և ամբողջ աշխարհի խաղաղության համար:

Ժամը 4-ին, Վեհարանի սենյակներում մեջ, տրվում է ճաշկերույթ Ս. Մենդյան տոնի առթիվ:

Ընդունելության ներկա էին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, ճարտարապետներ Մ. Մազմանյանը, Ռաֆայել Իսրայելյանը, Վարազդատ Հարությունյանը, ինժեներ Ա. Մատինյանը, Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը և ուխտավորներ Կալիֆոռնիայից ու Ռումինիայից:

Առաջարկվում են սրտագին բաժակներ Վեհափառ Հայրապետի, Հայրենի կառավարության և հայ ժողովրդի կենացը:

Հուզիչ և գեղեցիկ ճառերով Վեհափառ Հայրապետի տոնը շնորհավորում են գեղաշնորհ՝ Տ. Հայկազուն Եպիսկոպոս Աբրահամյանը, պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանը, ճարտարապետ Ս. Մազմանյանը, Կալիֆոռնիայից ուխտավորաբար Մայր Հայրենիք եկած տիկին Շուշանիկ Իսահակյանը, Մայր Աթոռի դիվանապետ պր. Հ. Առաքելյանը և ուրիշներ:

Ընդունելությունն անցավ ջերմ ու խանդավառ մթնոլորտում:

Ճաշկերույթը վերջացավ Վեհափառ Հայրապետի Տերունական աղոթքով:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հունվարի 2-ին, հինգշաբթի, երեկոյան ժամը 8-ին, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Հայ Եկեղեցու գործերի խորհրդի անունից, նոր տարվա առթիվ Երևանում կազմակերպել էր պաշտոնական ընդունելություն։

Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տ. Հովհաննիսյանը, Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Արբահամյանը, փոխ-լուսարարապետ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը, Հոգևոր Ճեմարանի փոխ-տեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը, Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական կառավարչության պետ՝ պր. Հ. Սեդրաբյանը, Մայր Աթոռի դիվանապետ պր. Հ. Առաքելյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր պր. Ա. Հատիտյանը։

Հրավիրյալների թվում էին Երևանի քաղաքային Սովետի գործադիր կոմիտեի նախագահ պր. Գ. Փահլևանյանը, Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը, խորհրդի անդամ, պատմական գիտությունների դոկտ.-պրոֆ. Բ. Առաքելյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանը, Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության փոխ-նախագահ պր. Մ. Բաբլոյանը, «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագիր պր. Պ. Սելյանը և այլ հրավիրյալներ։

Ամանորի սեղանների շուրջ ստեղծվում է ջերմ և սրտագին մթնոլորտ։ Սեղանը ղեկավարում է Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը։ Առաջարկվում են սրտագին կենացներ՝ Հայրենի կառավարության է՛լ ավելի հզորության և հայ շինարար ժողովրդի պայծառ ապագայի, Ս. Էջմիածնի պայծառության և Վեհափառ Հայրապետի թանկագին կենաց արևշատության համար։

Ընդունելության ժամանակ խանդավառ, հուզիչ ու հայրենասիրական ջերմ խոսքեր են ասում Վեհափառ Հայրապետը, պր. Ս. Գասպարյանը, պր. Գ. Փահլևանյանը, պր. Ս. Հովհաննիսյանը, պրոֆ.-դոկտ. Բ. Առաքելյանը, պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանը, պր. Պ. Սելյանը, պր. Հ. Սեդրաբյանը, պր. Հ. Առաքելյանը և պր. Ա. Հատիտյանը։

Ընդունելությունն անցնում է խանդավառ ու սրտագին մթնոլորտում։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՆ, ՁՈՐԵՔՇԱԲԹԻ, Կաղանդ և տարեմուտ 1958 թվականի։

Նոր տարվա տոնի կապակցությամբ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյանը։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Սուրբ պատարագից հետո նոր տարվա տոնի առիթով Վեհափառ Հայրապետը ընդունեց միաբանության, պաշտոնեության, Հոգևոր Ճեմարանի ուսանողության և պաշտոնական անձնավորությունների շնորհավորությունները։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 5-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Ճրագալույց Մենդեան և Աստուածայայտնության Քրիստոսի»։

Երեկոյան ժամերգության ժամանակ Մայր Տաճարում Հոգևոր Ճեմարանի ուսանողները ընթերցեցին Դանիելի գիրքը։

Օրվա տոնի առիթով պատարագեց և քարոզեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը՝ «Որդիք մարդկան, օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ» շարականի բնաբանի վրա, ծանրանալով Քրիստոսի մարդեղության մեծ խորհրդի վրա, մարդկանց փրկագործության համար։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց նախատոնակ, հանդիսավոր ու ցնծագին հնչեց «Խորհուրդ մեծ և սքանչելի» Մենդյան շարականը՝ հոգիները լցնելով տրախ ավետիքով։

Ճրագալույցի արարողությանց նախագահում էր Վեհափառ Հայրապետը։

Հավարտ սուրբ պատարագի և նախատոնակի, Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով և շարականով, ուղեկցորդվեց վանական սեղանատուն և բարեհաճեց սեղանակից լինել միաբանության և ուսանողության Ս. Մենդյան ավանդական ճաշին։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 7-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, «Յիշատակ մեռելոց»։

Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մաշտոց արեղա Թաքիրյանը։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ ի հիշատակ մեռելոց։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 10-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Հոգևոր Ճեմարանում վերսկսվեցին դասավանդությունները Ս. Մենդյան արձակուրդից հետո։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 12-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց Մայր Աթոռի փոխ-լուսարարարապետ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը՝ «Զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է օծեալ Տէր ի քաղաքի Դաւթի» բնաբանով (Ղուկ. Բ 11)։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 13-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 14-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, «Տօն ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին»։

Օրվա մեծ սրբի տոնի առիթով Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։

❊❊❊

ՀՈՒՆՎԱՐԻ 16-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց դահլիճում բանախոսեց Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտի տնօրեն, անվանի գիտնական պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանը՝ «Լեզվի ծագումը» թեմայի շուրջ։

Դասախոսության ներկա էին ամբողջ միաբանությունը, Ճեմարանի ուսանողությունը և վանքի պաշտոնեությունը։

Հարգելի գիտնականը մոտ մեկ ժամ տևող իր շատ շահեկան բանախոսության մեջ հատկապես կանգ առավ հայոց լեզվի՝ որպես հնդեվրոպական մի առանձին և անկախ ճյուղի պատմության վրա։ Բանախոսության վերջում պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանը սիրով պատասխանեց ունկնդիրների՝ դասախոսության հետ կապված մի շարք լեզվաբանական հարցերին։ Դասախոսությունը լսվեց մեծ հետաքրքրությամբ։

Դասախոսության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

❊❊❊

ՀՈՒՆՎԱՐԻ 19-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։

«Հայր մեր»-ի ժամանակ Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը պաշտոնապես կարդաց ի բուր ժողովրդյան Վեհափառ Հայրապետի 1957 թվականի դեկտեմբերի 20 թվակիր հայրապետական սրբատառ կոնդակը՝ դրված Անթիլիասի ոտնձգությանց առթիվ։ Սրբազանը ապա քարոզեց՝ բացատրելով հայրապետական կոնդակի պատմական նշանակությունը։

Մայր Տաճարում հավաքված հավատացյալների բազմությունը խորունկ ուշադրությամբ և հուզումով լսում էր հայրապետական կոնդակի յուրաքանչյուր տողը և միտքը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Այսօր, Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումով, մեր ներքին թեմերի բոլոր եկեղեցիներում ևս հանդիսավորապես կարդացվեց Վեհափառ Հայրապետի դեկտեմբերի 20 թվակիր սրբատառ կոնդակը՝ Անթիլիասի ոտնձգությանց մասին։

❊❊❊

ՀՈՒՆՎԱՐԻ 23-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանում, երեկոյան ժամը 4-ին, իր երկրորդ բանախոսությունը կարդաց պրոֆ.-դոկտ Ա. Ղարիբյանը՝ «Հայոց լեզվի բառակազմությունը և հիմնական բառային ֆոնդը» շատ հետաքրքիր և շահեկան թեմայի շուրջ, որը բոլոր ներկաների կողմից լսվեց հարաճուն հետաքրքրությամբ։

❊❊❊

ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց Հոգևոր Ճեմարանի փոխ-տեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը՝ «Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամս բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։



ՆՈՐ ՏԱՐԻՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 31-ն է, երեքշաբթի։

Հոգևոր Ճեմարանում վերջացել են առաջին կիսամյակի քննությունները գոհացուցիչ արդյունքներով և ուսանողությունը, ուրախ տրամադրության մեջ, պատրաստվում է երեկոյան ճանապարհելու 1957 թվականը և սրտագին հույզերով ու հույսերով դիմավորելու նոր տարին՝ 1958 թվականը։

Հոգևոր Ճեմարանում ուրախ են բոլորը՝ տեսչական ու դասախոսական կազմը, ամբողջ ուսանողությունը, իրենց պարտքը կատարած մարդկանց գոհունակությամբ և արդար խղճմտանքով։ Ամեն կողմ եռուզեռ է, տոնական բարձր տրամադրություն։

Անցնում է օրը արագ, նոր տարվա հանդիսության նախապատրաստական աշխատանքներով։

Երեկո է արդեն, ժամը 8։

Որոշյալ ժամին Հոգևոր Ճեմարան է գալիս Վեհափառ Հայրապետը, շրջապատված Գերագույն Հոգևոր Խորհրդի և միաբանության անդամներով, Մայր Աթոռի պաշտոնեությամբ։

Սեղանների շուրջ տեղ գրված Ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և հատուկ հրավիրյալներ սրտագին բացականչություններով և ջերմ ծափերով են դիմավորում իրենց սիրելի Հորը՝ Վեհափառ Հայրապետին։

Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը առաջին բաժակը առաջարկում է խմել Վեհափառ Հայրապետի թանկագին կենացը՝ արնշաությունի անկեղծ ու սրտագին բարեմաղթություններով։

Ամբողջ դահլիճը հոտնկայս բաժակ է բարձրացնում Վեհափառ Հայրապետի կենացը, ծափողջույնների զվարթ հնչյունների տակ։ Ապա ամբողջ դահլիճով մեկ, հանդիսավոր ու վեհ, թնդում է Մայր Աթոռի հոգևոր հիմնը՝ «Էջ Միածին ի Հօրէ» շարականը։

Խոսք է առնում Հոգևոր Ճեմարանի փոխտեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը և Ճեմարանի անունից շնորհավորում է Գերագույն Հոգևոր Խորհրդի, Մայր Աթոռի միաբանության, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի, վանքի պաշտոնեության և ապա բոլոր ներկաների նոր տարին։ Բարեշնորհ Խորեն սարկավագը երգում է Կոմիտաս վարդապետի կալերգը, իսկ Կարապետ սարկավագը՝ «Կանչե կոմնկ»-ը։ Վարդան սարկավագը կարդում է իր ինքնագիր մեկ բանաստեղծությունը՝ նոր տարվա առիթով գրված և կրոնաբույր խոհերով հագեցված։

Ճեմարանի Գ դասարանի ուսանող Կարապետ Սուքիասյանը կարդում է հետևյալ հուզիչ ուղերձը.

«Վեհափառ Տե՛ր.

Խորհրդավոր երեկո, տուր անցյալը և ներկան զոդվում են իրար, և ես օգտագործելով այս վայրկյանը, Հոգևոր Ճեմարանի ուսանողության անունից սրտագին պարտք եմ զգում 1957 թվականի մայրամուտին և 1958 թվականի արշալույսի դիմաց շնորհավորելու Ձերդ Վեհափառությանը։

Դուք, որպես բարերարը Ճեմարանի և մեր Հոգևոր Հայրը, միշտ էլ մտահոգվել եք Ճեմարանով։ Այս մասին են վկայում Ձեր կողմից Ճեմարանին ի նպաստ Ձեր կատարած բազմաթիվ հոգևոր աշխատանքները, սկսած Ձեր մանկավարժական-դաստիարակչական գործից։ Ձերդ Վեհափառության հայրական հոգատարության շնորհիվ է, որ այսօր Հոգևոր Ճեմարանը ունի իր գուրգուրող, խրատող և խրախուսող տեսուչը, հանձին գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազան հոր։ Ձերդ Վեհափառության շնորհիվ է, որ այսօր Ճեմարանում դասախոսում են իրենց գործին հմուտ դասախոսներ։ Սա փոքր առավելություն չէ. ուսուցիչը որքան կատարյալ է, այնքան վեհ կլինի աշակերտի ձգտումը։

Ձերդ Վեհափառության կողմից ցույց տրված անսահման հոգատարության, խնամքի շնորհիվ է, որ Հոգևոր Ճեմարանը օրեցօր, ժամ առ ժամ առաջադիմում է։ Մի՞թե այդ մասին չի վկայում շորս ամսվա ընթացքում տասներկու դպիրների և վեց սարկավագների ձեռնադրությունը։ Մեզանից ո՞ր մեկը չի վկայի Ճեմարանում ուսման և դաստիարակության վերելքի մասին։

Արտահայտելով Հոգևոր Ճեմարանի ողջ ուսանողության որդիական սերն ու երախտագիտությունը, օգտվում եմ այս երջանիկ առիթից՝ Ձերդ Վեհափառությանը մաղթելու արեշատություն, թո՛ղ Տերը պահի Ձեր հովանին ողջ հարության վրա։

Այո՛, ես էլ հանգուցյալ Վարպետի պես պիտի ասեմ. «Երանի՜ թե հազար ու մի կյանք ունենամ, հազարն էլ սրտանց Ձեզ նվիրեմ ու միայն մեկով երգեմ» ե՛րգը վիրելքի, ե՛րգը վերածնունդի՝ Մայր Աթոռի և Հոգևոր Ճեմարանի, վերածնունդ, որը տեղի է ունենում Աստուծո նախախնամության և Ձերդ վեհափառության տքնաջան աշխատանքի շնորհիվ, վերածնունդ, որ օրդին է խաղաղության, խաղաղություն, որդեգրված ժողովուրդների կողմից, պաշտպանված մեր մեծ ժողովրդապետության միջոցով։ Անկեղծ հարգանք, շնորհակալություն և անսասանություն մեր հանրապետության, որն ապահովում է ժողովուրդների խաղաղությունն ու վերածնունդը։

Երախտագիտություն եմ հայտնում նաև մեր բոլոր հարազատ միարան հայրերին ու եղբայրներին և մեր մեծարգո դասախոսներին, որոնք ձեռք-ձեռքի տված մեզ տանում են վեր, դեպի վեր, դեպի անհաս բարձունքը դիտության։

Առաջիկա տարին, որ քիչ հետո թևակոխելու ենք, թող լինի մեր բոլորի համար խաղաղության և արդյունավետ գործունեության տարի։ Մենք մեր ամբողջ հոգով ցանկանում ենք և տքնում, որ դառնանք իսկական ուսանողները այս հոգևոր հաստատության, որպեսզի հոմպետս չվատնվեն մեր վրա թափված բոլոր ջանքերը։ Թեև պատանիներ ենք տակավին, բայց ունենք կամք և կորով և հուսով ենք, որ կկարողանանք դրանք գործածել ի բարին, որի հաջողությունը կթողնենք Տիրոջ, որ «այաղոդէ զամենայն յամենայնի»։

Վեհափառ Տե՛ր.

Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը, որի զգացումների թարգմանը այս պահին թոթովում է Ձերդ Վեհափառության առաջ, խնդրում է Ձեզ, որ օրհնեք մեզ մեր կոչման մեջ, բռնեք մեր ձեռքերից և բարձրացնեք վեր. վե՛ր մինչև Աստուծո Ս. Սեղանը։

Այս հանդիսավոր պահին, թույլ տվեք, որ ի դեմս իմ ուսանող եղբայրների, մատչիմ ի համբույր Ձերդ Սուրբ և օծյալ Աջույն և հայցեմ Ձեր հայրական օրհնությունը»։

Ընդունելության ժամանակ ջերմ ու հուպիշ ելույթներ են ունենում Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Վարդան սրբազանները, հոգեշնորհ Տ. Վահան և Տ. Եղիշե վարդապետները, Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական կառավարչության պետ պր. Հմայակ Սեդգարյանը, Ճեմարանի դասախոս Վարագ Առաքելյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր պր. Ա. Հատիտյանը և ուրիշներ։

Բարեշնորհ Պետրոս սարկավագը երգում է Ռ. Մելիքյանի «Վարդը», իսկ Բ դասարանի ուսանող Ազատ Տերտերյանը՝ «Մայր Արաքսիս»-ն։ Ապա Խորեն սարկավագը կարդում է հետևյալ գեղեցիկ ուղերձը.

«Շնորհազարդ և աստվածարյալ Ս. Հայրապետ.

Թույլ տվեք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սարկավագների անունից սրտագին շնորհավորել Ձերդ Ս. Օծության նոր տարին։

Այսօր մարդկության կյանքից պատմության գիրկն է անցնում ևս մեկ տարի։

Երրորդ անգամն է, որ հաջորդաբար վայելում ենք Ձերդ Վեհափառության ամենաթանկագին ներկայությունը ավանդական այս գեղեցիկ սեղանի շուրջը։

Ամանորի ավանդական այսպիսի ճոխ սեղանների շուրջ են համախմբված աշխարհի բոլոր անկյուններում գտնվող ժողովուրդները, քրիստոնյա և ոչ քրիստոնյա, և այս սրբազան պահին, ավելի վառ և սրտառուչ հույսերով ու լավատեսությամբ, թևակոխում են նոր՝ 1958 տարեթիվը։

Իսկ հայ ժողովրդի համար առավել ևս բոլորվեց հավատով, հույսով, աշխատանքով և գիտական նորանոր նվաճումներով հարուստ և արդյունաշատ մի տարի։

Հայ ժողովուրդը, իր վերածնված և ծաղկած Հայրենիքի մեջ, արդար հպարտությամբ, խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի, մշակույթի, տնտեսության անընդհատ աճման պայմաններում, դիմավորում է 1958 տարին։

Անցնող ամեն մի տարի գոհունակությամբ, հայրենասիրությամբ է լցնում յուրաքանչյուր հայու սիրտը։

1958 թվականն է արդեն, մարդկային կյանքի մատյանում այսօր ավելանում է մի սպիտակ էջ ևս։

Վեհափառ Տե՛ր.

Մեզանից յուրաքանչյուրը քաջ գիտակցում է, որ այսօր մենք կանգնած ենք նոր կյանքի, նոր գործունեության առաջ, որը մեղանից պահանջում է ավելի ևս ուժերի լարում, կորով, սեր դեպի մեր նվիրական ու սրբազան գործը։

Մայր Աթոռը իր ամբողջ միաբանությամբ, Հոգևոր Ճեմարանով և ընդհանուր պաշտոնեությամբ համախմբված է Ձերդ Վեհափառության շուրջը, իբրև մի նահապետական ընտանիքի զավակներ՝ դիմավորելու համար 1958 տարին։

Վեհափառ Տե՛ր.

Մենք լիահույս ենք, որ մոտ ապագայում Ձերդ Վեհափառության իմաստուն և հեռատես գործունեության շնորհիվ, պիտի փարատվի հայ եկեղեցական կյանքի մեջ գոյություն ունեցող ժամանակավոր աղճատը և Հայ Եկեղեցին պիտի շարունակի իր պայծառ գործը, իր հրաշալի վերածնունդը, իր պատմական առաքելությանը լավագույն կերպով ծառայելու համար, ի մխիթարություն բովանդակ հայ ժողովրդի։

Այս գիտակցությունն է մեզ՝ Մայր Աթոռի սարկավագներիս գոտեպնդում, մեր կարողությունները բոլորանվեր կերպով Հայ Եկեղեցուն ընծայաբերելու։

Մաղթում ենք և բովանդակ հոգով աղոթում, որ ամենարարձրյալ Տերը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն պարգևի պայծառություն և կուռ միություն։

Թո՛ղ 1958 տարին լինի մեր Եկեղեցու համար հոգևոր զարթոնքի տարի։

Թո՛ղ էլ ավելի ուռճանան և ծաղկեն հայի վերածնված Մայր Հայրենիքը, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին և ամենայն հայոց նվիրական, քրիստոսահիմն Մայր Աթոռը և Հայրապետությունը։

Քաղցր պարտականություն է նաև մեզ համար՝ սրտագին շնորհավորել Գերապայծառ Հոգևոր Խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի, Մայր Աթոռի ամբողջ միաբանության, Հոգևոր Ճեմարանի տեսչական և գաստախոսական կազմի և Մայր Աթոռի ընդհանուր պաշտոնեության նոր տարին, լավագույն բարեմաղթություններով։

Շնորհավոր նոր տարի, Վեհափառ Հայրապետ։

Ձեզ երկար կյանք և արեշատություն։

Ամանորի սեղանների շուրջ ստեղծված ուրախությունը խորանում էր գիշերվա ժամերի հետ միասին, որոնք անցնում էին սրաթև, բայց բովանդակալից և հաճելի։

Բարեշնորհ Հակոբ սարկավագ Պողոսյանը ապրումով երգեց «Ինչկիր, անդին երկիրդ»-ը։

Ընդհանուր խանդավառության և ծափերի տակ խոսք առավ Վեհափառ Հայրապետը, փիլիսոփայորեն վերլուծելով «ժամանակ» հասկացողությունը և հայրական իմաստաշատ խրատական խոսքեց միաբանության և ուսանողության, նոր տարվա առթիվ սրբատաղին թելադրություններ արեց՝ ճանաչելու ժամանակի արժեքը ժամանակի մեջ՝ հոգևոր և իմացական աճելու և վերանորոգվելու համար, լավագույնս ծառայելու համար Մայր Աթոռին, հայ ժողովրդին և Հայրենիքին։ Վեհափառ Հայրապետի նոր տարվա պատգամը, կաղանդի գիշերվա խոհերով ներշնչված, հավատով և լավատեսությամբ լիրվացած, խանդավառ ու համոզիչ շեշտով արտասանված, խորապես տպավորվեց բոլոր ներկաների սրտերում և գոտեպնդեց ամենքին՝ եպիսկոպոս, վարդապետ, սարգավագ թե ուսանող, գաստախոս կամ պաշտոնյա՝ ձեռքի տված աշխատելու հոգուտ Մայր Աթոռի, ի պայծառություն Հայ Եկեղեցու և ի մխիթարություն հայ ժողովրդի։

Ապա մի պահ հանգան դահլիճի պայծառ լույսերը։ Մթության մեջ լսվեց Հակոբ և Պետրոս սարկավագների երգը՝ «Լուսե գիշեր, սուրբ գիշեր»-ը, որ խորապես հուզեց բոլոր ներկաների սրտերը Մենդյան գիշերվա սուրբ խորհրդով։

Վեհափառ Հայրապետը նոր տարին՝ 1958 թվականը դիմավորեց Հոգևոր Ճեմարանում, շրջապատված իր միաբաններով, բազմած ամանորի նույն սեղանների շուրջ։

Ուշ գիշերին, Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով, վերջացավ նոր տարվա առթիվ կազմակերպված ընդունելությունը Հոգևոր Ճեմարանում։

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ՆԱԶԱՐԵԹ ԵԿԵՂԵՑՈՒ 250-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Արտահայաստանի մեր ժողովրդի գոյության դարավոր և հիմնական ազդակը հանդիսացեր է Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցին, որուն հայությունը կապված է անքակտելի զգացումներով։ Հոն, ուր հայը լսեր է հայ քահանային «Հայր մեր»-ը, հոն, ուր հայու հոգիին մեջ հնչեր է Հայաստանյայց եկեղեցվո զանգակներուն աղոթահունչ ղողանջը, հոն, ուր հայը ներծծեր է խունկի անուշաբույր ծուխը, կարողացեր է պահել իր ազգային ինքնուրույնությունը, հետևաբար և համաքական գոյությունը իբրև այդպիսին։ Այդ է պատճառը, որ հայ ժողովուրդը քաղաքական, տնտեսական, ընկերային ամենադժվար պայմաններու մեջ իսկ, ի դին նյութական և բարոյական մեծ զոհություններու, շիներ է իր ազգային եկեղեցին՝ իր հոգեկան պահանջքներուն գոհացում տալու և իր ազգայինությունը պահպանելու համար։ Տառապանքներուն ամենեն դառնը ճաշակած հայ ժողովրդին համար «Եկեղեցին Հայկական նավահանգիստ մ'է խաղաղ, հեռու նախանձի և քինախնդրության հոսանքներեն. անոր գրկին մեջ հայը ինքզինք կզգա շատ մոտ Աստուծու։

***

Այս տարի վերջացավ Կալկաթայի հայոց Ս. Նազարեթ եկեղեցվո հիմնադրության 250-ամյակը։ Ամբողջ երկու և կես դար այս մեծ հաստատությունը հոգևոր սնունդ է մատակարարեր Կալկաթայի հայությանն։

Ս. Նազարեթ եկեղեցին Կալկաթայի քրիստոնեական առաջին եկեղեցին է, կառուցված 1707-ին և կենկատվի ամենահարուստ համայնքային եկեղեցին ամբողջ Արևելքի մեջ։ Հայ ժողովրդին պատիվ բերող բարեսիրական մեծ հաստատություն մըն է այս, որուն նյութական օժանդակության շնորհիվ, ամբողջ 136 տարիներ, առանց ընդհատման կանգուն է մնացեր Կալկաթայի հայոց Մարդասիրական Ճեմարանը, որուն դրասեղաններուն առջև դաստիարակվեր են հազարավոր հայ պատանիներ անցյալին մեջ և տակավին կդաստիարակվին այսօր։

Այժմ եկեղեցվո ամսական 25 000 ռուպիի հասնող եկամուտին մեկ մասը կհատկացվի կալկաթահայ չքավորներու, իսկ մնացյալը՝ Մարդասիրական Ճեմարանին և այլ բարեսիրական նպատակներու համար։

Ս. Նազարեթ եկեղեցին իր ամբողջ հարստությունը կպարտի այն ազնվահոգի, վեհանձն ու եկեղեցասեր մեծահարուստներուն, որոնք իրենց կենդանության ժամանակ ամբողջ իրենց աշխատանքը ու հետմահու բոլոր իրենց հարստությունը տրամադրեր են՝ նյութապես ու բարոյապես զորացնելու համար կրոնական այս հաստատությունը։

Թեև պայմանները փոխված են այսօր, սակայն Կալկաթայի հայության զգացումը մնացած է անփոփոխ հանդեպ իր դարավոր եկեղեցիին։ Կուսակցական վեճերն ու կռիվներն հեռու՝ այս հեռավոր քաղաքի հայ բնակչության կարևոր մեկ մասը ամեն կի-

ռակի կփութա դեպի իր սուրբ տաճարը, կղողանչեն զանգակները Հայ Եկեղեցվո ու պատարագի քառաձայն երգեցողությունը կհնչե հավատացյալներու հոգիին մեջ։ Նախանձելի հայ գաղութ... Միջին Արևելքի ազգային-եկեղեցական կյանքի անհաճելի մթնոլորտեն եկած անձ մը ըլլալով, իսկապես կնախանձիմ այս փոքր գաղութի համերաշխ կյանքին։

հոգիներուն խաղաղության համար։ Պատարագիչն էր Տ. Պողոս քահանա Պետրոսյան։

Եկեղեցվո հիմնադրության պաշտոնական տոնակատարությունը տեղի ունեցավ նույն օրը, կեսօրեն հետ ժամը 4-ին։ Եկեղեցական արարողություններուն ներկա գտնվեցան Բենգալյան նահանգի կառավարչուհի Նորին Վսեմափայլություն օրիորդ Պաղմաչա Նայդու, տարբեր հարանվանությանց պատկա-



ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ Ս. ՆԱԶԱՐԵԹ ԵԿԵՂԵՑԻՆ

Տեղին է այստեղ ճշտել, որ Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցվո պատվաբեր դիրքը նույնիսկ հաշս օտարներու, կպարտինք ժողովրդի բոլոր խավերու ունեցած համագործակցության և իրարհասկացողության՝ եկեղեցականներու և եկեղեցվո վարչության հետ։ Ամբողջությամբ Կալկաթայի հայությունը կապված է Ս. Էջմիածնին և անոր արժանընտիր Գահակալին՝ ամենախորունկ կապերով։

***

Կիրակի, 1957 թվականի նոյեմբեր 24-ին, շքեղ կերպով տոնախմբվեցավ Կալկաթայի Հայոց Ս. Նազարեթ եկեղեցվո հիմնադրության 250-ամյակը։

Առավոտյան, հավարտ սուրբ պատարագի, հոգեհանգստյան պաշտոն կատարվեցավ եկեղեցվո հանգուցյալ բարերարներուն

Դպրաց դասը հաջորդաբար երգեց «Սուրբ Սուրբ»-ը, «Մարմին Տէրունական»-ը, «Ամէն։ Հայր Սուրբ»-ը, «Հայր մեր»-ը և «Էջ Միածին ի Հօրէ»-ն։ Առաջին չորսը երգվեցան քառաձայն, ղեկավարությամբ դպրապետուհի օրիորդ Վիվիէն Այեքսյանի։ Մեծ բարձրաստիճան եկեղեցականներ, պետական անձնավորություններ և տարբեր երկրներու պետական ներկայացուցիչներ։

Արարողությունները սկսան «Ուրախ լեր» շարականով, զոր երգեց Ճեմարանի շրջանավարտներեն տաղանդավոր մենակատար, երիտասարդ Այքերտ Խաչեսարյան, որուն հնչեղ ձայնին քաղցր ելևէջները հուզումով լեցուցին ներկաներու սրտերը։ Երգչին կընկերակցեր հրգեհոնի վրա դպրաց դասի ղեկավար, դաշնակահարուհի օրիորդ Վիվիեն Այեքսյան, որուն կպարտինք երգեցողության հաջողությունը։

ներգի բաժինները մեծ հաջողությամբ կատարեցին տիկին Ջոյս Գրիգորյան, օրիորդ Վիվիեն Ալեքսյան, պարոններ Ալբերտ Խաչիսարյան, Արգար Մինասյան և Շահեն Մովսեսյան։

Երգչախումբը և մենեղգողները սքանչացման արտահայտություններ խլեցին առանց բացառության բոլոր ներկաներեն։ Անգամ մը ևս օտար այս ափերուն վրա իր գոյությունը պահող բուռ մը հայեր մեր սրբազան շարականներով հիացմունք ներշնչեցին օտար հարանվանությանց պատկանող եկեղեցականներուն, նույնիսկ հնդիկին ու մահմեդականին։

Պաշտոնական արարողություններեն ետք, որոնք կատարվեցան եկեղեցվո մեջ, ներկաները հյուրասիրվեցան զովացուցիչներով և անուշեղեններով եկեղեցվո բակին մեջ։ Եկեղեցվո վարչության անունով տիար Գրիգոր Հարությունյան շնորհակալություն հայտնեց Նորին Վսեմափայլություն կառավարչուհիին և օտար հյուրերուն, որոնք իրենց ներկայությամբ պատված էին Հայ եկեղեցին և հայ համայնքը։

Ս. Նազարեթ եկեղեցվո հիմնադրության 250-ամյա տոնակատարության առթիվ եկեղեցվո վարչությունը և հոգևոր հովիվները ստացած են բազմաթիվ հեռագրեր և նամակներ, որոնցմե հիշենք մանավանդ Վեհափառ Հայրապետի և Երուսաղեմի հայոց պարտիարք ամենապատիվ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի գրությունները։

Այս առթիվ կշնորհավորենք Կալկաթայի հոգևոր հովիվներ Տ. Արամայիս քահանա Միրզայանը, Տ. Պողոս քահանա Պետրոսյանը, Մադրասի հոգևոր հովիվ Տ. Եղիազար քահանա Քեշիշյանը և եկեղեցվո վարչության անդամները, որոնց տարած աշխատանքներուն շնորհիվ Ս. Նազարեթ եկեղեցվո հիմնարկության 250-ամյակը անցավ մեծ հաջողությամբ։

ԱՍԱՏՈՒՐ ԳՅՈՒԶԵԼՅԱՆ

ԵԹՈՎՊԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Եթովպահայերի նորընտիր և երիտասարդ հովիվ հոգեշնորհ Տ. Զավեն արեղա Արզումանյանի՝ Վեհափառ Հայրապետին ուղղած 10 դեկտեմբեր թվակիր նամակ-զեկուցագրից քաղվածաբար հրատարակում ենք որոշ տեղեկություններ՝ Եթովպահայ թեմի ազգային-եկեղեցական կյանքի և կազմակերպությունների մասին։

Հոգեշնորհ Տ. Զավեն արեղան Կիլիկյան միարանության խոստումնալից անդամներից մեկն է, որը Եթովպահայ գաղութային ժողովի կողմից հրավիրվել է Եթովպիայում հայ գաղութի հոգևոր հովվության պաշտոնին, Եգիպտոսի հայոց բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոսի համաձայնությամբ։

Եթովպահայերի հոգևոր հովիվը 1957 թվականի հոկտեմբերի 21-ին, Բեյրութից, Երուսաղեմ—Կահիրե—Խարթում ճանապարհով ժամանում է Ադդիս-Աբեբա և պատշաճ հարգանքով ընդունվում գաղութի կողմից։

Հոգևոր հովվի առաջին պարտականությունն է լինում ծանոթանալ թեմի ազգային-եկեղեցական կյանքին և ապատրաստել կարելի մանրամասնություններով տեղեկագիր մը, որ ներկայացներ գաղութը իր ամբողջական պատկերին մեջ և հանձնել Վեհափառի բարձր նկատառման ի գիտություն։

Ամեն կիրակի պատշաճ հանդիսությամբ Ադդիս-Աբեբայի հայոց Ս. Գևորգ եկեղեցում մատուցվում է սուրբ պատարագ, որի ընթացքում Վեհափառ Հայրապետի անունից հետո հիշատակվում է նաև Եթովպիայի ուղղափառ քրիստոնյաների կայսեր՝ Վեհափառ Հայլե Սելասիի անունը։

Եթովպահայ գաղութի հավատացյալների սրտում միշտ վառ է ասելը և հավատարմությունը հանդեպ Ս. Էջմիածնի և Ձերդ Վեհափառության,— դրում է հոգևոր հովիվը։

Հոգեշնորհ Տ. Զավեն արեղան պաշտոնական այցելություն է տվել Հարեշ եկեղեցու ղեկ Արու Վասիլիոս արքեպիսկոպոսին, նրան հաղորդելու Վեհափառ Հայրապետի ողջույնները։ Հոգևոր հովիվն ընդունվել է պատշաճ մեծարանքով հարեշական արքեպիսկոպոսի կողմից, որի ներկայության չորս եպիսկոպոսներն, որոնք հետաքրքրվել են Ս. Էջմիածնով և Վեհափառ Հայրապետի գործունեությամբ։ Հոգևոր հովիվը հաջորդ շաբաթներում կատարել է մի շարք հովվական այցելություններ, մանավանդ այցելել է Դիրե-Դավայի հայության։

Եթովպահայ գաղութը ինքնին մեջ հաշվում է 1 000 հոգի, մեծամասնությունը հաստատված մայրաքաղաքում, 53 հոգի Դիրե-Դավայում (Հարար նահանգ), 34 հոգի Ջիրոտիում (Ֆրանսիայի նահանգ), 22 հոգի Ասմարայում (Էրիթրիա)։

Եթովպահայ գաղութի ազգային-եկեղեցական կյանքը վարում է 7 հոգուց բաղկացած Եթովպահայ գաղութային ժողովը, որն ընտրվում է 4 տարին մի անգամ գաղութի կողմից։ Ժողովը հաստատվում է Եթովպիայի ներքին գործերի մինիստրությունից և Եգիպտոսի հայոց ազգային առաջնորդարանի կողմից։ Եթովպահայ գաղութային ժողովի նախագահն է օրվա հոգևոր հովիվը։

Եթովպահայ գաղութային ժողովից է բխում Ուսումնական խորհուրդը, որն զբաղվում է դպրոցական հարցերով, և եկեղեցական հոգաբարձությունը։ Գեղության առաջ գաղութային ժողովն է պատասխանատու Եթովպահայ ազգային-եկեղեցական գործունեության համար։

Մինչև 1944 թվականը Ադդիս-Աբեբայում չի եղել Հայկական եկեղեցի, թեև շատ կանուխից գաղութն ունեցել է իր փոքրիկ մատուռը՝ աղոթքի և պաշտամունքի համար։

Ադդիս-Աբեբայի հայոց Ս. Գևորգ եկեղեցին կառուցվել է 1934 թվականին, ազգային բարերար Միհրան Մուրադյանի ծախքով, ի հիշատակ իր հանգուցյալ հոր՝ Գևորգ Մուրադյանի։ Այս է եկեղեցու հիշատակարանը.

«Եկեղեցիս Ս. Գէորգ շինեցաւ աղդամբ և ծախիւ Միհրանայ Մուրատեան յանուն ն

յանման-յիշատակ ճոգեոյս ճօբ-հուրոյ Գէորգոյ Մուրատեան յամի Տեառն 1934 և ի թուին հայոց ՌՁԳ, ի հայրապետութեան Տեառն Խորէնայ Վեհափառ կաթողիկոսի, ի պատրիարքութեան Սրբոյ Սաղիմայ Տեառն Թորգոմայ սրբազան արքեպիսկոպոսի, ի պատրիարքութեան Կ. Պոլսոյ Տեառն Մեսրոպայ սրբազան արքեպիսկոպոսի»:

Եկեղեցու հիմնարկէքը կատարվել է 1928 թվականին հոգելույս Տ. Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանի կողմից, իսկ օծումը 1944 թականին եգիպտահայոց առաջնորդ դերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի կողմից։

Այժմ եկեղեցու ներքին մասը՝ որմանկարներով, սյունազարդումներով, յուղաներկումներով և կահավորումով, նախանձելի վիճակ ունի այն օրից ի վեր, երբ գաղութի նորակազմ Հայ տիկնանց եկեղեցասեր միությունը, ավելի քան 2 000 անգլիական ոսկի գոյացնելով, հիմնական նորոգության ենթարկեց տաճարը։

Գաղութի մեջ, մնայուն կամ այցելու հանգամանքով, գտնված են Տ. Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյան, Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյան, Տ. Հովսեփ եպիսկոպոս Կարապետյան, Տ. Եղիշե եպիսկոպոս Տերտերյան, Տ. Հովհաննես ավագ քահանա Կևհերյան, Տ. Մկրտիչ քահանա Ջլզատյան, Տ. Վարդան քահանա Տեր Ասատուրյան։ Եկեղեցին ունի իր հոգաբարձությունը՝ նշանակված Գաղութային ժողովի կողմից։

Ադդիս-Արեբայի հայոց դպրոցը իր հերթին կառուցվել է Մատթիկ Գևորգովի նվիրատվությամբ, 1932 թվականին։ Դպրոցը երկհարկանի մի դեղեցիկ շենք է լուսավոր պատուհաններով, ընդարձակ բակով և այլ անհրաժեշտ հարմարություններով։ Այժմ դպրոցն ունի 180 երկսեռ աշակերտ, որոնցից 95 հոգի նախակրթարանի բաժնում, 85 հոգի մանկապարտեզում։ Դպրոցի ուսուցչական կազմը բաղկացած է 18 հոգուց։ Դպրոցի տարեկան բյուջեն կազմում է 45 000 Լթովպական դոլար, որոնց կեսը՝ միայն կարելի կըլլա ապահովել աշակերտներեն։

Գաղութի ծոցում գործում են Ուսումնական խորհուրդը, եկեղեցասեր հայ տիկնանց միությունը՝ կազմված 1955 թվականին, ունի 120 անդամ, մեծապես նվիրված եկեղեցու պայծառության աշխատանքներին։ Եկեղեցասեր տիկնանց միությունը իր հանգանակած 2 000 անգլիական ոսկի գումարը վերջերս հատկացրել է Ս. Գևորգ եկեղեցու վերանորոգության և եկեղեցին ապահովել է եկեղեցական զգեստներով, շապիկներով, սպասներով. կահավորվել է նաև ազգային առաջնորդարանը։

Ադդիս-Աբեբայում կա նաև Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության մասնաճյուղ 100 ադամներով։

Գաղութում գործում է նաև Հայ տիկնանց բարեսիրաց միությունը 1956 թվականից։ Այս միության գլխավոր նպատակն է օգնել «Թշվառին ու դժբախտին», մասնավորապես Ազունիեի (Լիբանան) Ազգային բուժարանին, ընդհանրապես աղքատ ուսանողներին և քաղաքի աղքատ հիվանդանոցներին։

1939 թվականից ի վեր եկեղեցու պայծառության համար գործում է Մուրատյան երգչախումբը, ղեկավարությամբ պր. Ներսես Նալբանդյանի։ Սուրբ պատարագին երգվում է եկմալյան պատարագը։ Բացի այդ, երգչախումբը վերջերս կազմակերպել է համերգներ, երգահանդեսներ, օրինակ՝ «Սոս և Վարդիթեր» երգախառն դրամա և «Արշին մալալանց» օպերետը։ Երգչախումբը վերջերս նշել է Կոմիտաս վարդապետի հիշատակը երգահանդեսով։

Գաղութն ունի նաև իր մարմնամարզական «Արարատ» միությունը, սպորտի իր սեփական երկհարկանի շենքը, մարզադաշտը, 120 անդամներով։

Այս բոլորի մասին հաղորդերով Վեհափառ Հայրապետին, հոգևոր հովիվը խնդրում է Վեհափառ Հայրապետի օրհնությունները «Թովպահայոց և մեզի, աստվածահաճո մեր գործերուն հաջողության ի խնդիր»։

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ Ե. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՌԻՃԱ ՎԱՆՔԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Պատմական գիտությունների թեկնածու, հնագետ Հ. Եղիազարյանը «Էջմիածին» ամսագրի 1956 թվականի VIII—IX համարում, էջ 79—85, լույս է ընծայել «Հառիճա վանքը և նրա վիմագրությունը» վերնագրով հոդվածը, իսկ նույն ամսագրի 1957 թվականի I համարում, էջ 57—63, տպագրված Լն նույն հեղինակի ընթերցմամբ, այդ վանքի 28 արձանագրությունները։

Թեև այդ արձանագրությունները մեծ մասամբ հայտնի էին բանասերներին այնպիսի աշխատություններից, ինչպիսիք են Ալիշանի «Շիրակ»-ը (Վենետիկ, 1881), Ա. Մխիթարյանի «Պատմութիւն մենաստանին Հառիճայ» (Թիֆլիս, 1856), Մ. Բժշկյանի «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» (Վենետիկ, 1830), ինչպես նաև Ս. Ջալալյանի և Հ. Շահխաթունյանի տեղագրություններից և այլն, այնուամենայնիվ ողջունելի է Հ. Եղիազարյանի ձեռնարկած գործը իբրև մի ամբողջական ամփոփում Հառիճա հռչակավոր մենաստանի վիմագրությունների, մանավանդ որ, ինչպես ասում է նա, «այդ բոլոր աշխատություններում ևս կան նկատելի անճշտություններ ու սխալներ, մանավանդ վիմագրությունների ընդօրինակման և վերծանման ուղղությամբ»։ Ուրեմն, պետք էր սպասել, որ Հ. Եղիազարյանը տալու է մեզ հիշված վիմագրությունների միանգամայն ճշտված և սխալներից զերծ ընդօրինակություններ կամ վերծանումներ։

Սակայն, դժբախտաբար, Հ. Եղիազարյանը մի քանի առանձնապես կարևոր դեպքերում տվել է ո՛չ միայն անճիշտ ու սխալ, այլ նույնիսկ միանգամայն անընդունելի ընթերցումներ, որոնք գրավեցին մեր ուշադրությունը և այս փոքրիկ հոդվածի պատճառ դարձան։

Ա) Հ. Եղիազարյանի առաջին խոշոր վրիպումը վերաբերում է «երջանիկ ծերունի» Գրիգոր առաջնորդի տապանագրի տարեթվին։

Հիշատակելով, որ Գրիգորը, վանքը հարյուր տարի ավերակ մնալուց հետո, վերահաստատում է այն և հավաքում մեծ թվով մխաբանություն[1], համաձայն Ս. Գրիգոր Եկեղեցու վրա փորագրված անթվական արձանագրության, Հ. Եղիազարյանն այնուհետև շարունակում է. «Ստույգ հայտնի չէ նաև Գրիգորի վահանահայրության ժամանակը։ Հառիճա վանքի պատմությամբ հետաքրքրվող համարյա բոլոր բանասերներն ու տեղագիրները հիմք են ընդունում Հառիճ գյուղում եղած գերեզմանոցում գտնվող մի գերեզմանի տապանագրությունը (Հ. Եղիազարյանի ժողոված ուի Ինն արձանագրությունը), որի տարեթիվը բոլորի կողմից ընդօրինակված է ՈԼԴ (1185) թվականը և որի համաձայն դա Հառիճա վանքի երկրորդ վերաշինության առաջին առաջնորդ Գրիգոր վարդապետի գերեզ-

[1] Համապատասխան արձանագրության մեջ մեծ թվով մխաբանություն հավաքելու մասին խոսք չկա. այնտեղ ասված է. «Եւ Գրիգոր առաջնորդ սուրբ ուխտիս Հառիճայի շինեցի զտեղի սենեգեան իմոյ ի հարիւրամեայ կործանմանէն և կարգեցի արս ընտրեալ և խրատեալս ուրինաւքն Աստուծոյ...»։

մանն է»։ Հ. Եղիազարյանը այս եզրակացությունը պարզապես թյուրիմացություն է համարում. «որովհետև,— ասում է նա.— Հիշամարում. «որովհետև,— ասում է նա.— Հիշյալ գերեզմանի տապանագրության տարեթիվը ո՛չ թե ՈՀԴ (1185), այլ ՌՄԻԲ (1773) թիվը ունի թե ՈՀԴ (1185), այլ ՌՄԻԲ (1773) թվականն է»։ Այնուհետև նա մի անգամ էլ (էջ 82) կրկնում է այս միտքը և հիշյալ գերեզմանը համարում է ԺԸ դարի երկրորդ կեսին ապրած մի այլ ծերունի Գրիգոր վարդապետի տապանը, որը պետք է Հառիճա վանքը վերականգնած լինի ոչ շուտ քան ԺԸ դարի կեսերին միայն, երբ «Արևելյան Շիրակը գտնվում էր Վրաստանի տիրապետության տակ»։

երկրորդ ամայացման մասին է խոսքը։ Երկրորդ, բոլորովին անհասկանալի է, թե ինչ տարբերություն կա «երկրորդ վերաշինության» և «հարյուր տարի ամայի մնալուց հետո վերաշինման» միջև։ Չէ՞ որ ինքը Հ. Եղիազարյանն էլ ընդունում է, որ Սելջուկյան արշավանքների ժամանակ, հատկապես 1064 թվականին, ավերվել և ամայացել է նաև Հառիճա վանքը, և 100 տարի ամայի մնալուց հետո նորից վերաշինվել Գրիգոր վարդապետի կողմից, որին հաջորդել է Պետրոս վարդապետը։ Այդ վերաշինությունը պետք է կատարված լինի, ուրեմն, շուրջ 1170-ական թվականներին, որ միանգամայն

Նկար 1.— ՀԱՌԻՃԱ ՎԱՆՔԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳՐԻԳՈՐԻ ՇԻՐՄԱՔԱՐԸ

Ամենից առաջ պետք է ասենք, որ երկու Գրիգոր առաջնորդ Հառիճայի ընդունելու պատճառաբանությունը խիստ տարօրինակ է։ Հ. Եղիազարյանն ասում է՝ «Բացի այդ (խոսքը տապանագրի թվականի մասին է), տապանագրության մեջ որոշակի ասված է, որ նա վանքի երկրորդ վերաշինության առաջին առաջնորդն է, իսկ նախորդ արձանագրության մեջ ասվում է, որ վանքը հարյուր տարի ամայի մնալուց հետո նա վերաշինում, շենացնում է. պարզ է, որ դա վանքի առաջին ամայացումն է և ոչ թե երկրորդը, ուստի Գրիգոր անունով առաջնորդները՝ մեկը արձանագրության մեջ, իսկ մյուսը տապանագրության, տարբեր մարդիկ են» (էջ 80—81)։ Նախ, անհասկանալի է, թե ինչ

համապատասխանում է պատմական իրողությանը և արձանագրական տվյալներին, որովհետև Հառիճայի գերեզմանատանը գտնվող տապանը իրոք պատկանում է վանքի երկրորդ վերաշինության առաջին առաջնորդ Գրիգոր վարդապետին։

Թյուրիմացությունը միանգամընդմիշտ վերացնելու համար այստեղ դնում ենք հիշյալ տապանի լուսանկարն արձանագրությամբ հանդերձ (նկար 1)[2]։

---

2 Այս հոդվածում բերված լուսանկարներն ստացել ենք Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պետական պատմական թանգարանից, որի համար շնորհակալություն ենք հայտնում թանգարանի դիրեկտոր պրոֆ.-դոկտ. Կարո Դաֆիդարյանին։

Տապանագրի թվականը վերջում մի փոքր ապարտված է, բայց Ի Թ Հ (ի թուին Հայոց) տառերից հետո պարզ կարդացվում են ՌԼ տառերը, իսկ ՌՄ-ի հետ անգամ չկա։ Երրորդ տառը Դ է եղել, թե Է կամ Ը, այս դեպքում նշանակություն չունի, որովհետև դրանով կճշտվեր միայն Գրիգոր վարդապետի մահվան թվականը՝ 1185, 1188 կամ 1190 թվականին։ Մենք հիշում ենք համարում վերջինը՝ 1190-ը, ահա թե ինչու։

Գրիգորի հաջորդ Պետրոս վարդապետի առաջին թվագրված արձանագրությունը կրում է ՌԽԱ (1192) թվականը, որի մեջ ասված է. «Կամաւն Աստուծոյ մեք Հառիճեցիքս Հայր Պետրոս և այլ եղբարքս սահմանեցաք ի տաւնի տապանակի ի մատուռն պատարագել զՔրիստոս յանուն Գրիգորոյ փոխանակ արդեանց իւրոց...»։ Այս արձանագրությունը գտնվում է Գրիգորի իրեն արձանագրության (100-ամյա կործանումից հետո վանքը վերաշինելու մասին) ներքևը և լավագույն ապացույց է հիշված բոլոր արձանագրությունների միմյանց հետ կապված լինելուն։ Այսպես ուրեմն, կասկած չի կարող լինել, որ հիշյալ դերեզմանը Հառիճայի երկրորդ շինության առաջին առաջնորդ Գրիգորի կամ, որ նույնն է, իր սենդյան տեղին հարյուրամյա կործանումից հետո վերաշինող Գրիգոր առաջնորդի դերեզմանն է, որի մահից անմիջապես հետո Հառիճեցիք Պետրոս առաջնորդի գլխավորությամբ նրա հիշատակը փոխանակ արդեանց իւրոցս հարգելու համար պատարագի հատուկ որ են սահմանում։ Պետք է ասել, որ հնագրական տեսակետից էլ այդ տապանը իր արձանագրությամբ չի կարող ժԸ դարի վերջին պատկանել։

Բ) Հ. Եղիազարյանի երկրորդ և ավելի անհեթեթ վրիպումը վերաբերում է Երեմիա երաժշտի դերեզմանի արձանագրությանը։ Մեզ քիչ երաժիշտներ են հայտնի հայոց պատմությունից և այդ քչերից մեկը Երեմիա երաժիշտն է, որի դերեզմանը գտնվում է Հառիճայի մեծ գերեզմանատանը, վերևում հիշված Գրիգոր վարդապետի տապանի կողքին[3]։

[3] Մենք մի երկրորդ երաժշտի դերեզման էլ տեսել ենք Բյուրականում։ Այնտեղի հին գերեզմանատանը, Աղցքի և Բյուրականի միջև, մի համարյա գետնին հավասարված տափակ գերեզմանաքար կա, որի վրա այժմ հազիվ նշմարելի տառերով գրված է՝ «Առատանար անկալ գնի ոգորմեի... (անունն անընթեռնելի. մնացել են միայն...ր...ին տառերը) լոնալ ժայնութեամբ բնաբս քաղքրարարքաս։ Վերջին բառերից պետք է եղրակացնել, որ երաժշտի գերեզմն է այն։ Արձանագրությունը կարդացել ենք 1922 թվականի սեպտեմբերին Անգուցյալ Գարեգին եպիսկոպոս (հետագայում Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոս) Հովսեփյանի հետ։

Ես, լինելով բնիկ Հառիճեցի, տասնյակ անգամներ երկյուղածությամբ կանգնել եմ այդ գերեզմանախաչի կողքին, կարդացել եմ նրա վրայի արձանագրությունը և միշտ Երեմիա երաժշտին եմ տեսել այդ քարի տակ։ 1905 թվականի ամռանը, երբ ես Կոմիտաս վարդապետին հետաքրքրությամբ էի մեկուկես ամսով իմ հայրենի Հառիճ գյուղը՝ նրան մայրաքաղաքից բուժելու, մենք երկուսով շատ անգամ այդի ենք գնացել Երեմիա երաժշտի

Նկար 2— ԵՐԵՄԻԱ ԵՐԱԺՇՏԻ ԳԵՐԵԶՄԱՆԱԳԱԶԸ

գերեզմանին և ես կարող եմ վկայել, որ մենք երկուսով էլ ամեն անգամ «Երեմիա երաժիշտ» էինք կարդում գերեզմանախաչի վրա և Կոմիտաս վարդապետը սատակի հուզվում էր ու զգացվում՝ իր նախորդներից մեկին տեսնելով այնտեղ թաղված։

Դրա փայլուն ապացույցն է այն, որ Կոմիտասը հետագայում իր բանախոսությունների մեջ սրտի խորին հուզմունքով հիշա-

տակել է Արագածի լանջին գտնվող այդ դերեզմանի մասին։

Հոդվածագիր Հ. Եղիազարյանը այս նվիրական շիրիմի տիրոջը բոլորովին ոչնչացրել է և տվել է մի արտառոց վերծանություն, որից բնավ չի հասկացվում, թե ով է հանգչում այդ գերեզմանում։

Տապանագրի ճիշտ ընթերցումն է.

Հ. Եղիազարյանը մեզ համար ամենամոտքրքրական 3-րդ տողը, որտեղ պետք է մեռածի անունը լիներ, կարդում է «Էրեսաւեր Աստուածապաշտոյ»։ Ուրեմն, մեռածի անունը եղել է «Էրեսաւերս», իսկ մականունը՝ «Աստուածապաշտոյ»։ Ի՞նչպես չի մտածել Հ. Եղիազարյանը, որ ո՞չ Երեսավեր անուն կա և ոչ էլ միայն մի քրիստոնյայի համար



Նկար 3— ՉԱՔԱՐԵ ՍՈՒԱՍԱԼԱՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Այս է շիրիմ նան
2. գիստ և բնակարան
3. Էրեմիաի երաժշտի
4. որ բնթեռնոյ յայ
5. ատս յիշեցէ՛ ի թվ
6. :Զ:Է:

կարող էր գործածվել «աստուածապաշտ» մականունը։ Հապա մյուսներն ի՞նչ էին։

Ի միջի այլոց, բոլոր բանասերներն էլ այդ գերեզմանախաչի վրա «Երեմիա երաժիշտ»են կարդացել[5]։

Այստեղ թյուրիմացությանն ու թյուրատեսությանը վերջ տալու միակ միջոցը համարում ենք Երեմիա երաժշտի գերեզմանախաչի լուսանկարն իր արձանագրությամբ դնելը, որպեսզի Երեմիա երաժշտի անմահ անունը դառնա այսուհետև պատահականությունների զոհ չդառնա (նկար 2)։

Գ) Կա նաև մի երրորդ թյուրիմացություն, որը նույնպես անհրաժեշտ ենք համարում ուղղել։

[4] Տիգրան Կամսարականը «Գոհարներ հայ գրականության» ժողովածուի մեջ (Թբիլիսի, 1916 թ.) նամիտաի նյութերին նվիրված «Հայկական գեղեցկություններ» վերնագրով հոդվածում ասում է. «Եվ եթե որ մեք գեղգեղելի ու հմայելի, հուզելի և հուզվելի սահ մը հանգչելու համար Հայրենիքի կենսաներոց կազդուրը Երթաք փնտռելու՝ ձեզի երկու ազաչանք ունիմ, վարդապե՛տ, նախ՝ մեր կողմանե հարգական հուպյալ խոնարհություն մը ձեր նախակարապետներեն Երեմիա երաժշտին շիրիմին առջև, որ հազար երկու տարիե ի վեր Արագածի կողը անեզ ու անվթար պահված է քանի մեզի զուսպ խանդագատանքով մը...» (էջ 229—230)։

[5] «Տե՛ս նաև Թ. Թորամանյան, «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», երկրորդ ժողովածու, Երևան, 1948 թ., էջ 204։

էջ 81-ում, խոսելով Հառիճայի Ս. Առաքածածնի հյուսիսային պատի վրա Զաքարե սպասալարի դրել տված մեծ արձանագրության մասին, Հ. Եղիազարյանն ասում է, թե այդ արձանագրության մեջ Զաքարե սպասալարի Հառիճային նվիրած կալվածների թվում հիշվում է «նաև իր սեփական գյուղը՝ Սառնաղբյուրը, որը շատ մոտ էր գտնվում վանքին։ Այս ասելուց հետո Հ. Եղիազարյանը գրում է. «Հնագիտական հետազոտությունները հաստատել են, որ Սառնաղբյուրը գտնվում էր վանքից քիչ դեպի հարավ, ձորի ափին, ընդարձակ սարահարթի վրա, որի գերեզմանոցը և շենքերի ավերակների մնացորդները ընդարձակ տարածության վրա պահպանվել են մինչև այժմ։

Կարճ ու կտրուկ ասենք, որ ոչ մի սեփական գյոսլ Սառնաղբյուր անունով չի ճիշտակվում մեծ արձանագրության մեջ։ Այնտեղ հիշատակված Զաքարեի սեփական գյուղի անունն է Մողորիս, որ բանասերներից մեկը համարում են Պարնի (=Պարոնի) գյուղը, ուրիշները ցանկանում են այն նույնացնել Սուուգբուլաղ (=Սառնաղբյուր) կոչված աղբյուրի մոտ գտնվող ավերակների հետ, որը շատ մոտիկ չէ վանքին և ընկած է նրանից մոտ 3—4 կիլոմետր հեռավորության վրա։ Այս է բոլորը։

Որպես ապացույց բերում ենք Զաքարեի մեծ արձանագրությունը (նկար 3)։

Այս առթիվ առհասարակ պետք է ասենք, որ արձանագրությունների ընթերցումը Հ. Եղիազարյանի կողմից՝ արդարացի կասկածներ է հարուցում։ Մենք սուսուցինք միայն առաջին երկու արձանագրությունները և գտանք հետևյալը.

Առաջին արձանագրություն.

8—9 տողը չի կարող խորհ լինել, այլ պետք է լինի խորէ։

11 տողը աղավաղված է. չի կարող լինել որ կաշառաւ հայր մտէ։

Երկրորդ արձանագրությունը բոլորովին աղավաղված է.

3—4 տողը պետք է լինի ի մատուռն (ոչ թե մի մատուռն)։

5—6 տողը չի կարող լինել փոխանակ արդեանն յիմոյ, այլ պետք է լինի փոխանակ արդեանց իւրոց։

Վիմագիր արձանագրությունների ընթերցմանն ու հրապարակմանը անհրաժեշտ է մեծ զգուշությամբ մոտենալ, հակառակ դեպքում կստացվեն այսպիսի անհեթեթություններ։

Դ) Պետք է ուղղել մի չորրորդ թյուրիմացություն ևս։

Հ. Եղիազարյանը գրում է (էջ 83). «1850 թվականին կազմակերպվում է վանական հատուկ միաբանություն, որ եռանդով աշխատանք է ծավալում մենաստանը վերաշինելու, ընդարձակելու և անտեսապես ուժեղացնելու ուղղությամբ։ Կես դար անող իր գործունեության ընթացքում միաբանությունը Հառիճա վանքը հասցնում է իր ծաղկման և բարգավաճման ամենաբարձր աստիճանին։ Այդ ժամանակաշրջանում է, որ հիմնովին վերանորոգվում են եղած կառուցվածքները, կառուցվում են վանքի միաբանության համար բազմաթիվ քարաշեն երկհարկանի կացարաններ, մատաններ, շաբմարաններ, խոհանոց, սեղանատուն, հացթխարան, անասնադոմեր և, որ գլխավորն է, հատուկ գպրոցի և կաթողիկոսների ամառանոցի շենքեր և այլն...»։

Խիստ զարմանալի է, որ ձեռքի տակ ունենալով Կարապետ Կոստանյանի 1910 թվականին Ալեքսանդրոպոլում հրատարակված «Հառիճայի վանական ընկերության հիշատակարանն ու հաշվետվությունը» գիրքը, Հ. Եղիազարյանը այդպիսի սխալ և հասարակությանը մոլորեցնող տեղեկություններ է տալիս։ Հիշված բոլոր վերանորոգություններն ու շենքերի կառուցումը «վանական միաբանության» գործերը չեն, այլ Ալեքսանդրոպոլի մի խումբ (8—10) աշխարհական անձերից կազմված ընկերության։ «Վանական միաբանությունն» բառի բուն իմաստով Հառիճա վանքը չի էլ ունեցել. այնտեղ եղել է մի վանահայր միայն և երբեմն էլ մեկ կամ երկու կրոնավոր։

Բ) Սխալ է նաև, թե Հառիճա վանքը սոսկ գյուղական եկեղեցի է մնացել ի դարի սկզբներից։ Հառիճա վանքը միաժամանակ գյուղական եկեղեցի է եղել ԺԲ դարի եռեսնական թվականներից սկսած։



ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԵՐՄԵՍԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

§ 7

Հերմեսի հայերեն ներկա տեքստը կարևոր է հայագիտական վիճելի մի ուշագրավ հարցի կապակցությամբ։

Հինգերորդ դարի հայ ականավոր պատմիչ Եղիշեն իր «Վասն Վարդանանց և Հայոց պատերազմին» աշխատության երկրորդ «եղանակ»-ում, ինչպես հայտնի է, խոսելով Ե դարի հայ ժողովրդա-ազատագրական հերոսական պայքարի մասին և ցանկանալով այդ օրինակի վրա անվեհերություն պատգամել գալիք սերունդներին, մեջ է բերում հնադույն փիլիսոփաներից մեկի իմաստալից խոսքը. «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն»[12]։ Ըստ որում, Եղիշեն այստեղ անունով չի հիշում բերված դարձվածքի հեղինակը, այլ անորոշ ձևով ակնարկում է՝ «որպէս ասաց ոմն ի հնոցս»[13]։

Ո՞վ է եղել Եղիշեի ակնարկած այդ «ոմն ի հնոցս»-ը, ումի՞ց է վերցրել նա իրոք այդ իմաստուն խրատը։ Պատմական գիտությունների թեկնածու Լ. Խաչիկյանը իր «Եղիշեի Առարանոց մեկնությունը» խորագրով դիսերտացիոն աշխատության մեջ այն կարծիքն է հայտնել, որ Եղիշեն այդ դարձվածքը վերցրել է Հերմեսի «Սահմանքս»-ից։

Հերմեսի հայկական տեքստում վերև բերված դարձվածքը հանդիպում է մեղ հետևյալ ձևակերպությամբ. «Մահ՝ իմացեալ անմահութիւն է, ոչ իմացեալ մահ»։

Լ. Խաչիկյանի այս տեսակետը անվերապահ ընդունելու դեպքում մենք կա՛մ հունական դպրոցի թարգմանության վաղ շրջանը պիտի վերջերորդ դարից իջեցնենք հինգերորդ դարի կեսը և կա՛մ Եղիշեի ժամանակը չարժենք դեպի վերջերորդ դարի սկիզբը։ Երկու դեպքում էլ Հերմեսի «Սահմանքս»-ը անգնահատելի աղբյուրագիտական դեր կարող է կատարել մեզ համար՝ ժամանակագրական հենակներ ստեղծելու գործում։ Բայց, դժբախտաբար, մատնացույց արված նմանությունն այնքան փոքր է և ընդհանուր, որ դժվար է լուրջ եզրակացություններ հանել այդ հիման վրա։ Ակտոդ. Հ. Մանանդյանն արդարացի ձևով տարակուսանք է հայտնել, որ «մեջ բերված համապատասխան վկայությունների համեմատությունից տեսնում ենք, որ Եղիշեի հատվածն ավելի ընդարձակ է, քան Հերմեսինը։ Ուստի և դժվար է, իմ կարծիքով, անվերապահ կերպով պնդել, որ Եղիշեի Պատմությանը աղբյուր է ծառայել Հերմեսի «Սահմանքս»-ը։ Հայտնի է, որ Նոր-Պլատոնական դպրոցի երկերը իրենց մեջ հաճախ պարունակում էին նման մտքեր և նման հատվածներ. ուստի և միանգամայն հնարավոր է, որ վերոհիշյալ հատվածը կարող էր Եղիշեն քաղած լինել որևէ այլ աղբյուրից»[14]։

Հանգուցյալ ակադեմիկոսի այդ տարակուսանքն ավելի քան հավանական է հրևվում, եթե նկատի ունենանք, որ Եղիշեի մոտ վերև հիշված հատվածի հետ միասին

---

* Շարունակված ամսագրի 1957 թվականի № մի-ից։

12 Եղիշէ, «Վասն Վարդանանց և Հայոց պատերազմին», Տփղիս, 1904 թ., էջ 23։

13 Նույն տեղում։

14 «Բանբեր Մատենադարանի», № 3, էջ 282։

բերված են մի շարք այլ իմաստասիրական մտքեր ևս, որոնցից ոչ մեկը մենք չենք գտնում Հերմեսի հայկական տեքստում։

§ 8

Հերմեսի «Սահմանք»-ի հայկական բնագրի կապակցությամբ անհրաժեշտ է պարզել կարևոր մի հարց ևս — Հերմեսի բնագիրը արդյոք հարազատ ձևով է մեզ հասել, թե միջին դարերում ենթարկվել է ապճառման՝ ընդօրինակող գրիչների կողմից։

Մեր կարծիքով, Հերմեսի տեքստը, հիմնականում, մեզ հասել է անեղծ փոփոխություններով։ Առանձնապես ընտիր տեքստ է հանդիսանում Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 419 ձեռագրի ընդօրինակությունը. նա խոր հնության կնիք ունի իր վրա։ Սակայն այս տեքստում ևս նկատվում են որոշ ընդմիջարկություններ (interpolations)։ Հերմեսի հայկական տեքստում ընդմիջարկություններ ենք համարում հետևյալ պարբերությունները.

Երկրորդ էջում բնագրում ասվում է. «Աշխարհ իմանալի է աստուած, միտք ճշմարտութեամբ, անեղն»։ Ընդմիջարկողը բնագրի այս պարբերությունը մեկնել է ավելացնելով. «Իմանալին էապէս անեղն և անճառելին իմանալի բարի. միանգամայն ասել՝ աստուած իմանալի աշխարհ, անշարժ, միակ, անտեսանելի աշխարհ. իմանալի բարի. անտեսանելի և անճառ»։

Երկրորդ էջում բնագրում ասվում է. «Հրոյ գոյացութիւն է այրեցողս։ Հայ հեղինակն այդ պարբերությունը մեկնել է. «բայց այլ է նուր. և ա՛յլ է լոյս, բանգի ընդ որ նարցի. նուր ապականի, իսկ լոյս այնպիսի է, երեւոյր, որպէս ինքն ասէ»։ Հայ մեկնչի ակնարկը՝ «որպէս ինքն ասէ», նկատի ունի տեքստի հեղինակին՝ Հերմեսին։

Երրորդ էջում բնագրում ասվում է. «... Ծով շատ է և երկիր. բայց երկին մու և զոյդ ծովու և երկրի»։ Այս պարբերությունը հայ հեղինակը մեկնել է. «Եւ կամէր ասել (այսինքն Հերմեսը կամեցել է ասել — Ա. Ա.) թէ երկին զոյգ է երկրի և ծովու ըստ մեծութեան. որքան երկոքին են. զի ամենայն ինչ ի ներքս առեալ փակեաց և ի ներքս արգելեալ ունի»։

Չորրորդ էջում, ուր Հերմեսը խոսել է գիտության և անգիտության, չար ու բարի լինելու մասին, հայ մեկնիչն իր կողմից ավելացրել է. «Ասէ զչարն յանգիտութենէ. և զբարին՝ ի գիտութենէ»։

Վեցերորդ էջում, ուր հեղինակը խոսում է բանական մարդու անձնիշխան լինելու մասին, հայ մեկնիչն իր կողմից ավելացրել է. «Եթէ կամիցես. զի կարելի է. բանզի կամեա՛ց և իմա՛ և ճաւատա՛ և սիրեա՛ և եղիր»։

Հերմեսի հայկական տեքստի վերջին մասն ամբողջապես, ուր խոսվում է չորս տարրերի ու նրանց հատկությունների մասին, հեղինակինը չէ, այլ վերցված է Արիստոտելից և Պլատոնից։ Այս հատվածում, որպես հեղինակներ մատնացույց են արված Արիստոտելը և Պլատոնը։ Որ այդ հատվածը, իրոք, Հերմեսինը չէ, այլ վերցված է այլ հեղինակներից, կարելի է համոզվել այն փաստից, որ Հերմեսն առջևում արդեն խոսել է չորս տարրերի ու նրանց հատկությունների մասին և այստեղ հարկ չէր ունենա նորից կրկնել։ Մեր համեմատական ուսումնասիրությունից պարզվեց, որ նշված հատվածի հիմնական աղբյուրն է Արիստոտելի «Ցաղագս աշխարհի» աշխատության հայերեն թարգմանությունը։

§ 9

Վերջապես, անհրաժեշտ է պարզել աղբյուրագիտական մի հարց ևս — ե՞րբ է կատարվել Հերմեսի «Սահմանք»-ի հայերեն թարգմանությունը։

Ակադ. Հ. Մանանդյանը, որը երկար տարիներ զբաղվել է հունաբան մատենագրության ուսումնասիրությամբ և աշխատել է նրանք խմբավորել, պարզել նրանց յուրաքանչյուրի թարգմանության ժամանակը, Հերմեսի «Սահմանք»-ը դասում է Պիտոյից—Փիլոնյան խմբի մեջ և թարգմանության ժամանակն է սահմանում վեցերորդ դարի կեսերը. «Վեգվական բոլոր վերոհիշյալ դիտողություններն ի մի ամփոփելով,— գրում է նա,— կարծում եմ, որ կարող ենք վստահորեն ենթադրել, որ Հերմեայ Եռամեծի առ Ասկղեպիոս Սահմանք»-ը թարգմանված պիտի լինի հունարենից, Պիտոյից—Փիլոնյան խմբի երկերից հետո, հավանաբար, է դարի երկրորդ կիսում կամ ամենավաղը Զ դարի կեսերին»[15]։

Ակադ. Հ. Մանանդյանն իր այս անսակետն աշխատել է հիմնավորել լեզվագիտական և աղբյուրագիտական տվյալների վրա։ Անհրաժեշտ ենք համարում համառոտակի բերել հիմնական կողմանները.

Ա) Հերմեսի «Սահմանք»-ում գործ են ածված Պիտոյից—Փիլոնյան խմբի տեքստերում գործածված հետևյալ բառերը. անիրեղուն, անօրակ, բաղդատութիւն, բալկացութիւն, գերաշխարհիկ, գոյացութիւն, եղանել, ենթակայ, էակ, ընդունական, ծայնաւոր, միակ, ներգործութիւն, շաղկապ, օրակ, պա-

15 Հ. Մանանդյան, «Հերմեայ Եռամեծի առ Ասկղէպիոս Սահմանք» (տե՛ս «Բանբեր Մատենադարանի» № 3, էջ 291—293)։

ռուեակեմ. սերուն. տեսակ. փոխարկեմ. ճանակ:

Բ) Հերմեսի հայերեն թարգմանության մեջ գործ է ածված հայ լեզվի համար անսովոր սէ իգական դերանունը, որը հանդիպում է նաև Պիտոյից—Փիլոնյան խմբի տեքստերում։

Գ) Պիտոյից—Փիլոնյան խմբի թարգմանության հունական ἀπὸ նախդիրը տրվում է հայկական գրականության մեջ անսովոր ի տառով՝ նիմոյ, փոխանակ իմոյ, նոգոյ փոխանակ ոգոյ և այլն։ Նման նախդիրի գործածություն մենք հանդիպում ենք նաև Հերմեսի հայկական տեքստում՝ նիմեմէ փոխանակ իմեմէ։

Դ) Հերմեսի տեքստում մի թվական անունը տրված է մու ձևով, որը հատուկ է Պիտոյից—Փիլոնյան խմբի տեքստերին։

Ե) Հերմեսի «Սահմանքս»-ում գործ է ածվել «ներհակ» բառը, որը մեզ հանդիպում է միայն Պիտոյից—Փիլոնյան խմբի տեքստերում։

Ճիշտ համարելով հանդերձ ակադ. Հ. Մանանդյանի մատնացույց արած փաստերը և այդ փաստերից հանած եզրակացությունները՝ Հերմեսի հայկական թարգմանությունը Պիտոյից—Փիլոնյան խմբին պատկանելու հարցում, համոզեցուցիչ չենք դտնում նրա այն պնդումը, որ Պիտոյից—Փիլոնյան խմբի ժամանակը պիտի համարել 2 դարի կեսը։ Այդ խմբի թարգմանությունների ժամանակը, ինչպես ցույց է տվել բանասեր Գ. Տեր-Մկրտչյանը[16], իսկ հետագայում նաև պրոֆ. Մ. Աբեղյանը[17], պիտի համարել 6 դարի ինքնուրույն թվականները։ Մեր կարծիքով, անվիճելի պիտի համարել Տեր-Մկրտչյանի տոմարական այն հաշվումները, ըստ որի Պիտոյից—Փիլոնյան խմբի աչքի ընկնող հեղինակներից մեկի՝ Տիմոթեոս Կուզի «Հակառաքիենս»-ը, անվիճելի, կատարված է 480—484 թվականների ժամանակաշրջանում[18]։

Այստեղ մենք հրատարակում ենք Հերմեսի «Սահմանքս»-ի հին հայերեն թարգմանությունը, վերցնելով Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 419 ձեռագրից՝ փոքրիկ ուղղումներ կատարելով մյուս ձեռագրերի տեքստերի հիման վրա։

---

16 Գ. Տեր-Մկրտչյանի հոդվածը տե՛ս «Արարատ», 1908 թ., էջ 564—589։

17 Մ. Աբեղյան, «Հայոց հին գրականության պատմություն», I հատոր, Երևան, 1944 թ., էջ 612—618։

18 Գ. Տեր-Մկրտչյան, «Հայ մատենագրության հետագույն թվականները» (տե՛ս «Եջմիածին», Վաղարշապատ, 1913 թ., էջ 163)։

ՀԵՐՄԵԱՅ ԵՌԱՄԵԾԻ ԱՌ ԱՍԿՂԷՊԻՈՍ, ՍԱՀՄԱՆՔ

Աստուած՝ իմանալի աշխարհ. աշխարհ՝ զգալի աստուած. մարդ՝ բակտելի աշխարհ։

Աստուած՝ անշարժելի աշխարհ. երկիր՝ շարժուն աշխարհ. մարդ՝ բանաւոր աշխարհ։

Ապա երեմ ուրեմն աշխարհ. արդ՝ անշարժելի աշխարհ՝ աստուած, <շարժուն աշխարհ՝ երկիր>. իսկ բանաւոր աշխարհ՝ մարդ, զերկու միակին՝ աստուած եւ ըստ տեսակին՝ մարդ։

Երեք ուրեմն աշխարհք ամենայնք. երկու միակին զգալին, եւ մի՝ իմանալին, եւ մի՝ ըստ տեսակին, իսկ երրորդ՝ ըստ լրութեանն ամենայն բազմութեանէ երից աշխարհաց՝ երկու տեսանելիք՝ զգալին եւ բակտելին աշխարհ մարդ, իսկ իմանալին՝ է աստուած, ոչ է տեսանելի, այլ երեւելի l ի տեսանելիսս։

Որպէս անձն ի մարմնի տեսակ ունելով, զոր առանց անձինն անկար է բաղկանալ. այսպէս եւ ամենայն տեսանելիք առանց անտեսանելոյն բաղ-
100ա կանալի || ո՛չ կարէ։

Արդ. է փոքրիկ աշխարհ մարդ, ըստ անձին եւ շնչոյ, եւ աշխարհ կատարեալ, որոյ մեծութիւն ո՛չ առաւելու զգալին աստուած աշխարհ։

Աշխարհ իմանալի է աստուած, միտք ճշմարտութեամբք, անեղն։ Իմանալին էապես անեղն եւ անճառելին իմանալի բարի, միանգամայն ասել՝ աստուած իմանալի աշխարհ, անշարժ, միակ, անտեսանելի աշխարհ, իմանալի բարի, անտեսանելի եւ անճառ։

Աստուած է մշտնջենաւոր եւ անեղ. մարդ է մահկանացու. կենդանի միջոց լինելով։

Միտք է անտեսանելի բարի։

Անձն է ամենայն մարմնոյ յարդարուն, ճարկաւոր շարժումն։

Մարմին է ի բառից որակութեանց մու գեղեցկախառն բաղկացութիւն,

ի չերմոյ, ի ցրտոյ, ի ցամաքէ, եւ ի խոնաւոյ. ի չերմոյ, ի հրոյ, ի ցրտոյ, ի ցամաքէ, ի հողոյ, ի խոնաւոյ, ի չրոյ:

Շունչ է անձին մարմին կամ անձին սիւն:

Երկին է մարմին մշտնջենաւոր, մարմին անյեղափոխ՝ յանձնէ և ի մտաց խառնեալ:

Աղդ է երկնի մեկնութիւն եւ երկրի կամ երկնի շաղկապ:

Զի՞նչ է աղդ. զմիջոց երկնի եւ երկրի աղդ ասեն. բայ որում. ո՛չ են մեկնեալ ի միմեանց, քանզի միաւորեալ են երկին եւ երկիր աղդով:

Երկիր է նեցուկ աշխարհի, ենթակայ տարիցն. կենդանեաց դայեակ. մեռելոց ընդունիչ հրոյ, իբրեւ վերին զսա եղեալ:

Յետ հրոյ եւ չրոյ զի՞նչ կարէ աշխարհ զանմահսն այսպիսիս. որպիսիքն եղեն. միշտ պահել եւ զմահկանացուսն միշտ փոփոխել:

Զուր է սերուն գոյացութիւն, երկրի նեցուկ, իբրեւ թէ սենդական գոյացութիւնն:

Հուր է գոյացութիւն անսերուն, անմահ. անմարմնոցն տեղութիւն եւ մահկանացուացն ապականիչ, գոյացութիւն անրեղուն. իբր թէ ապականող ի հրոյ եւ անեղեալք արարողի եւ անմահիցն:

Ըստ որում, անմահն անապական է՝ որ ի հրոյ ոչ ծախի, իսկ մահկանացուն ապականի ի հրոյ:

Լոյս է բարի եւ առատ տեսումն, տեսանելեացն ամենեցուն երեւոյթ:

Հրոյ գոյացութիւն է այրեցող. բայց ա՛յլ է հուր, և ա՛յլ է լոյս, քանզի ընդ որ հարցի, հուր ապականի, իսկ լոյս այնպիսի է երեւոյթ, որպէս ինքն ասէ:

Զոր ինչ անձն շարժէ. միտքն իմանայ, հերգործութիւն իմն ելով շունչ հերգործէ:

Ո՛չ ինչ անքնակ է ստուգոյ. քանզի ուր երկին՝ է եւ ստուգած, իսկ ուր աշխարհ՝ է եւ երկին:

Զաստուած յերկնի կարծեմք եւ զերկին յաշխարհի:

Բազում անքնակ է մարդկան. զի ուր աշխարհ է՝ եւ երկիր, այլ ո՛չ յամենայն երկրի է ի մարդ:

100բ Ծով շատ է եւ երկիր, || բայց երկին մու եւ զոյգ ծովու եւ երկրի:

Եւ կամէր ասել՝ թէ երկին զոյգ է երկրի եւ ծովու բայ մեծութեան, որքան երկոքին են. զի ամենայն ինչ ի հերքս առեալ փակեաց եւ ի հերքս արգելեալ ունի:

Երկին քան զամենեսին մեծագոյն է, եւ արեգակն՝ քան զերկիր եւ զծով. զի ըստ երկոքին է տարածեալ: Բայց երկիր մեծագոյն է ծովու, զի ի նմա է ծով եւ յերկնի՝ ամենայնքն. քանզի զվերինսն ունի. իսկ զստորինսս ի հերքս շուրջ արգելեալ ունի:

Աստուած նախկին բարի ամենայն իմանալեաց. աստուած իմանալեացն հայր, երկին մարմնոյ արարիչ:

Մեծութիւն արեգական լուսոյ՝ է երկիր եւ ծով. մեծութիւն երկնի՝ է աշխարհի մեծութիւն, աշխարհի՝ է աստուած:

Որք յերկնին են կենդանիք. ի հրոյ եւ ի յատրոյ բաղկացեալ են, իսկ որք յերկրի՝ ի չորից տարից:

Բանաւոր կենդանի՝ մարդ, զի միտս ունի, բայց այլ ամենայն կենդանիք, որք ծայնաւորք են, զի շունչ ունին եւ անձն:

Զի ամենայն, որ նուազէ եւ անէ, կենդանի է. եւ ի կենդանեացն են՝ որ անմահք եւ շնչաւորք են:

Եւ են, որք միտս եւ անձն եւ շունչ ունին, եւ են, որ միայն շունչ, եւ են, որ անձն եւ շունչ, եւ են, որ միայն կեանս:

Զի կեանք առանց շնչոյ եւ մտաց եւ անձին եւ անմահութեան կարէ բաղկանալ, բայց այլքն ամենեքեան առանց կենաց անկար է գոլ:

Բան մտաց արքանեակ է, զի զոր կամին միտքն, զայս եւ բանն բարգմանէ:

Միտք զամենայն ինչ տեսանէ, իսկ աչք՝ զամենայն մարմնականս: Եւ սակայն միտք աչաց ո՛չ լինի դէտ, այլ աչք՝ մտաց:

Մտաց ո՛չ ինչ անճաս է, բանի ո՛չ անճառելի. լուս կայով իմանայ, խաւսելով խաւսի. բանզի ի լուրեանն միտ՝ յդանայ զբան:

Որ ի լուրենէ եւ ի մտաց՝ բան մու փրկուրիւն. որ ի բանէ՝ բան մու կորուստ. զի վասն մարմնոյն մարդն մանկանացու, բայց վասն բանի՝ անմահ:

Որ զբանն ո՛չ իմանայ, միտս ո՛չ ունի: Որ խաւսի առանց մտաց, ո՛չ ինչ ասէ. ո՛չ ինչ իմանալով միտս ո՛չ ունի եւ խաւսի. զի խաւսիլն ամբոխ է եւ ամբոխն ո՛չ միտս եւ ո՛չ բան ունի:

Բան մտաւոր աստուծոյ պարգեւ է, բան անմիտ՝ մարդոյ գիւտ է:

Ոչ ոք զերկին տեսանէ եւ որ ի նմա, բայց միայն՝ մարդ: Միտս եւ բան միա՛յն ունի մարդ:

Որպէս աստուածք՝ ստացուած աստուծոյ, մարդ՝ ստացուած մարդոյ:

Յաշխարհի երէ տեսողն ո՛չ էր, ո՛չ էր ապահէն եւ որ տեսանիւրն. մարդ միայն իմանայ զիմանալիսն եւ տեսանէ զտեսանելիսն, որք ոչ են ատար ի նմանէ:

101ա Մարդ զերկոսին բնութիւնս || ունի՝ զմանկանացուս եւ զանմահն:

Մարդ զերեսին զոյացութիւնս ունի՝ զիմանալին, զշնչականն եւ զնիւթականն:

Որպէս յորովայնէ ելեր, այսպէս եւ ի մարմնոյ ելցես: Որպէս յորովայն ո՛չ եւս մտցես, այսպէս եւ ի նիւթականս յայս մարմին այլ ո՛չ եւս մտցես:

Որպէս յորովայնի ո՛չ գիտէիր զաշխարհիս, այսպէս եւ արտաքոյ մարմնոյ եղեալ ո՛չ ծանիցես զարտաքին մարմնոյ էակս:

Որպէս ելանելով յորովայնէ զորովայնիսն ո՛չ ինչ յիշես, այսպէս եւ ի մարմնոյս ելանելով ո՛չ ինչ յիշեսցես:

Որ ի մէջ կայիս հոգ տանի, երբայ զհետ մէջ կայիս եւ հանդերձեալքն:

Որպէս յորովայնէ մանուկն կատարեալ ի դուրս գայ. այսպէս եւ անձն կատարեալ ի մարմնոյ անտի ի դուրս գայ, բանզի որպէս անկատար մարմին յորովայնէ ելեալ անսուն եւ անաճ է. այսպէս եւ անձն ի մարմնոյ ելեալ անկատար անմարմին է, զի կատարելութիւն անձին՝ գիտութիւն էակացն:

Որպէս անձին ի մարմնոյդ արասցես, այսպէս եւ դա ելեալ ի մարմնոյդ արասցէ քեզ: Կայ զքեզ, ո՛վ եռամեծ:

Իսկ արդ, զի՞նչ է մարդ, զի երէ ոչ մարմին, ո՛չ անձն, յէ՛ Ասկղէպիէ սիրելի. որ ո՛չ անձն է, ո՛չ միտք, ո՛չ մարմին:

Զի է՛ ինչ, որ լինի մարմին մարդոյն եւ են ինչ, որ զան առ մարդն:

Արդ, զի՞նչ պարտ է նմա կոչել մարդ ապահէն, ո՞վ Ասկղէպիէ. եւ մարդն զի՛նչ է. անմահ տեսակ ամենայն մարդոյ եւ ամենայն կենդանւոյ:

Եւ մարդոյն տեսակ յերկնի, եւ յաւդ, յերկրի, եւ ի ջուր:

Իբրեւ հրաշ իմն յորովայնի մարմինն ստեղծանի, այսպէս եւ ի մարմնի՝ անձն:

Ի թոյլ ի լոյս ելանէ մարմինն յորովայնէ եւ անձն ի խաւար ի լուսոյ մտանէ ի մարմինն:

Մարմնոյ տեսողք աչք եւ անձին՝ միտք, որպէս մարմին աչս ո՛չ ունելով ո՛չ տեսանէ, այսպէս եւ անձն միտս ո՛չ ունելով կոյր է:

Որպէս պակալեսցէ ցանկութեամբ որ յորովայնին է, այսպէս եւ մայրն ցանկայ, այսպէս եւ որ ինչ յանձինն պակալեսցի ցանկութեամբ, զայս եւ մարդն ցանկայ:

Անձն առ հարկի մտանէ ի մարմին, բայց միտք ըստ բնութեան մտանէ յանձն:

Անձն արտաքոյ ելով մարմնոյ՝ անորակ եւ անքանակ է, ի մարմին եղեալ՝ զորակն եւ զքանակն ընդունելի, եւ զքարին եւ զչարն, զի նիւթն սոցա արարչական է:

Աստուածն յիներեան է, աշխարհ յաստուածում է, մարդն յաշխարհի: Սորա պակասութիւնն՝ ոգիտութիւն է, սորա լրութիւն՝ գիտութիւն աստուծոյ:

Ասէ զչարն՝ յանգիտութենէ եւ զքարին՝ ի գիտութենէ:

Առաւել բան զաւրուք կարողութիւն ամենեցուն, անկարելի է:

101բ Բնութիւն է իւրաքանչիւր ինչ սոցա էիցս, || ուրէն ի վերայ ճակատագրին յերկնի:

Ու ճակատագիր է, որ ըստ արժանաւորութեան է եղեալ, աւրէն է, որ ըստ մարդկան հարկաւորութեան, աստուած է, որ ըստ կարծեաց մարդկան է եղեալ:

Աստուածային մարմինքն անցս զնացից զզայութեանց ո՛չ ունին, զի յինքեանս իսկ ունին զզայութիւնս, եւ նոյն իսկ ինքեանք զզայութիւնք են:

Չոր աստուած առնէ՝ մարդ ո՛չ առնէ, եւ զոր ինչ աստուած առնէ՝ մարդոյ առնէ, բայց զոր մարդ առնէ՝ անձին առնէ:

Որք զկուս պատկերս պաշտեն, զի երբէ զիտութեամբ պաշտէին, ո՛չ մոլորեալ էին, բայց ո՛չ գիտելոյն զիա՛ղ պաշտեն, մոլորեալ են ի բարեպաշտութենէ:

Մարդ սպանանել կարէ, աստուած՝ կեանս տալ:

Մարմին անէ եւ նուազ է բնութենէն, իսկ անձն լնու ի մտաց:

Ամենայն մարդ մարմին եւ անձն ունի, այլ ո՛չ ամենայն անձն՝ միտս:

Երիս միտք են, է՛ որ արժանաւոր եւ է՛ որ անձնական, բայց են ոմանք, որ եւ զանձնականն ոչ ունին:

Որ զմարմինն իմանայ՝ եւ զանձն իմանայ, որ զանձն իմանայ՝ եւ զմիտս, քանզի սմանչելին բնական տեսութիւնքն է, երկմանչիւրքն ի ձեռն երկմանչիւրոյ տեսանին:

Թնութիւն հայելի է նշտուրեան, սէ եւ անմարմնոցն է մարմին եւ անհեւութիւնքն լոյս վարդապետ ամենեցուն առատ բնութեամբ:

Երբէ ոչ ինչ քեզ վարկպարագի զործ բռնեսցի զոլ, զտցես զզործն եւ զարարողն, երբէ խաղ քեզ բռնեսցի, խաղ լիցիս:

Դու ունիս իշխանութիւն ազատել, զի ամենայն ինչ քեզ տուաւ, ո՛չ ոք չափական է քեզ:

Ամենայն ինչ քեզ եղեւ, զի ի ձեռն միոյ կամ ամենայնի իմասցիս զարարողն, քանզի զոյ իշխանութիւն քեզ կամել ո՛չ իմանալ, զոյ իշխանութիւն քեզ թերանաւատել եւ վրիպել եւ ներհականս էակացս իմանալ:

Այնքան ունի մարդ իշխանութիւն, որքան եւ աստուածք, միայն մարդ ազատ կենդանի, միայն սա բարոյն եւ չարին ունի իշխանութիւն:

Ո՛չ զոյ քեզ իշխանութիւն անմահ լինել, քանզի ո՛չ եւ անմահին մեռանել քեզ, եւ աստուած քոյ լինել, երբէ կամիցես, զի կարելի է, քանզի կամեա՛ց եւ իմա՛ եւ հաւատա՛ եւ սիրեա՛ եւ եղեր:

Ամենայն մարդ զաստուած կարծէ, քանզի երբէ մարդ է զաստուած գիտէ:

Ամենայն մարդ զնոյն աստուած կարծելով, մարդ է եւ աստուած, եւ ամենայն՝ յաստուծոյ եւ վասն մարդոյն:

Աստուած է ամենայն ինչ եւ ո՛չ մի ինչ ո՛չ առանց աստուծոյ, քանզի աստուած ո՛չ ինչ է եւ ոչ մին:

Վասն աստուծոյ՝ մարդ, վասն մարդոյ՝ ամենայն ինչ:

Աստուած մարդոյ իշխէ եւ մարդ՝ ամենայնի:

Յարտաքնոյն՝ արտաքոյրն իմանին: Ակն զարտաքոյսն տեսանէ, իսկ միտք՝ զի ներքսն:

102ա Ուրանաւ միտք՝ անդանաւ || լոյս, եւ ուրանաւ լոյս՝ անդանաւ եւ միտք, քանզի միտք՝ լոյս եւ լոյս՝ միտք, որ միտս ունի՝ լուսաւորեալ է:

Որ զաստուած գիտէ՝ յաստուծոյ երկնչի, որ զաստուած ո՛չ գիտէ՝ յաստուծոյ ո՛չ երկնչի:

Որ ո՛չ ինչ գիտէ էակացս՝ յամենայն իմեէ երկնչի, իսկ որ զամենայն ինչ գիտէ էակացս՝ ոչ յիմեէ երկնչի:

Հիւանդութիւն անձն՝ տրտմութիւն եւ խնդութիւն: Կիրք՝ անձին ցանկութիւն, եւ կարծիք՝ նման է անձանց:

Եւ մարմինք ի տեսանել ո՛չ ոք բարի, զազիր, ո՛չ ոք լաւ, չար՝ ամենայն ինչ տեսանելի է՝ որ միտս ունի:

Որ ընդ միտ ածէ զինքն, զիտէ զինքն, եւ որ գիտէ զինքն, զամենայն ինչ գիտէ:

Ամենայն ինչ ի մարդոջէ, որ մարմնոյ դիւր առնէ, իւր դժուար առնէ:

Մարմին առանց անձին մեռեալ է եւ առանց մտաց՝ մոլար: Անձն ի մարմնի մտեալ՝ զմիտս ստասցի:

Եր միտս ո՛չ ստանայ. այնպիսի ելանէ. որպէս հմուտն. քանզի անձն ամենայն նախ քան ի մարմին մտանել անմիտ է. եւ յարին-ի սա միտ՝ ի մարմնոյն եւ այնպէս ապա լինի անձն մտաւոր:

Եր ի մարդկային մարմնոյն ել ի դուրս, յիշատակախտ. քանզի անձն ի մարմնոյ ծածկեցեալ բոնադատի՝ սա յիշել զիւր անմոռացութիւն փոփոխումն է անմոռաց եւ փոփոխումն մոռացութիւն գործէ:

Եր մարդ է՝ եւ աստուած:

Ո՛չ ումեք երեւի աստուած, բայց միայն մարդոյ:

Վասն մարդոյ՝ աստուած ի մարդ շրջեալ կերպարանայ:

Աստուած՝ մարդասէր, մարդ՝ աստուածասէր. մի ազգակցութիւն աստուծոյ եւ մարդոյ:

Միայնոյ մարդոյ աստուած լսէ եւ մարդ՝ աստուծոյ:

Երկրպագելի՝ աստուած, զարմանալի՝ մարդ: Աստուած ո՛չ երեւի առանց մարդոյ:

Ծանկալի է աստուծոյ մարդ եւ աստուած՝ մարդոյ, քանզի ցանկութիւն ո՛չն իմեքէ, բայց ի մարդն եւ յաստուած:

Զերկիր գործեն մարդիկ, զերկին զարդարեն ասահքք:

Զերկին աստուածք ունին, զերկիր եւ գնով՝ մարդիկ, բայց ապդ նասարակ է աստուածոց եւ մարդկան:

Զի՞նչ է լու՝ որ բաղդատութիւն ոչ ունի. լուն անեղեւոյթ է, շարն անեղեւոյթագոյն է:

Զի՞նչ է էգ. լուծումն բնդունական:

Զի՞նչ է արու. լուծումն սերմնական:

Բնութիւն է ամենակերպն ի մարդում եւ ամէն որակ ներգործութիւն եւ ամէն որակ՝ կար:

Որոյ ներգործութիւնն անեղեւոյթ եւ գործքն երեւելագոյն, ներգործութիւն է, շարժումն նիւթ է, խոնաւ գոյացութիւն:

Մարմին է մածումն նիւթոյ:

Միտք յանձին եւ բնութիւն՝ ի մարմնի:

Միտք անձին արարիչ եւ բնութիւն՝ մարմնոյ:

Ո՛չ յամենայն անձին միտք, բայց յամենայն մարմնի՝ բնութիւն:

Անմահ բնութիւն՝ շարժումն մահկանացու բնութեանս:

102բ || Երկիր՝ գերեզման անմահին՝ երկին՝ տեղի:

Անմահն եղեւ վասն անմահկանացուին, իսկ մահկանացուն լինի ի ձեռն անմահին:

Չար է պակասութիւն բարւոյն, բարի է իւր լրութիւն:

Անձն յաշխարհի եղանելի է միտք եւ նիւթ բաժանարար, անեղանելի՝ միտք, նիւթ՝ բաժանելի:

Անձն եռամասն եւ նիւթ՝ երեք մասունք յանձին եւ ի նիւթ եւ ի բնութիւն. միտքն աստուածոջ ի բնութեան անմահիցն:

Նախախնամութիւն եւ յարկ եւ ի մահկանացուին եղելութիւն եւ մահ եւ յաստուածոջ անեղութիւն:

Անմահքն ընդ ինքեանս միաբանին եւ մահկանացուքս ընդ ինքեանս նախանձին շարակնութեամբ, քանզի նախանձ չար բարկանայ:

Ծաղագս յառաջ գիտելոյ զմահն, անմահ առնէ, զոր միշտ առնեն, բայց մահկանացուն առնէ զոր ո՛չ երբեք արար:

Մահ իմացեալ՝ անմահութիւն է, ոչ իմացեալ՝ մահ:

Մահկանացուք ընդ անմահիքն անկեալ դնին, բայց անմահքն մահկանացուացս սպասաւոր լինին:

Ապա անձն ուրեմն է գոյացութիւն անմահ, մշտնջենաւոր՝ իմացական իմացուած ունելով, զիւր բանն պարիմացական բնութիւն չար իմանալով, զխորհուրդս յաւմարութեան գիտէ եւ ի բաց վնարեալ ի բնական մարմնոյս, ինքեան ըստ ինքեան տրամի՝ ըստ ինքեան ելով յիմանալի աշխարհի, իսկ սկզբնասէր գոյութիւն:

Արդ, չորեքին տարերաց առ չորս վարս զեղապէս կալով պարունակեալ լինի միշտ փոխադարձեալն առ ի մեծագունէն այսպէս. երկիր՝ ի ջրոյ, ջուր՝ յադոյ, ադն՝ ի հրոյ:

Եւ ի միասին խառնումն չորից տարերացս այսպէս. երկիր՝ ցուրտ եւ ցամաք, ջուր՝ ցուրտ եւ խոնաւ, ադ՝ խոնաւ եւ ջերմ, հուր՝ ջերմ եւ ցամաք:

Դարձեալ ունի եւ այլ երկու որակութիւնս. երկիրս՝ խիտ է եւ ծանր, ջուր՝ բուռ է եւ գէջ, ադ՝ խիստ է եւ շարժուն, հուր՝ սուր է եւ անգայտ:

Դարձեալ եւ այլ որակութիւնս ունին. երկիր ծանր է եւ անշարժ, ջուր ծանր է եւ անշարժուն, ադ բեբեւ է եւ շարժուն. հուր սուր է եւ բեբեւ:

Եւ խառնին ընդ միմեանս այսպէս. երկիր ցամաքութեամբն ընդ հրոյ, իսկ ցրտութեամբ ընդ ջրոյ. ջուր ցրտութեամբ ընդ երկրի, իսկ խոնաւութեամբ ընդ ադոյ. ադ խոնաւութեամբ ընդ ջրոյ եւ ջերմութեամբ ընդ հրոյ:

Դարձեալ ըստ մակարարութեան խառնեալ են այսպէս, հուր ջերմ է եւ ցամաք. ջերմութեամբ ընդ ադոյ միասնոյ եւ ցամաքութեամբ՝ երկրի: Ադ խիստ է եւ շարժուն. խստութեամբ ընդ ջրոյ միանայ եւ շարժմամբ՝ ընդ հրոյ: Ջուր ծանր է եւ շարժուն. շարժութեամբ ընդ ադոյ միանայ եւ ծանրութեամբ՝ երկրի:

Այսպէս յարմարեալ են առ իւրեանս, ծանրն ընդ բեբեւին եւ խոնաւն ընդ չորին, սուրն ընդ բբին եւ անգայտն ընդ խտին, գոլեցկապէս զմիմեանս կալեալ են որպէս եւ արք երկու:

Ի խոնարհ կալով եւ ի բարձրութիւնս գնեալս տուեալ պնդեն զմիմեանս. հուր բեբեւութեամբ եւ սրութեամբ բուռն հարեալ զմանրութենէ երկրի եւ զանշարժութենէ, եւ ադ ջերմութեամբ՝ զցրտութիւն եւ ջուր խոնաւութեամբ կալեալ զցամաքութիւն երկրի:

Եւ արդ՝ չորեքին տարերս մարմին զոյլիս ներգործեալ ո՛չ է սոցա առանց որակացն:

Եւ սոցա որակս ո՛չ են որպէս այլ որակքս, այլ՝ զանազան կամ զպիտակն. այլ սոցայս ազդարարք էին, զի սեւն եւ սպիտակն ո՛չ ազդէ բովանդակ մարմնոյն, որպէս ցրտացուցանելն եւ չեռուցանելն եւ այլն:

103ա Արդ, Պղատոն զերիս տարերս ասաց ի միմեանս փոխարկել՝ զհուր, եւ զջուր եւ զադ, եւ զերկիր անփոխադրելի մնալ, զի անշարժագոյն է քան զայլսն:

Եւ Արիստոտել ճինգերորդ տարր ասաց, որպէս թէ հուր եւ ջուր, երկիր եւ ադ, եւ արփի: Եւ զարփիս զայս՝ ասեալ ի չորիցս էութեանց, որպէս թէ աստուածոց բնակարան լինել զնա ասաց, զոր բազումք հաւանեալ ճինգերորդ ասութեան էիցս, զոր արփի ասէ շրջապատող:

ԹԱԴԵՈՍ ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆ

ԶՎԱՐԹՆՈՑԻ ՇՈՒՐՋԸ*

(Հայ արվեստի պատմության հարցերից)

1) ՀԻՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՇԻՆԱՆՈՑԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Առաջին հանգույցը, որ կարևոր է լուծել, այն է, թե ինչու Զվարթնոցի համար հենց այն առապարն է ընտրված, որ անմշակ էր և անմարդաբնակ։

Այս հարցին հեշտ կլիներ պատասխանել, եթե մենք ունենայինք Վաղարշապատի տեղագրական-հնագիտական մանրամասն նկարագրությունը, որ դժբախտաբար մինչև այժմ չունենք։ Վաղարշապատը, որ ունեցել է և ունի տեղացի մտավորականություն, տեղագրական-հնագիտական ու ազգագրական տեսակետից չի տվել այս կարգի նույնիսկ 1/10 գրականություն այնքանի, ինչ որ տվել է Աշտարակը հանձին Պոտշյանի։ Սրա հետևանքով, ամոթ է ասել, մինչև օրս միակ աղբյուր մնում են Սիմեոն Կաթողիկոսի «Ջամբռ»-ը, Շահխաթունյանի երկհատորն ու Ալիշանի «Այրարատ»-ը

Որ Վաղարշապատը կամ Նոր քաղաքն էջմիածնով հանգերձ իրենց նախկին տեղում են,— այս մասին ոչ մի կասկած լինել չի կարող։ Ինչպես հազարամյակ ու դարեր առաջ, այնպես և հիմա, Գայանեի վանքը կարելի էր գնալ «ի քաղաքէն ընդ դուռն հարաւոյ ընդ կողմն պողոտային, որ հանէր ի Մեծամօրի կամուրջն»[1]։ Այս պողոտան այժմյան Վաղարշապատ—Իգդիր խճուղին է, որ անցնում է Սև ջրի կամուրջով և հնում հավանորեն սկսվում էր Գայանեի վանքի մոտերքից։ Ինչպես առաջ, այնպես և այժմ Հռիփսիմեի վանքը գտնվում էր «ի հիւսիսոյ յարևելից կուսէ... քաղաքին»[2]։ «ի սաբաանդակ ի բարձրաւանդակ յառաջին տեղի մի մօտ ի բուն պողոտայն, որ երթայր յԱրտաշատ քաղաք»[3]։ Այս բուն պողոտան էլ այն ճանապարհն է, որ Հռիփսիմեի մոտերքում երկճղվելով տանում է Երևան ու Արտաշատ։

Սակայն մի բան, որ մտահան է արվում, այն է, որ հիմակվա Վաղարշապատը բավական առաջ է խաղացել դեպի հյուսիս-արևելք՝ բոլորովին մոտենալով Հռիփսիմեին, այնինչ հնում այս վանքը հեռու էր «հարուատ մի ի քաղաքէն ի կողմն մի հիւսիսոյ, ի տեղի մի յարևելս կոյս»։ Վաղարշապատի այս դեպի Հռիփսիմե առաջխաղացման հիմքը դրված է ԺԸ դարում Սիմեոն կաթողիկոսի ձեռքով։ Այս մասին «Ջամբռ»-ի մեջ կարդում ենք. «ի շինելն զպարիսպ սրբոյ Աթոռոյս՝ զմերձ գեօղս մեր, որ կից և անմիջոց վայրօք և խառն ի խուռն շինուածովք շրջապակեալ էր զՍուրբ Աթոռովս քակեալ հեռացոյց (Սիմեոն—Թ. Ա.) ի պարսպէս և յԱթոռոյս և իւրով արդեամբք վերստին շինեաց զտունսն և զեկեղեցին ի հիւսիսակողմն միաժողով և ընակակից իրերացն»։

Վաղարշապատի Ս. Աստուածածին եկեղեցու արձանագրությունը տալիս է գյուղը տեղից խաղացնելու թվականն էլ. «Շինեցաւ սուրբ եկեղեցիս, և հեռացաւ գեօղն յԱթոռոյն ի շինել պարսպի արդեամբք և հրամանաւ

* Զեկուցված է ՀՍՍՀ Գիտության և արվեստի ինստիտուտի գրական-գեղարվեստական բաժնում 1928 թվականի մարտի 4-ին։

1 Ագաթանգեղեայ «Պատմութիւն Հայոց», աշխ. Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Կանայանց Տփղիս, 1909 թ., § 206, էջ 111, § 759, էջ 394։

2 Նույն տեղում, § 150, էջ 85, § 759, էջ 394, § 766, էջ 398։

3 Նույն տեղում, § 192, էջ 104։

4 Նույն տեղում։

5 «Ջամբռ», Վաղարշապատ, 1873 թ., էջ 36—37։— Ալիշան. «Այրարատ», էջ 203—204։

Տեառն Սիմէոնի Սրբազան Կաթողիկոսի երևանցւոյ... ի ՌմԺԶ» (1777 թ.)[6].

Մինչդեռ հիմա էջմիածինը գտնվում է Վաղարշապատի հարավային կողմում, և վանքից հարավ բնակություն չկա, 1777 թվականից առաջ Վաղարշապատը շրջապատում էր էջմիածնի վանքը չորս կողմից։ Աշխարհականների տներ ու թաղեր կային ոչ միայն հյուսիսում, այլև հարավում, այժմյան Վաղարշապատի մոտերքում, արևելքում (հիմակվա տպարանի ու Ճեմարանի տեղը) և արևմուտքում (այժմյան նոր Վեհարանի շրջակայքում)։ Շատ հավանական է, որ այսպես էր նաև հնում, և այս հաստատվում է Ագաթանգեղոսով, ըստ որի էջմիածինը շինվում է «ի մէջ քաղաքիս, մօտ յապարանսն արքունի»[7]։ Հասկանալի է, որ մայրաքաղաք Վաղարշապատը շատ ավելի ընդարձակ տարածություն կընդգրկեր էջմիածնի ու արքունի ապարանքի շուրջը, քան կարող էր ընդգրկել ԺԸ դարում մի սովորական գյուղ դարձած Վաղարշապատը։ Հին մայրաքաղաքի ընդարձակության մասին մի մոտավոր գաղափար է տալիս այն պարիսպը հունական արձանագրությամբ, որ լույս է եկել պատահական գեպքով 1862 թվականին Վաղարշապատ հին մայրաքաղաքի արևելյան պարսպի փլատակներում, այժմյան Ճեմարանի ննջարանի ամայի բակի արևելյան պատի մոտ, որի կողքից անցնում է Իգդիր տանող խճուղին[8]։ Արել եպիսկոպոս Մխիթարյանցն այդ տեղը որոշում է դրելով. «անդր քան դայժմեան կայատեղիս գիւղացոց... ի հիմն պարսպին թաղելոյ ընդ հողով»[9] և այլն։

1842 թվականին Շահխաթունյանն այսպես էր նկարագրում այս պարիսպը.

«Փոքր ինչ նշմարին հիմունք պարսպի նորա յարևելեան կողմն Կաթուղիկէ Տաճարին Սրբոյ հեռու այժմեան արտաքին պարսպէ իբրև ըմբաձիգ մի հրացանից, որոյ և երկայնութիւնն ի հիւսիսոյ ի հարաւ դտանի իբրև եօթն հարիւր յիսուն քայլ և ի միջին տեղւոջ երկայնութեանն ունի և գնչան տեղւոյ դրանն արևելեան, զոր «Արևգ դուռն» անուանէին. և հարաւային ծայր հիմանս այսորիկ հայի ուղղակի ընդ մէջ մնծի Կաթուղիկէին և մենաստանին Գայիանեայ կուսի, որով պարիսպն առնու ի մէջ իւր գտեղին պարծարանի թղթաշինութեան. իսկ հիւսիսային ծայրն առաջացեալ յարևմուտս ունի պարսպի տեղի զոր ի գիւղամէջ անդր. ուստի այս ձև հեմանց պարսպին կացուցանելն՝ ցուցանէ զբերդն շինեալն ի Վաղարշակայ երկար քառանկիւնի յարևելից յարևմուտս»[10].

Այսպիսով Հին Վաղարշապատի արևելյան պարսպի տեղը որոշվում է։ Մայրաքաղաքի հարավային սահմանն էլ անցնում էր այժմյան Գայանեի վանքի հյուսիսային կողմից, որտեղ էր «պարկէն փոս»-ը, «որ շուրջ գայր գքաղաքաւն»[11]։ Այս փոսն անկասկած պարսպի մոտ փորված խրամատն էր, որ չորս կողմից պատում էր մայրաքաղաքի սահմանները։ Միմիայն ունենալով մայրաքաղաքի կենտրոնը՝ հիմակվա էջմիածնի վանքը, շարունակելով արևելյան ու հարավային պատերը և սրանց հեռավորության չափով զուգահեռականներ անցկացներով արևմտյան ու հյուսիսային կողմերում՝ մենք կունենանք Վաղարշապատի կամ նոր քաղաքի շինանոցային սահմանները։ Հակառակ հիմակվա Վաղարշապատի դեպի հյուսիս-արևելք ընդարձակվելու միտումին՝ հին Վաղարշապատը պետք է ավելի դեպի հարավ-արևմուտք առաջ խաղալու հակում ունենար՝ ձգտելով տարածվելու «զՔասաղ գետովն», որ նրա տրոհության գարկերակն էր նաև հնումը։

2) ԱՌԱՔԱՐԻ ԲԵՐԴԱՔԱՂԱՔԸ

Զվարթնոցը շինվել է Հին Վաղարշապատից մոտ 4 վերստ հեռու քարքարոտ, առապար տեղում։ Սակայն հիմա դժվար է պնդել, թե այս եկեղեցին կառուցվել է սոսկական, հում վայրում, որտեղ ավելի վաղ ժամանակներում չեն եղել մարդկային ձեռակերտներ։ Ընդհակառակը, հետզհետե կուտակվող փաստերը բացահայտ ապացուցում են, որ Զվարթնոցի առապարը, որ տարածվում է մինչև Օշական, հնագարյան խոշոր շինանոց է կրել իր գահավանդների վրա ու մոտերքում։

[6] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Գ, «Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը», Ա հատոր. Թիֆլիս, 1894 թ., Դյուտ Բահանա Աղանյանցի առաջաբանը, էջ 28։ Ալիշան, «Այրարատ», էջ 209։

[7] Ագաթանգեղոս, § 736, էջ 384, § 770, էջ 400։

[8] Բարթողիմեոս եպիսկ. Գնունցյան (Ճանուչյան). «Վաղարշապատ և էջմիածին իրենց ակդրնական տեղում են», Մոսկվա, 1905 թ., էջ 7—8։

[9] Նույն տեղում, էջ 9։

[10] Հովհաննես եպիսկ. Շահխաթունյան. «Մատենագրութիւն էջմիածնի», հատ. Ա, Վաղարշապատ, 1842 թ., էջ 79—80։ Հմմտ. Արել արքեպիսկոպոս. «Վաղարշապատ քաղաքամայր Հայաստանեայց», Վաղարշապատ, 1874 թ., էջ 53—64, որտեղ այն կարծիքն է հայտնվում, թե Վաղարշապատը հռանկյունի էր և տարածված մինչև Քասաղ և Մեծամոր (Սև լեռ)։

[11] Ագաթանգեղոս, § 206, էջ 111։ Հրատարակիչները...Տեր-Միկելյան Դավիթ և Ստ. Կանայան—գրում են փորրատառ, իսկ Ալիշան («Այրարատ», էջ 207, Արել եպիսկ. (էջ 61) և այլն, «պարկէն փոս»-համարել են հատուկ անուն, այնինչ այս հասարակ անուն է՝ հայտնի դեռևս Հայկազյան բառգրքին, (հատ. Բ, էջ 637), որը բացի Ագաթանգեղոսի հետևյալ հատվածից, բերում է 2 վկայություն էլ Զենոն պատմագրից։

Առաջին անգամ Խաչիկ վարդապետն է հաղորդել, թե «Հռիփսիմեի վանքից մինչև Աթաբեկյանի կալվածի (Ներսեհապատ գյուղ— Թ. Ա.) հարավ-արևելքից հյուսիս ընկնող կիսաբոլորակ բլուրների շարքը հին քաղաքի պարսպաբլուրներ են ներկայացնում»[12], 1904 թվականի նոյեմբերին եղիշե վարդապետ Տեր-Մուրադյանն ու Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանը Զվարթնոցի շրջակայքում «երա արևելահարավային կողմերում», «ընդարձակ բլուրների շարքերում» գտնում են «ամենազանազան կետերում խիստ հաստ պարսպի հետքեր, երբեմն մինչև երկու կես արշին հաստությամբ»։ «Այլևս կասկած լինել չէր կարող,— գրել է Տեր-Մովսիսյանը,— որ մեր առաջ ընկած են մի մեծ հին քաղաքի ավերակներ, և որ Խաչիկ վարդապետը արդար է եղել՝ հայտնելով, որ այդտեղ ավերակ քաղաք է գտելը»[13]։ Բարթողիմեոս եպիսկոպոս Ճուղուրյանը 1910 թվականին գրում է, թե «Զվարթնոցին կից արևմտյան կողմում բացված շենքերի հիմքերը դրված են ավելի հնագույն շենքերի այրվածքների վրա։ Անհայտ ժամանակից մնացած սյուների երեք հատ ներքնախարիսխները, որոնց վրա նկատելի են հրդեհվածքի նշաններ, ոչ մի առընչություն չունեն Զվարթնոցի շենքերի հետ... և որոնք մեկ-մեկու կողքի կպած դրված և ծածկված էին բացված շենքերից մեկի ոչ գոնե մեջը, այլ հատակի տակ, գետնի մի-ջում»[14]։ «Որ այդ տեղում,— գրել է իր մի այլ դրքում Ճուղուրյանը,— Զվարթնոց կամ Աոապարի Ս. Գրիգորի եկեղեցու տեղում առաջ քան Ներսես Շինողն և նույնիսկ Տրդատ և Լուսավորիչ եղել է որևէ հին հաստատություն, շատերս ենթադրել և միմյանց հետ դրուցել ենք, ինչպես ես և պ. Կ. Հ. Բասմաջյանը... իսկ պ. Հերմեսը «Նոր-Դարում» (1900 թ. № № 203 և 208) հայտարարեց սյդպիսի ենթադրություն»[15]։ Եթե վերոդրյալի վրա ավելացնենք նույն միջավայրում գոյություն կուրգանների, որոնց պեղման անհայող փորձ էլ է կատարված եղել[16], այլև Արգիշտիի որդի Ռուսայի (է դար մ. թ. ա.) սեպագիր արձանագրության գտնվելը Զվարթնոցի ավերակներում հաստատում են, որ Աոապարը (լայն շրջանակով վերցրած) հնադարյան մշակույթի մի կենտրոն է եղել և ոչ թե հնուց ի վեր ամայի վայր։

Աոապարը հնադարում շատ ավելի քարքարոտ պետք է եղած լինի, քան այժմ։ Ով երբևէ կարդացել է հին ավերակների նկարագրություն և տեսել նրանց արդի վիճակը, նա հեշտությամբ նկատած կլինի, թե ինչպես արագությամբ փոխվում է տեղի տեսարանը նույնիսկ մեկ հարյուրամյակի ընթացքում։ Այն վայրը, որտեղ մի ժամանակ կային պարիսպներ ու աշտարակներ, վաղը կարող է դառնալ նույնիսկ արտավար։ Գյուղերի միջև ընկած ավերակներն ու քարքարուտները, ծառայելով իբրև շինանյութի հանքավայր, դանդաղ կամ շատ արագությամբ կորչում են իրենց նախկին քարքարոտ տեսքից։ Իսկ այնպիսի մի վայր, ինչպիսին Աոապարն է, որ մոտ 3000 տարի շինանոց է եղել կամ ընկած մնացել է ոտի տակ, է՛լ ավելի արագությամբ պետք է սպառած լինի իր վիմական հարստությունը։

Կատարելապես քարքարոտ առապարի գոյությունը միշտ հնարավոր է դարձրել հնադարյան քարարերդերի շինությունը։ Մինչ-հայկական բոլոր բերդերը շինված են բարքարոտ առապարներում կամ ժայռոտ քարաքիթերի վրա։ Զվարթնոցի (կրկնում ենք, ընդարձակ շրջանակով վերցրած) առապարն էլ, շատ հավանական է, հնադարում եղել է մինչ-հայկական բերդ, ապա և բերդաքաղաք, որը թերևս հետագայում էլ բնակելի է եղել՝ ենթարկվելով տարբեր շրջանների մշակույթների ազդեցության։ Այս բերդը եղել է մեկը մինչ-հայկական այն կենտրոններից, որոնք մի թևով հարևան են եղել հնադարյան Երիանի—Երևանին, իսկ մյուս կողմից՝ Արգիշտիների Արմավիրն։ Զվարթնոցի շրջակայքում մինչ-հայկական մի խոշոր շինանոցի գոյությունը հնարավոր է դարձնում այն միտքը, թե Արգիշտիի որդի Ռուսայի սեպագիրը բերված է ոչ թե ուրիշ վայրերից, այլ տնկված է եղել եթե ոչ հենց Զվարթնոցի տեղում, գոնե Զվարթնոցի ընդարձակ Աոապարում[17]։

Ավելորդ վեճերից ու հնարավոր թյուրիմացություններից խուսափելու համար, մենք

12 Մեսրոպ վարդապետ (Տեր-Մովսիսյան) «Էջմիածին և հայոց հնագույն եկեղեցիները», էջ 13 կամ «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1907 թ., գիրք XV, էջ 97)։

13 Նույն տեղում։

14 Բարթողիմեոս եպիսկ. Գնորգյան (Ճուղուրյան). «Գրախոսություն գրական, բանասիրական, Աղեքսանդրապոլ, 1910 թ., էջ 18։

15 Բարթողիմեոս եպիսկ. Գնորգյան (Ճուղուրյան). «Հերենացին Խորենացով պետք է հասկանալ», Բ հատ., Թիֆլիս, 1913 թ., էջ 173։

16 Մեսրոպ վարդապետ, «Էջմիածին և հայոց հնագույն եկեղեցիները», Վաղարշապատ, էջ 14, կամ «Ազգագրական հանդես», 1907 թ., գիրք XV, էջ 98։

17 «Անկարելի նա (արձանագրությունը— Թ. Ա.) այստեղ է բերված ուրարտեան որևէ շինությունից» (Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյան, «Ազգագրական հանդես», 1907 թ., գիրք XV, էջ 128)։ «Ոչ մի հիմք չկա կարծելու, թե այդ արձանագրությունը ուրիշ տեղից բերված լինի այնտեղ» (Բարթողիմեոս եպիսկ. Ճուղուրյան, «Գրախոսություն», էջ 18)։

հնադարյան այս շինանոցը կանվանենք Առապարի բերդաքաղաք։ Վերջինս կենտրոնն էր մի երկրի, անշուշտ փոքրիկ երկրի, ավելի ճիշտ մի գավառի, որ սեպագիր արձանագրության մեջ հիշված է հականե հանվանե. այս երկրի անունը Լեմանն ու Գալենիշլիը կարդացել են Կուտարլիին, Սանտալճյանը՝ Քուիդա ու Բասմաջյանը՝ Կուտուտրլի[18]։ Ալիշանը, խոսելով Զվարթնոցի առապարի մասին, գրել է, թե «այժմ մերձաւոր սահմանն Քալթարաձոր կոչեն»[19]։ Այս տեղանվան մի-ջից ձոր բառը հանելով կմնա Քավքար կամ թե Քավքարա. որ աղոտ հիշեցնում է Կուտար—Քուիդա—Կուտուտր մասը սեպագրի տեղանվան։

Սեպագիրը վերծանողներն ընդհանուր առմամբ համերաշխ են այն կետում, որ հաղթական Ռուսան ջուր է հանել Իլդարու կամ Իլդարուն դեմից դեպի առապարները և այգիներ տնկել (ըստ Լեմանի՝ Իլդարու, ըստ Բասմաջյանի՝ Իլդարուն)։ Այս գետը կարող է լինել կա՛մ Քասաղը կա՛մ Հրազդանը։ Մեզ հավանական է թվում, որ այս գետը Քասաղն է։ Ոմանց, օրինակ Ե. Շահազիզի, հայտնած կարծիքը, թե Իլդարուն Հրազդանն է, և Ռուսայի ջրանցքը՝ Հրազդանից հանած դեպի Վաղարշապատի հանդերը հոսող Դալմա մեծակերտ առուն, հերքվում է «Ջամբռ»-ով, ըստ որի այս «Դալմա» (ծակովի) առուն, որ տարբեր է բուն Դալմա առվից, ժէ դարում հանել են Երևանցի Պուրճ-Ալի բեկ տոճիկը, որը «ծակեալ ղլեառն ջուր հանե և ընդ յատակաւ երկրի բերէ» («Ջամբռ», էջ 200) ու նահապետ կաթողիկոս Ուռհայեցին, որը տաճկի գործը շարունակելով, «ծակեաց ղլեառն ձորակին, ուր ընթանայ գետն Հրազդան և ջաղխելով զվէմս բանալով զիւորափոր առուս մեծաւ աշխատութեամբ և անհամար դրամածախսութեամբ եբեր ջուր ի դեմտոյն Հրազդանի, ի գեղս մեր (Վաղարշապատ) ի յօգուտ այգեստանացն» («Ջամբռ», էջ 26 ու 201)։ Հայ պատմագիրներն էլ հայտնում են նույնը նաև Ներսես Շինողի համար, թե «ած ջուր և եբեր ղգետոյն և արկ ի գործ զամենայն վայրսն առապար, տնկեաց այգիս և ծառաստանս»[20], կամ թե «ածեալ ջուր ի Քասաղ գետոյ՝ զամենայն աւազախիտ առապար դաշտավայրն ի գործ արկանէր, տնկէր այգիս և բուրաստանս Դաշկոցաց»[21]։ Հայտնի է, որ մեր օրերում էլ, Խաչիկ մարդապետը օգտվելով հին ջրանցքի հունից (հունից— Թ. Ա.) Քասաղի Շահարխ առվով, ջուր է տարել դեպի ավերակները և շուրջ բոլոր տնկել է այգի և ծառեր»[22]։

Այս իրողությունները, որոնցից իմանում ենք, թե միևնույն վայրը ոռոգելու համար երեք անգամ փորձեր են կատարվել,— առաջինը մ. թ. ա. է դարում, երկրորդը՝ մ. թ. է դարում և երրորդը Ր դարի սկզբներին, շատ հետաքրքրական փաստեր են Հայաստանի ոռոգման պատմության համար։

Առապարի հնագիտական միջավայրի ու նրա հետ շաղկապվող ոռոգման պատմությունը մեզ հնարավորություն է տալիս նորանոր հիմունքներ մատնանշելու այն մասին, թե ինչու Զվարթնոցը շինվել է հատկապես Առապարում։

Յ) ԱՌԱՊԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ներսեսին ժամանակակից պատմիչը՝ Սեբեոսը մի քիչ այլ ձևով է նկարագրում Առապարում կատարված շինարարությունը, բան մեզ պատկերացնում են։ Տպավորությունն այն է, որ իբրև թե Ներսեսը Վաղարշապատի եկեղեցիներին ի հակադրություն ծրագրել և շինել է Զվարթնոցը և սրա կողքին էլ իր բնակարանը—կաթողիկոսարանը։ Հերակլի պատմության հեղինակը միանգամայն հակառակն է ասում.

«Յայնմ ժամանակի արկ ի միտս իւր կաթուղիկոսն Հայոց Ներսէս շինել իւր բնակութիւն մեծ առ սուրբ եկեղեցեացն, որ ի Վաղարշապատ քաղաքի... Շինեաց անդ և եկեղեցի մի յանուն երկնաւոր Զուարթնոցն»[23]։

Ներսեսի ժամանակ կաթողիկոսարանը Դվին ոստանում էր. այնտեղից Վաղարշապատի եկեղեցիները դնալ-գալը կարճ միջոցի բան չէր. կաթողիկոսն ուզում էր մեծ լինել հիշյալ ուխտավայրերին, և այս պատճառով կամենում է բնակարան ունենալ մոտիկ։ Էջմիածնի վանքը, որ այդ տարիներում աթոռանիստ չէր, կարող էր բնակարանային հարմարություններ չունենալ կաթողիկոսի և շքախմբի համար։ Այստեղից էլ առաջ է գալիս առապարում բնակություն շինելու մտադրությունը։ Մի անգամ, որ կառուցվե՛լ էր կաթողիկոսի «բնակարանը», արդեն չկար և նպատակահարմար կարող էր համարվել շինելու «անդ և եկեղեցի մի»։ Գլխավոր վանքը կառուցված էր Միածնի անունով՝ մյուս-

[18] Մեսրոպ վարդապետ, «Էջմիածին և հայոց հնադույն եկեղեցիները», Վաղարշապատ, էջ 40—43, «Ազգագրական հանդես», 1907 թ., գիրք XV, էջ 124—125։

[19] Ալիշան, «Այրարատ», Վենետիկ, 1890 թ., էջ 245։

[20] Սեբէոս, Բ լդ, էջ 192։

[21] Դրասխանակերտցի, էջ 88։

[22] «Ազգագրական հանդես», 1907 թ., գիրք XV, էջ 116։ Հմմտ. Ծուղուրյան, «Խորենացին Խորենացուն», Բ, էջ 84—85, և Ծուղուրյան, «Գրախոսություն», էջ 32։

[23] Սեբէոս, Բ լդ, էջ 192։

ները՝ կույսերի։ Ի՞նչ նշանավոր գործող անձինք կամ անձ էր մնացել առանց իր անձինք կամ անձ էր մնացել առանց իր եկեղեցին ունենալու Հայկական քրիստոնեության այդ ծննդավայրում։— «Բազմութիւն երկնաւոր զօրացն, զուարթնոցն, որոց երևեալ [էին] ի տեսչեան Սրբոյն Գրիգորիս։ (Միշտանկայ ասենք՝ Սեբեոսի այս վկայությունը մի հաստատ ապացույց է, որ տեսիլքի այն նկարագրությունը, որ գտնում ենք Ագաթանգեղոսի այժմյան բնագրում, ընդհանուր գծերով արդեն կար է դարում)։ Իսկ երբ որոշվում է շինել եկեղեցի, ապա այն կարող էր կառուցվել «բարձր շինուածովք և շքնաղ զարմանալեօք, արժանի աստուածային պատուոյն, որում նուիրեացեն։ Մի խոսքով՝ էջմիածինը նվաստացնելու կամ Հակա-էջմիածին շինելու միտումը, որ վերագրվում է Ներսեսին, հիմք չի կարող գտնել Սեբեոսի տողերում։ Ընդհակառակն, էջմիածնասիրության ծնունդ է Զվարթնոցը։ Հասկանալի է, թե միանգամայն այլ հարց է, թե այս էջմիածնասիրությունը հայափա՞ռ թե հունափառ բնույթ ուներ կամ ունեցավ։

Բայց ինչո՞ւ անպայման Առապարն ընտրվեց Կաթողիկոսարան և հետո էլ՝ Զվարթնոցը շինելու համար։

Չի կարելի ժխտել, որ այս հարցում դեր է խաղացել այն ավանդությունը, թե այստեղ, «ի վերայ ճանապարհին... ասեն ընդ առաջ եղև Թագաւոր Տրդատ Սրբոյն Գրիգորիս»[24]։ Շատ կարելի է, որ այս կետում Ներսեսը հետևել է շատ տեղ կիրառվող այն սովորության, երբ մեծամեծները հարմար բնակարաններ են շինում խոշոր կենտրոններից քիչ հեռու վայրերում, որտեղ որոշ մենության հով է փչում։ Սակայն կան հանգամանքներ էլ, որոնք պակաս վճռական նշանակություն չունեն։ Մեր կարծիքով. սրանցից նշելի են հետևյալ չորսը.

1) Զվարթնոցի շուրջը եղած շենքերն ու այգիները շրջապատված են եղել «բարձր պարսպաւ»[25] և ամբողջ շենքը նման է եղել մի բերդի. այս են ապացուցանում Դրասխանակերացու խոսքերը, թե «շուրջանակի պատուար պարսպաւ փակեալ ամրացուցանէր»[26]։ Ժամանակի վտանգալից պայմաններում այսպիսի մի կերաված ի համար անհրաժեշտ էր ռազմագիտական տեսակետից քիչ թե շատ բնական հարմարություններ ունեցող վայր։ Լեռնոտ տեղերի համեմատությամբ Զվարթնոցի Առապարը մի խղճալի բան է այս կողմից։ Բայց անպաշտպան տափարակի համեմատությամբ նրա դիրքն առավել է, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ է դարում, այն էլ Զվարթնոցը շինելուց առաջ, այն տեղն անկասկած ավելի քարքարոտ է եղել՝ հանդիսանալով առապար, բառի իսկական առումով։

2) Ներսեսն այնտեղ շինել է բնակարան իր ու շքախմբի, այլև անշուշտ իրենց ու եկեղեցու սպասավորների համար. մինչև այժմ երևան են հանված 30-ից ավելի դաշլիճներ և սենյակներ[27]։ Կից կառուցված է եղել վիթխարի եկեղեցի։ Ասացինք նաև, որ Զվարթնոցն ունեցել է հաստաբետ պարիսպներ, ինչպես մի ամրություն։ Այս բոլորը շինելու համար խիստ մեծ քանակությամբ քարանյութ է հարկավոր։ Վաղարշապատի մոտ վայրերում Առապարն է այն միակ տեղը, որ կարող էր հեշտությամբ մատակարարել պահանջվող քարանյութը։ Առապարն ավելի կարող էր ուշադրություն հրավիրել իր կողմը, եթե Ներսեսի ժամանակ որոշ չափով կանգուն կամ նկատելի էին Առապարի հին բերդաքաղաքի պարիսպներն ու այլ ավերակներ։

3) Ոչ միայն առապարում ապրելու, այլև այնտեղ շենք շինելու համար անհրաժեշտ էր, որ ջուր հասցվեր այն բլուրները։ Հայտնի է, և տեսանք, որ Խաչիկ վարդապետը ջուր է տարել Զվարթնոց «հին ջրանցքի հունն», ողողագործելով։ Շատ կարելի է, որ Ներսես Շինողի ժամանակ նույնպես նկատելի էր ավելի հին ջրանցքի հունը, այն ջրանցքի, որանց էր կացրել Արգիշտիի որդի Սարդուրը, և Ներսեսն էլ իր հերթին օգտագործել էր այն։ Եթե այդպես չլիներ էլ, հին ժամանակվա ջրային ճարտարապետների համար դժվար չէր գտնել, որ հենց Առապարն է այն տեղը, որ կարող է ուղղվել Քասադի (Իլդարունի—Իլիարդ-ունի—Եղիարդ—Եղիվարդ?) ջրով։

4) Վերջապես, կաթողիկոսարանն իշխանական Դվին ոստանումն էր։ Զվարթնոցում ապրողն ստիպված էր հաճախակի գնալ ու գալ և կամ հարաբերություններ ունենալ Դվինի հետ։ Առապարի առավելությունն նաև այն էր, որ այս վայրն ավելի մոտ էր Դվինին, գտնվում էր հենց պոդստայի վրա։ Շատ հավանական է, որ ինչպես այժմ, այնպես և է դարում Առապարով էր անցնում նաև այն ճանապարհը, որ Վաղարշապատից տանում էր Երևան[28]։

Սրանք են այն առարկայական իրողությունները, որոնց պատճառով Առապարն է ընտրվել իբրև Ներսես Գ-ի շինարարության վայր։

24 Սեբեոս, Ի, էջ 132։

25 Նույն տեղում։

26 Դրասխանակերտցի, էջ 88։

27 «Տեղեկագիր», Բ, էջ 204։

28 Հմմտ. «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901 թ., էջ 151։

(Շարունակելի)



Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻՆ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԱՇԻՐՋԱՆԸ*

ՇՆՈՐՀԱԼՈՒՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ

Շարականների հեղինակների մեջ Շնորհալին ամենաարժեքավոր դեմքն է. նրա օրով է, որ մեր շարականներն հասել են զարգացման ամենաարժեքավոր աստիճանին։ Նա բարձր արվեստով գրել է բազմատեսակ շարականներ և գեղեցիկ տաղեր, որոնցով զարդարել է մեր շարականների գանձարանը՝ շարակնոցն ու ժամագիրքը։ Մեծ է Ներսես Շնորհալու գրական վաստակը մեր հին մատենագրության մեջ։ Այդ վաստակի մեջ առանձնահատուկ տեղ են գրավում նրա գրած շարականները։ Սակայն դժբախտաբար Շնորհալու շարականները չեն ուսումնասիրվել ինչպես հարկն է։

Որպեսզի պարզ ու տեսանելի լինի Շնորհալու պատկերը որպես մեծ բանաստեղծի և մատենագրի, անհրաժեշտ է, որ ոչ միայն ուսումնասիրվեն նրան պատկանող շարականները, այլև հրատարակվեն, որպես մեր միջնադարի բանաստեղծության ընտիր բարձր արվեստով գրված գործեր։

Շնորհալու գրած շարականների մասին մեր պատմիչներից առաջինը խոսում է Կիրակոս Գանձակեցին։

Գանձակեցին Շնորհալու դիտության, իմաստության և տաղանդի մասին խոսելիս հայտնում է, թե ինչպիսի շարականներ է գրել նա, «Եվ զի էր նա այր բանաւոր, բազում ինչ կարգեաց յեկեղեցի քաղցր եղանակաւ խոսրովեան ոճով շարականս և մեղեդիս և տաղս ոտանաւորս, քանզի նորա է Յարութեան Օրհնութիւն երրորդ կողմն. և Աստուածածնին Փոխման երկուց աւուրցն. և Պետրոսի և Պօղոսի Օրհնութիւն և Մանկունքն և Համբարձին, որոյ սկիզբն է այս. «Ցնծա այսօր եկեղեցի», և Որդւոյն Որոտման Օրհնութիւն՝ «Որ էն էութեան Որդի», և շարական մի Անաւնի, և երկու Թէոդոսի և մի Քառասնիցն, և մի Հուաքեղոցն, և Հաւաղ Շարթին երից աւուրց Օրհնութիւն—երկուշաբթին, երեքշաբթին, չորեքշաբթին և երկու շարական Յարութեան Ճաշու և Նիկոէացւոցն. և Հրեշտակապետացն և Արբոց Վարպանանց և այլ բազում շարականս»[16]։

Թեև Գանձակեցին մանրամասն գրում է Շնորհալուն պատկանող շարականների մասին, բայց մեջբերումի վերջին բառերից երևում է, որ պատմաբանը Շնորհալու գրած բոլոր շարականների անունը չէ որ տալիս է։ Ըստ Գանձակեցու՝ Շնորհալին վերևում հիշված շարականներից բացի գրել է նաև «այլ բազում շարականս»։ Նշանակում է՝ Գանձակեցու հաղորդածը Շնորհալու շարականների մասին լրիվ չէ, որովհետև շատ շարականների անուն չի հիշված։

Երկրորդ կարևոր աղբյուրը Ներսես Շնորհալու գրած շարականների մասին 1833 թվականին Էջմիածնում լույս տեսած «Զանգաղ շարականս»-ի առաջաբանն է։ Այստեղ խոսվում է մեր շարականների բոլոր հեղինակների, որոնց թվում նաև Շնորհալու մասին։ Ահա այդ առաջաբանի այն մասը, ուր խոսվում է Շնորհալու գրած շարականների

* Տարունակված ամսագրի 1957 թվականի N 8-ից։

16 Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», էջ 109—110։

մասին. «Սուրբն Ներսէս Շնորհալի՝ զվան ձայնն Ասագ Օրհնութեան, զԵՓԹԱՍԱՆԻՑՆ. զՆինուէացւոցն, զԱզուհացից ամենայն կիրակէիցն, զՄաղկազարդի Հարցն, զՀոգեգալ գալստեան չորս պատկերսն. զՎարդավառի դեռկու պատկերսն. և զՓոխման երկու պատկերսն. զԹՕՀԱՆՆՈՒ ԴՁ Հարցն. զՄարգարէից ԴՁ Հարցն. զՀրեշտակապետացն զՆորահրաշն Վարդանանց, զՂևոնդեանցն, ի զԱյսօր անճառն, զՆորոգողն. զԱստուածանեղն. զԱրարչականն. զԱրևագալի շարականսն. զՕրհնեմք զքեզն. զՆայեաց սիրովն զի քէն հայցեմք. և ըստ ոմանց Ա. Յակոբայն ևս սորա է ասացեալ»[17]։

Շարականի այս առաջաբանում էլ չեն հիշվում Շնորհալուն պատկանող հայտնի շարական-երգեր, որոնք կան ժամակարգության և հետևապես ժամագրքի մեջ. դրանցից են, օրինակ՝ «Նորաստեղծեալ»-ը, «Առաւօտ լուսոյ»-ն, «Աշխարհ ամենայն»-ը, «Ցիշեսցուք» և «Զարթիք» հայտնի գիշերային երգերը, «Նորոգող տիեզերաց»-ը և այլն։ Ուրեմն շարականի առաջաբանում էլ Շնորհալու գրած բոլոր շարականները չեն հիշված, հետևաբար այս աղբյուրն էլ լրիվ չէ։ Օգտվելով այս երկու հիմնական աղբյուրներից, նաև հիշատակարաններից, ձեռագրերից և այլ տվյալներից, իր «Շնորհալի և պարագայ իւր» հայտնի գրքում Հ. Գ. Ալիշանը այդ շարականների մասին տալիս է հետևյալ տեղեկությունները. «Ժամասացութեան կամ պարզ ևս ըսելով ժամագրոց մէջ Շնորհալին նոր մասեր կամ աղօթքներ չաւելցուց. այլ միայն նոր երգեր մտցուց... Այդ իր գրածները կամ իր շարադրածներն են՝ նախ՝ «Ցիշեսցուք և Զարթիք»... ապա Առաւօտ լուսոյ, «Աշխարհ ամենայն», «Նորաստեղծեալ»... արարչական երգը։ Արևագալից ժամուն մէջ քանի մը արձակ երգեր աւելցուց, հիմ ձաշու ժամուն ծանոթ է «Օրհնեմք զքեզ» երգը, «Այսօր անճառ»-ը, «Նայեաց սիրով»-ը, «Ի քէն հայցեմք»-ը... հոս,— շարունակում է Ալիշանը,— կուզեմք յանուանէ ալ յիշել իր շարական ըսածները... որչափ որ յայտնի են, կամ կը կարծուին և են՝ 1. 2. Երկու Ասագ օրհնից սրբոց շարականքն մեծ մասամբ, այսինքն՝ Պետրոսի և Պօղոսի, Յովհաննու և Յակոբայ. 3. Առաքելոց շարականին մասն. 4. Եսթանասանիցն՝ «Ի մասուցութիւն երկնային». 5. Թէոդոսի շարականին մասն. 6. Ս. Անտոնի մասն. 7. Քառասուն մանկանց մասն. 8. Մեծ պահոց կիրակէից կանոնքն. 9. Նինուէացւոցն. 10. 11. 12. Ասագ երկուշաբթի, երեքշաբթի և չորեքշաբթի կանոնքն. 13. Ասագ Ուրբաթու «Այսօր ի կատարումն». 14 Յարութեան երկու ձաշու շարական. 15. Ըստ ոմանց և օրհնութիւն վան ձայնի Յարութեան 16. Հոգեգալստեան Բ օրվա կանոնն»[18]։ Այսպիսով՝ գոյություն ունեցող հիմնական աղբյուրների համաձայն[19], Շնորհալուն վերագրվում են անվիճելի կերպով հետևյալ շարականներն ու երգերը.

1. Ազուհացից կիրակի օրերի (Մեծ պահոց կիրակիների) շարականները.
2. Մաղկազարդի հարցը.
3. Ս. Աստվածածնի Վերափոխման երկու պատկերը.
4. Վարդավառի երկու պատկերը.
5. Սրբոց Վարդանանց և Ղևոնդյանց շարականները.
6. Հրեշտակապետաց կանոնը.
7. Անտոն անապատականի շարականը.
8. Թեոդոսի կամ Սրբոց Թագավորաց շարականները.
9. Հայրապետաց կանոնը.
10. Ս. Հակոբ Մծբնացու շարականը.
11. Ս. Հովհաննես Մկրտչի ծննդյան կանոնը.
12. «Արծաթախիրութեամբն մուխալ» շարականը.
13. Ավագ շաբաթի երեք օրերի շարականները (բշ., գշ., դշ.).
14. «Այսօր անճառ»-ը.
15. «Նորոգող տիեզերաց»-ը.
16. Հովհան մարգարեի շարականը.
17. Ս. Սարգսի շարականը.
18. Հոգեգալստյան երկու պատկերը.
19. «Արարչական»-ը.
20. «Նորաստեղծեալ»-ը.
21. «Նայեաց սիրով»-ը.
22. «Ի քէն հայցեմք»-ը.
23. «Աստուած անեղ»-ը.
24. «Արարիչ և մարդասէր»-ը.
25. «Առաւօտ լուսոյ»-ն.
26. «Աշխարհ ամենայն»-ը.
27. «Ցիշեսցուք»-ը.
28. «Զարթիք»-ը.
29. Արևագալից երգերը.
30. Ավագ օրհնության վան ձայնը (Հարության).
31. Քառասուն մանկանց շարականը.
32. Պետրոսի և Պողոսի շարականը.
33. «Որդւոցն Որոտման» շարականը.
34. «Նահապետին Աբրահամու» փոքրիկ երգը։

17 «Ցանկագր Շարական», էջմիածին, էջ 3։

18 Հ. Գ. Ալիշան, «Շնորհալի և պարագայ իւր», էջ 444—445։

19 Հ. Գ. Ավետիսյան, «Թացատրութիւն շարականացս»։

Այս շարականների մասին որոշ լրացուցիչ տեղեկություն են տալիս նաև Հ. Գ. Ավետիքյանը «Բացատրութիւն շարականաց» և Ս. Վ. Ամատունին իր «Հին ու նոր պարականոն շարականները» արժեքավոր ուսումնասիրությունների մեջ։

Այժմ փորձենք ծանոթանալ Շնորհալու շարականների բովանդակության ու ձևի գաղափարական ու գեղարվեստական արժեքներին։

Շնորհալու շարականներից քանակով ամենաշատը Մեծ պահոց հինգ կիրակիների կանոններն են. որոնք կոչվում են՝ երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ կիրակիների աղուհացից։ Այս կանոններից ամեն մեկը բաղկացած է «Օրհնութիւն»-ից, «Հարց»-ից, «Մեծացուցէ»-ից, «Ողորմեա»-ից և «Տէր յերկնից»-ից։

Երկրորդ կիրակիի աղուհացից Օրհնությունն է՝ «Որ զօրէնս սրբութեան պահոց»-ը, որն ունի ԴՁ (չորրորդ) ձայն. Հարցն ունի ԱԿ (Առաջին կողմ) ձայն և սկսվում է «Որ յառաջ քան զլաւիտեանս» բառերով։ Մեծացուցեն՝ «Որ զկեանսն անմահարար»։ Ողորմյան՝ «Որ առաքեցար ի հայրական ծոցոյ», «Տէր յերկնից»-ը՝ «Որ անմարմնոց հոգեղինացու։ Ուրեմն Շնորհալու գրած այս կանոններից ամեն մեկը բաղկացած է վերևում հիշված հինգ տեսակ շարականներից, որոնց մեջ էականը, որոշիչը հանդիսանում է Օրհնությունը, իսկ մնացածները այս կամ այն կերպ լրացնում կամ խորացնում են օրհնության երգած գաղափարներն ու իմաստը։

Երկրորդ կիրակիի վերոհիշյալ Օրհնության մեջ բանաստեղծը գեղարվեստորեն մշակում է Փրկչի Լեռան քարոզը. որի հիմնական իմաստը պահեցողությունն է։ Այստեղ խոսվում է նաև օրինապահության և հնազանդության մասին։ Օրհնության մեջ բանաստեղծորեն ցույց է տրվում նախահոր՝ Ադամի գործած սխալն ու օրինազանցությունը դրախտում, երբ նա զանց առնելով օրենքը, ճաշակեց դառնությունը և դատապարտվեց տանջանքների ու մահվան։ Սակայն քրիստոնյա բանաստեղծը գտնում է, որ չպետք է հուսահատվել, այլ պետք է զղջալ, ապաշխարել։

Հետևյալ երեք կիրակիների Օրհնության շարականների բովանդակությունը բնորոշ է նրանով, որ նյութը վերցված է իրական կյանքից, առակներից, իսկ առակները՝ Ավետարանից։ Երրորդ կիրակիի Օրհնության մեջ Շնորհալին գեղարվեստորեն վերարտադրում է Ավետարանից Անառակ որդու հանրածանոթ առակը։ Այստեղ նա գեղեցիկ համեմատությամբ մեղավոր մարդկությանը նմանեցրել է անառակ որդուն։ Օրհնության 7-րդ տունն ասում է.

«Ընդ անառակին որդւոյ դոչեմք առ Հայրդ գթած.
Մեղաք յերկինս և առաջի քո, քաւիչ յանցանաց.
Եկ ընդ առաջ սիրով, գրկեա համբուրիւ և այլն»։

Անառակ որդին զղջում և վերադառնում է իր հայրական տունը, դարձի գալիս և ներում խնդրում։ Այսպես էլ մարդը Ադամի մեղանչելու հետևանքով նման է անառակ որդու, որ պետք է դարձի գա, զղջա։ Բարեգութ Արարիչը, ինչպես անառակ որդու հայրը, սիրով պիտի ընդառաջ գա, գրկի, համբուրի և մաքրի մեղքերից մոլորված մարդկությանը։

Եթե այս Օրհության սկզբի մասում համեմատվում են անառակ որդին ու մարդկությունը մի կողմից և ներող հայրն ու բարեգութ Արարիչը մյուս կողմից, ապա Օրհության հետևյալ հատվածում համեմատվում են որպես հակադրություն՝ աղքատ Ղազարոսն ու մեծատունը, հարուստը։ Հեղինակը, այստեղ ևս վարպետորեն օգտագործել է Ավետարանի առակը։ Այստեղ մարդկությունը նմանեցված է աղքատ Ղազարոսին, որը կամավոր աղքատությամբ և ժուժկալությամբ արժանանում է երկնի արքայությանը.

«Շնորհեա մեզ տէր ընդ աղքատաց
Օրինակին Ղազարու ժուժկալութիւն.
Զի կամաւոր աղքատութեամբ
արքայութեանդ
Երանիոց ընդ նմին լիցուք արժանի...»[21]։

Իր մաքուր վարքով ու աղքատ դրությամբ Ղազարոսն արժանանում է անմահության հացին, տեղ է գտնում դրախտում՝ Հայր Աբրահամի գոգում.

«Որ փոխանակ հացին կարօտութեան
Զհացն անմահութեան նմա շնորհեցեր.
Եւ ընդ մեծատանն տնքութեան
Ի գոգն Աբրահամու դնա ընկալար...»[22]։

Ապա Ղազարոսը հակադրվում է մեծատունը, որն ագահ է, անգութ է մեղապարտ և դրա համար էլ այրվում, հենճերվում է դժոխքի հնոցի բոցերում.

«Խնայեաւորեա զաչս սրտից
Ստանալ մեզ ողորմութեամբ
Ի քէն Տէր զօրութիւն
Զի մի ընդ մեծատանն հայցեսցուք
Ի բոց հնոցին ծագիւ մատին ջուր ի
գովացումն...»[23]։

---

26 «Գանձարան շարական», էջ 137։

21 Նույն տեղում։

22 Նույն տեղում։

23 Նույն տեղում։

Չորրորդ կիրակի օրվա Օրհնության մեջ Շնորհալին վարպետորեն տվել է տնտեսի առակի օրինակը՝ դարձյալ զգաստություն, ապաշխարելու զղացումը հավատացյալների մեջ ուժեղացնելու, ամրապնդելու նպատակով։ Այս Օրհնության մեջ տնտեսի առակի հիման վրա այլաբանորեն տրվում է չորս հաստատություն, տնտեսություն կամ պարզ ասած՝ ընտանիք։ Առաջինը վերին աշխարհն է, ուր հաստատված են որպես տնտեսներ հրեշտակապետները, քերովբեներն ու վեցթևյան սերովբեները։ Դա մի անհասանելի զորություն է, իմանալի աշխարհ։

Օրհնության երկրորդ տան մեջ այդ վերին, անհասանելի տնտեսության կողքին դնում է զգալի աշխարհը, Աղենի դրախտը, որտեղ Տերը որպես տնտես դրեց առաջին մարդուն՝ Ադամին։

«Որ տիրապէս մեծատունդ
Ստեղծեր երկրորդ աշխարհ զգալի
Եւ ի դրախտն որ յԱդենի
Տնտես եդեալ զմարդն առաջին...»[24],

Երրորդ հաստատությունը՝ «տնտես զքարոզրանին ճշմարտութեան», համարվում է եկեղեցին և այդ ճշմարտության խոսքը պետք է քարոզեն եկեղեցու առաջնորդները՝ վարդապետներն ու հայրապետները։

Երդի վերջում չորրորդ տնտեսությունը համարվում է մարդկությունը, մարդկային բնությունը՝ հատկապես նրա միտքն ու իմաստությունը։

Մեծ պահոց հինգերորդ կիրակի օրվա Օրհնության հիմնական միտքը Դատավորի առակն է։ Շարականի երկրորդ հատվածի երեք տներն էլ դատավորի, արդարադատության և իրավունքի մասին են խոսում։

Առաջին տան մեջ օրհներգն ասում է, որ արդար դատավորը մեր մտքում էլ է հաստատել արդարության գաղափարը, որ մենք կարողանանք արդարադատ լինել մեր հոգու և մարմնի նկատմամբ և այդ ինքնադատաստանը կատարենք ըստ Քրիստոսի արդար օրինքների.

«Դատել զհոգի և զմարմին
Արդարապէս դատմամբ
Ըստ օրինաց քոց Քրիստոս...»[25],

Բայց և այնպես մարդկային բնությանը հատուկ է և անիրավությունը։ Անիրավ դատավորը ոչ Տիրոջից է վախենում և ոչ էլ մարդկանցից է ամաչում, ուստի կորցնելով ամոթն ու խիղճը՝ չի կարող արդարադատ լինել և չի պաշտպանում զրկվածների՝ որբի, ծերերի ու այրիների դատը.

«Իսկ անիրաւ դատաւորին.
Որ ի քաղաք բնութեան մերոյ.
Ոչ ունելով զերկիւղ քո սուրբ՝
Եւ անպատկառ ի մարդկանէ
Ոչ առնելով դատ զրկելոյն»[26],

Որպեսզի չնմանվի անարդար, անիրավ դատավորի, որպեսզի մարդը կարողանա՝ ինչպես հարկն է վարվել իր ոսոխի հետ, արդարադատ լինել, ուստի նա դիմում է «անմահ սուրբ փեսային».

«... Ոսո զիրաւունս քո իմում դատաւորիս
Առնել ինձ դատաստան արդար ընդ ոսոխի մարմնոյ իմոյ»[27],

Վերջին կանոնի մեջ ընդհանրապես փառաբանվում է Քրիստոսի մարդեղությունը՝ մարդուն Ադամի մեղքերից ազատելու համար։ Քրիստոսի աշխարհ գալը դեռ շատ վաղուց գուշակել են մարգարեները։ կատարվեց այդ գուշակությունը. եկավ նա աշխարհ, խաչվեց, թաղվեց և երեք որ հետո հարություն առավ և համբարձավ երկինքը։ Զնայած ահեղ է նրա երկրորդ գալուստը, բայց նա դիտառատ է ու ներող. բանաստեղծը ցնծում է ինչպես անտառի ծառերը՝ ըստ Դավթի սաղմոսի 96 գլխի, ուր ասված է.

«Յայնժամ ցնծասցեն ամենայն ծառք անտառի՝
Յերեսաց Տեառն զի գայ, և գայ նա ի դատել զերկիր»[28],

Որ պիտի գա Փրկիչը, կատարվի մարգարեների խոսքը և այդ Դատի արյամբ փրկվելու է մարդկությունը.

«Ըստ աւետեաց մարգարէին՝
Որ առ փրկեալս արեամբ դատինդ՝
Ցնծամք և մեք ծառք անտառի՝
Ընդ գալուստ Տեառնդ կրկնակի.
Շնորհեա մեզ Տէր ընդ արդարոցն՝
Ընդ առ ի քէն տնկեալ ծառոցն,
Այժմ յուսով զուարճանալ՝
Եւ յերկրորդին ընդ քեզ ցնծալ»[29],

Վերցնելով Դավթի Սաղմոսից վերոհիշյալ համեմատությունը՝ մարդն ու անտառի ծառը, Շնորհալին վարպետորեն այն զարգացրել, ընդլայնել և յուրատիպ է դարձրել։ Եթե Դավիթը ուղղակի անտառի ծառերի մասին է խոսում, ապա Շնորհալին մարդկությանը նմանեցնում է անտառի սովորական ծառերի, որոնք անգամ պիտի ցնծան Քրիստոսի դատաստան գալու պահին. իսկ արդարներին համարում է Տիրոջ կողմից տնկված ծառեր։ Ապա խնդրում է Տիրոջը, որ իրենք՝ սովորական ծառերն էլ խառնվեն արդարնե-

24 «Զայնքաղ շարական», էջ 182։

25 Նույն տեղում, էջ 187։

26 «Զայնքաղ շարական», էջ 187։

27 Նույն տեղում։

28 Սաղմոս 96, 12։

29 «Զայնքաղ շարական», էջ 183։

ոբ՝ հատուկ տնկված ծառերի հետ միասին և ուրախանան։

Ազուհացից կանոնների մեջ իրենց գեղեցկությամբ ու ոիրիկականությամբ աչքի են ընկնում Մեծացուցչեներից մի քանիսը՝ պայծառ ու բնական պատկերներով։ Այս պատկերները Շնորհալին վերցնում է արևից, լուսից, ծառից ու ծաղկից, բնությունից ու տիեզերքից։ Աստվածածինը երգվում է որպես՝

«Երկիր բանաւոր արեգական օթարան...»[30],
«Աստուածատունկ խնկաբեր ծառ,
Յանուշահոտ բուրաստանէն»[31],

Առանձնապես գեղեցիկ է վեցերորդ կիրակի օրվա Մեծացուցչ շարականը։ Այս փառաբանության մեջ Աստուածածինն ավելի պայծառ է քան երկինքը։ Այդ լուսի առջև է, որ հալածվում է անգիտության խավարը։ Աստվածածինը մի թեթև ու լուսավոր ամպ է, որի երկնային ծովից կենարար անձրև է ցած թափվում ծարավ երկրի վրա.

«Ամպ թեթև և լուսաւոր,
Որ զանձրևն կենաց ի քեզ հեղեալ՝
Ի յերկնային ծովէն՝
Զոր հոսեցեր ի յերկիր ծարաւուս...»[32],

Այս երգի վերջին տան մեջ էլ Մարիամը աստվածատունկ մի փակ պարտեզ է, մի եղեմ, ուր կենաց ծառը դրախտի ու Կույսի հոգու մեջ է աճել և լցրել տիեզերքն իր անմահական պտղով.

«Պարտէզ փակեալ աստուածատունկ Եդեմ,
Որ և ծառն կենաց ի մէջ դրախտի
Քո ի Հոգւոյն անկեալ.
Անմահական պտղովն ելից զտիեզերս...»[33],

Եվ դրա համար էլ երգի ամեն տան վերջում բանաստեղծը բացականչում է.

«Սրովբէական ձայնի դքեզ բարեբանեմք
Եւ հոգևոր երգով մեծացուցանեմք»[34],

Ազուհացից շարականներն ընդհանրապես վիպական, պատմողական բնույթ են կրում, սակայն մերթ ընդ մերթ հատկապես Մեծացուցչներում և մասամբ «Տէր յերկնից»-ների մեջ կան բուռն հուզական տարրեր։

Այս կանոնների շարականների բովանդակությունն ու նյութը մեծ մասամբ բանաստեղծը վերցրել է Հին ու Նոր Կտակարաններից և պատմողաբար ստեղծագործելն օգտագործել է հավուր պատշաճի։ Առհասարակ այս շարականները մտքով հարուստ են ու պարզ, մանավանդ Անառակ որդու, Դատավորի, Տնտեսի առակները, որոնք ըստ էության արտացոլում են իրական կյանքը, բայց բանաստեղծն օգտագործել է այդ առակները այլաբանաբար ևս։

Ծաղկազարդի Դկ փոքրիկ, բայց բովանդակությամբ հարուստ մեջ Շնորհալին ներբողում է Փրկչին, նրա մարդասիրությունն ու խոնարհությունը. Հիսուսը, որ միշտ Հոր հետ երկնքում քերովբեական աթոռ է նստել, այսօր՝ Ծաղկազարդին, խոնարհությամբ ու համեստորեն նստել է ավանակի վրա և մտել Երուսաղեմ.

«Որ ի քերովբէական աթոռ ընդ Հօր նստէիր
Թանդ Աստուած,
Այսօր խոնարհութեամբ նստար մարմնով
Նոր յաւանակի.
Զքեզ բարեբանեմք Աստուած հարցն
մերոց»[35],

Այն Փրկիչը, որին սերովբեներն են միշտ սրբասաց ձայնով փառաբանել, այսօր էլ եբրայեցիների կողմից օրհնաբանվում է որպես որդի Դավթի.

«Որ ի սրովբէիցն սրբասաց ձայնիւ
անդադար օրհնաբանիս.
Այսօր ի դասուց եբրայեցւոց
Որդի Դաւթի փառաբանեցար...»[36],

Հարցի վերջին տան մեջ բանաստեղծը վերհիշում է, որ այսօր Փրկիչը Երուսաղեմի ծերերի և տղաների բերանով փառաբանվել է «Ովսաննա ի բարձունս» երգով։

Ծաղկազարդի կիրակի օրվա շարականի բառերով ասած՝

«Ծերք ոստովք ձիթենեօք
Եւ տղայք ոստովք արմաւենեօք
Եւ երամ երամ դասուքն ազաղակէին.
Ովսաննա, օրհնեալ եկեալ ի յանուն
Տեառն»[37],

Ծաղկազարդին նվիրված այս շարականից բացի Շնորհալին ունի նաև մի փոքրիկ, բայց գեղեցիկ տաղ «Ծաղկազարդին» վերնագրով։ Այստեղ ևս բանաստեղծը երգում է ավանակի վրա նստած՝ Քրիստոսի Երուսաղեմ մտնելը և նրա փառաբանվելը օվսաննաներով.

«Սիոնի ցնծան մանկունք՝ ելեալ ընդ առաջ,
Ի ծերոց ընծայ բանիւ, ի տղայոց
ձայնիւ...
Տիրական տոնիս այսօր եկայք
ցնծասցուք»[38],

---

30 «Գանձարան շարականաց», էջ 139։
31 Նույն տեղում, էջ 154։
32 Նույն տեղում։
33 Նույն տեղում։
34 Նույն տեղում։
35 «Գանձարան շարականաց», էջ 198։
36 Նույն տեղում։
37 Նույն տեղում, էջ 199։
38 «Գանձք շարակնոց», էջ 350։

(Շարունակելի)

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ